


Ա. Զապիթյան

ՍՈՎԵՏԱԿԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԲԱՆԱԿՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՒՄԻ ՄԱՐԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՒՄԻ ՄԱՐԿԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

А. М. НАЗИНЯН

АРМЯНСКОЕ СОВЕТСКОЕ
НАРОДНО-ПОЭТИЧЕСКОЕ
ТВОРЧЕСТВО

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.09

Ը-15

ՅԵՐԵՎԱՆ 1981 թ.

Ա. Մ. ՆԱԶԻՅԱՆ

Ս Ո Վ Ե Տ Ա Հ Ա Յ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

302/4

A $\frac{II}{31150}$



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի համագրական-նրատարակչական
խորհրդի որոշմամբ.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սովետական ժողովրդական բանահյուսությունը սոցիալիստական կուլտուրայի բնագավառներից մեկն է:

Սովետական գրականության ու արվեստի սլոգաններին ու հարցերին շարքում հետաքրքրություն և անհրաժեշտություն է ներկայացնում նաև ժողովրդական բանահյուսության հետազոտությունն ու ուսումնասիրությունը:

Երեսունից ավելի տարիների ընթացքում Սովետական Միության մեջ հրատարակվել են ժամանակակից ժողովրդական բանահյուսության նյութերի բազմաթիվ ժողովածուներ: ՍՍՌՄ ժողովուրդների բազմաժանր ու հարուստ բանահյուսության փայլուն ցուցադրումը հանդիսացավ 1937 թ. «Պրավդա»-ի հրատարակությամբ լույս տեսած «Творчество народов СССР» հանրահայտ ժողովածուն, որի նախաձեռնման ու իրականացման գործում խոշոր դեր կատարեց ժողովրդական բանահյուսության մեծ գնահատող ու խոր գիտակ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին: Այդ ժողովածուի մեջ տեղ են գտել ՍՍՌՄ 35 ազգերի և ժողովուրդների ժամանակակից բանահյուսության լավագույն նմուշները, որոնք ամբողջական ու հստակ պատկերացում են տալիս սովետական ժողովրդական բանահյուսության գաղափարական բովանդակության ու գեղարվեստական տոանձնահատկությունների մասին:

Ունենալով այսօրան հարուստ փաստական նյութ, այնուամենայնիվ, սովետական ֆոլկլորագիտությունը հիմնավորապես չի զբաղվել սովետական ժողովրդական բա-

նահյուսութեան պրորօքսիմներով: Այդ պատճառով էլ որոշա-
փիորեն չի պարզվել ժամանակակից ժողովրդական բանա-
հյուսութեան տեղն ու դերը սովետական կուլտուրայի մեջ:
Այս հարցերի անտեսումը բացասաբար է անգրագարձել ժո-
ղովրդական բանահյուսութեան նյութերի դրամման ու հա-
վաքման գործի վրա:

Նույնն է եղել դրությունը նաև մեզ մոտ՝ Հայաստա-
նում: Սովետահայ ժողովրդական բանահյուսութեան ուսում-
նասիրությունը սահմանափակվել է մի քանի հոգիածներով
ու ներածություններով, որոնց մեջ շոշափվել են առանձին
վերցրած թեմաներ ու խնդիրներ: Սովետահայ ժողովրդական
բանահյուսությունն ամբողջութեամբ մինչև այժմ չի պար-
ձել ուսումնասիրութեան առարկա:

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի
պատմական որոշումները իդեոլոգիական ֆրոնտի աշխա-
տանքների մասին նոր խնդիրներ դրին սովետական գրա-
կանագիտութեան ու ֆոլկլորագիտութեան առաջ: Առաջ-
նահերթ նշանակութուն ստացան անցյալի բանահյուսու-
թեան ժառանգութեան դնահատման, ինչպես և սովետական
ժողովրդական բանահյուսութեան ուսումնասիրման հար-
ցերը: Այդ ուղղութեամբ առաջին քայլն արեց ՄՍՌՄ Գի-
տությունների ակադեմիայի Ռուս գրականութեան ինստի-
տուտը (Պուշկինյան տունը), 1952 թ. լույս ընծայելով
«Սովետական շրջանի ողբական ժողովրդական ստեղծա-
գործութեան ակնարկները» («Очерки русского народно-
поэтического творчества Советской эпохи») սովարա-
ծավալ աշխատությունը¹:

¹ Տարրեր ժամանակներում լույս են տեսել մի շարք ժողո-
վածունքներ («Լենինը հայ ֆոլկլորի մեջ», 1936 թ., «Հայկական խորհրդ-
րային ֆոլկլորը», 1938 թ., «Հայ աշուղներն ու հորինողները Հայրե-
նական Մեծ Պատերազմի օրերին», 1943 թ., «Գուսանական և ժողովրդա-
կան երգեր», 1949 թ., և այլն):

² Այդ աշխատությունը ստեղծվել է հեղինակային կոլեկտիվի
աւժերով, խմբագրութեամբ Ա. Մ. Աստախովայի, Ի. Պ. Դմիտրակովի և
Ա. Ն. Լոգանովայի:

Հիշյալ աշխատութեան մեջ փորձ է կատարուում ընդհանուր դադարաւար տալ սովետական ժողովրդական բանահյուսութեան բնույթի մասին, վեր հանել սովետական շրջանի ռուսական ժողովրդական բանահյուսութեան առանձնահատկութիւնները և բնութագրել նրա անցած ուղին: Այդ աշխատանքը միաժամանակ սովետական ժողովրդական բանահյուսութեան պերիոդիզացիայի առաջին փորձն է: «Ակնարկներ» հրապարակումը, անշուշտ, կարեւոր քայլ էր և դնահատութեան արժանի: Բայց դրանով, այնուամենայնիւ, ըստ էութեան չլուծվեցին այն խնդիրներն ու հարցերը, որոնք առաջագրվում էին սովետական ժողովրդական բանահյուսութեան գիտական ուսումնասիրութեանը: «Ակնարկներ» առաջարանի մեջ ևս նշվում է այդ հանգամանքը. «Ներկայացվող գիրքը,—ասված է այնտեղ,—տպագրված ու անտիպ նյութերի սխառմատիղացիայի և սովետական ժողովրդական ստեղծագործութեան պատմութեան պերիոդիզացիայի մի փորձ է: Այստեղ խոսքը վերաբերում է սովետական ժողովրդական պոետական ստեղծագործութեան հիմնական թեմաներին ու կերպարներին... Այդ լայն պրորիմների սպառիչ լուսարանումը հանգիստնում է սովետական ֆոլկլորագետների կոլեկտիվի հետագայ խնդիրը»¹:

Գիտական ու գրական հասարակայնութեան հետաքրքրութիւնը սովետական ժողովրդական բանահյուսութեան նկատմամբ դրսևորվեց «Ակնարկներ» մասին սովետական մամուլում հանդես եկած բազմաթիւ գրախոսութիւններով ու հոգվածներով: Դրանց մեջ բացահայտվեցին «Ակնարկներում» տեղ գտած թերութիւններն ու սխալները: Գրախոսութիւններից ու հոգվածներից բացի, կադմակերպվեց նաև լայն դիսկուսիա, որին մասնակցեցին մի շարք ֆոլկլորագետներ ու գրականագետներ²:

¹ Очерки русского народно-поэтического творчества советской эпохи, изд. АН СССР, М.-Л. 1952, стр. 8.

² Դիսկուսիոն այգալիսի ելույթներ էին Վ. Ս. Բաբախինի «О некоторых проблемах фольклористики» հոգվածը (Советская этно-

Մեր այս աշխատանքը նպատակ ունի քննել սովետահայ ժողովրդական բանահյուսությունը իր ամբողջության մեջ, հաշվի առնելով նրա ձևավորման առանձնահատկությունները և զարգացման տարրերը և տալիս նրան:


Բուն նյութի՝ սովետահայ ժողովրդական բանահյուսության վերլուծությունը տարրերվում է «Ռուսական սովետական ժողովրդա-պոետական ստեղծագործություն ակնարկների» վերլուծության մեթոդից: «Ակնարկներում» դա կատարված է ըստ հասարակական կյանքի զարգացման էտապների ու իրադարձությունների: Սովետահայ ժողովրդական բանահյուսության նյութերը ամբողջությամբ չեն ընդգրկում և հավասարապես չեն արտացոլում հասարակական կյանքի բոլոր էտապները, այդ պատճառով էլ նպատակահարմար ենք գտել վերլուծությունը տանել ըստ սովետահայ ժողովրդական բանահյուսության զարգացման բովանդակության, հիմնական մոտիվների ու թեմաների: Թեմատիկ վերլուծությունը, սակայն, չի անտեսում ժամանակագրական զարգացումը և միաժամանակ հնարավորություն է ընձեռում ներքին, տրամաբանական կապով իրար շաղկապել ժողովրդական բանահյուսության բազմաթիվ թեմաներն ու մոտիվները:

графия», 1953, № 2) և Ն. Պ. Լեոնտևի «Волхование и шаманство» վերնագրով հոդվածը («Новый мир», 1953, № 8): Դրանց հետևեցին մի շարք այլ հոդվածներ. ակն «Советская этнография», 1953, № 3 (А. Нечаев, Н. Рыбакова: «О некоторых проблемах фольклористики», Э. Померанцева: «Некоторые вопросы изучения народного творчества современности»), 1954, № 1 («Обсуждение вопросов советского народно-поэтического творчества в Московском государственном университете»), 1954, № 2 (К. В. Чистов: «О некоторых проблемах фольклористики»), 1955, № 3 (В. И. Чичеров, «Вопросы изучения народного творчества»).

«Новый мир», 1954, № 8 (В. И. Чичеров: «Проблемы изучения советского поэтического творчества», А. Нечаев, Н. Рыбакова: «О пользе критики и о вреде нигилизма», Л. Першетская: «Фольклор советского времени», С. Василенок: «За передовую науку о народном поэтическом творчестве», «От редакции»).

Ժողովրդական ստեղծագործություն հասկացողությունը շատ լայն է ու բազմակողմանի. դրա մեջ են մտնում լայն մասսաների գեղարվեստական ստեղծագործության տարրեր բնագավառները՝ խոսքի, կիրառական արվեստի, երաժշտության և այլն: Տվյալ դեպքում մեզ զբաղեցնում է ժողովրդական ստեղծագործության խոսքի բնագավառը՝ բանահյուսության բնագավառը: Անհրաժեշտ է մատնանշել նաև մի այլ հանգամանք. բուն ժողովրդական ստեղծագործությունների հետ մեկտեղ, վերլուծության ընթացքում օգտագործել ենք նաև գուսանական որոշ ստեղծագործություններ, որովհետև վերջին շրջանի հայկական ժողովրդական բանահյուսության մեջ որոշակիորեն երևելում է հակում դեպի գուսանական գրականության տրագիցիաները: Ժողովրդական շատ երգիչների ստեղծագործության մեջ ներդաշնակվել է գուսանականը ժողովրդականին և՛ ձևով, և՛ բովանդակությամբ: Նույնը և նկատում ենք որոշ գուսանների ստեղծագործության մեջ: Ելնելով ժողովրդական և գուսանական ստեղծագործությունների ներքին ընդհանրություններից և միասնությունից՝ համապատասխան տեղերում օգտագործել ենք և՛ մեկը, և՛ մյուսը:

Բայց նախքան բուն նյութի վերլուծությանն անցնելը կարևոր է պարզել սովետական շրջանի ժողովրդական բանահյուսության բնույթն ու առանձնահատկությունները և դրա հետ կապված սովետահայ ժողովրդական բանահյուսության պատմության հիմնական էտապները, նրա դրսևորման յուրահատկությունները, ընդգրկման սահմաններն ու շրջանակները:



**ՍՈՎԵՏՍԿԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՈՆԱՀԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՆՐԱ ԱՆՑԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ**

Սովետական ժողովրդական բանահյուսությունը, որի
անբաժանելի օղակն է հանդիսանում սովետահայ բանահյու-
սությունը, նոր էտապ է բազմադարյան բանահյուսության
պատմության մեջ, Այն արմատապես տարրերվում է անց-
յալի բանահյուսությունից և իր էությամբ ներկայացնում է
մի նոր, որակ, որը Հոկտեմբերյան ռեոլյուցիայի շնորհիվ
ստեղծված սոցիալիստական հասարակարգի արդյունքն է:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեոլյուցիան
հիմնովին ոչնչացրեց մարդու շահագործումը մարդու կող-
մից, սոցիալ-քաղաքական, ազգային-գաղութային և ամեն
տեսակ ճնշումներն ու բռնությունները, նոր դարագլուխ
բացելով մարդկային հասարակության պատմության մեջ:
Ստեղծվեցին տնտեսական կյանքի նոր պայմաններ ու ձե-
վեր, հասարակական նոր հարարերություններ, որոնք գե-
ղարվեստական արտացոլում գտան ինչպես գրականության,
այնպես և ժողովրդական ստեղծագործության մեջ:

Հասարակական-քաղաքական նոր պայմաններում գրա-
կանությունն ու արվեստը, անշուշտ, հիմնվում են անցյա-
լի տրագիգիաների, գեղարվեստական փորձի վրա, բայց
գրականության ու արվեստի մեջ հանդես եկած այդ նորը
մեխանիկորեն չի բնկալում կամ հարմարվում տրա-
գիցիայով ստեղծված գեղարվեստական ձևերին: Նոր բո-
վանդակությունը գեղարվեստական տրագիգիայի մեջ գըտ-
նում է իր էությանն ու բնույթին ներդաշնակ ձևեր, ստեղ-

ծելով բովանդակութեան ու ձևի համապատասխանութիւնը։ Անցյալի գրականութեան ու ժողովրդական բանահյուսութեան բովանդակութեան մեջ հիմնականը մասնավոր սեփականատիրական աշխարհում գոյութիւն ունեցող անհատի շահերի և, ամբողջութեամբ վերցրած, պետութեան շահերի աններգաշնակութիւնն էր։

Հոկտեմբերեան ռեւոլյուցիայի շնորհիւ ստեղծված նոր, սոցիալիստական հասարակարգում լիովին վերացել է անցյալում գոյութիւն ունեցող անհատի և հասարակարգի շահերի հակադրութիւնը։ Սոցիալիստական իրականութեան մեջ հասարակական բոլոր ձեռնարկումներն ուղղված են անհատի բարգաւաճման ու ծաղկման նպատակին, մի բան, որ գոյութիւն չունենէր և չէր կարող ունենալ մասնավոր սեփականատիրական, շահագործողական հարարերութիւնների ժամանակ։ Հասարակական-քաղաքական ու տնտեսական այս մեծ հեղաշրջումն էլ արմատական բեկումն է առաջացնում գրականութեան ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ՝ իրականութեան բացասման ու ժխտման տրամադրութիւններն ու տեղեկացները փոխարինելով կյանքի հաստատման ու փառաբանման նոր տրամադրութիւններով։ Քաղաքականապես ու տնտեսապես ազատագրված աշխատավոր մարդը դառնում է հասարակութեան առաջատար դեմք և հանդես գալիս որպէս գրականութեան ու արվեստի կենտրոնական հերոս։ Հասարակական այս նոր հարարերութիւններն ու իրողութիւնները գրականութեան և ժողովրդական ստեղծագործութեան մեջ իրերի նոր վիճակ են ստեղծում։ Նոր իրականութիւնը նոր բովանդակութեան հետ միասին ստեղծում է արտահայտչական նոր եղանակներ ու ուղղութիւն։ Սովետական գրականութեան ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ, հետևապէս, տեղ չի կարող ունենալ դժգոհութիւնն իրականութիւնից, սկեպտիցիզմն ու հասարակական հոսաւթումը, նախապաշարմունքն ու սնոտիապաշտութիւնը, ինչպէս և առօրյայի նկատմամբ եղած անվստահութիւնը և ապագայի նկատմամբ՝ մշուշապատ ալլարանութիւնը։

Այս, իհարկէ, չի նշանակում, թէ սովետական գրականութեան ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ բացառւում կամ անտեսւում է կյանքի թերութիւններն ու հակասութիւններն ընդհանուր մարդկային ապրումներն ու գրացումները և այլն: Թաքն աշտուղ վերարեւում է գրականութեան ու արվեստի հասարակական բովանդակութեանն ու հիմնական ուղղութեանը:

Սովետական շրջանի ժողովրդական բանահյուսութեանը մի շարք առանձնատկութիւններ ունի, որոնք առանձնացնում ու տարբերակում են նրան, մի կողմից՝ անցյալի ժողովրդական բանահյուսութեանից, մյուս կողմից՝ սովետական շրջանի գեղարվեստական գրականութեանից: Այդ հարցերի շուրջն է, գլխավորապէս, ծախարկել վերջին շրջանի գիտութեան սովետական ժողովրդական բանահյուսութեան մասին: Ըստ էութեան անդրադառնալով այդ հարցերին:

Սովետական շրջանի ժողովրդական բանահյուսութեան վերաբերյալ եղած տարակարծութիւններն ու գիտութեան ելակները ստուգւում են գլխավորապէս մի հարցի շուրջը, թէ արդո՞ք պէտք է այդ ստեղծագործութիւնը համարել ժողովրդական բանահյուսութեան (ֆոլկլոր), այսինքն՝ խնդրել վերաբերում է սովետական շրջանի ժողովրդական բանահյուսութեան սպեցիֆիկումին, նրա սահմանմանն ու բնութագրմանը:

Գիտութեան մասնակից շատ ֆոլկլորագէտներ ու գրականագէտներ սովետական ժողովրդական բանահյուսութեան սպեցիֆիկումը որոշելիս ելնում են անցյալի ժողովրդական բանահյուսութեան սահմանումից և ըստ այդմ՝ որոշ գեղքերում, երբ այն համընկնում է անցյալի բանահյուսութեան գծերին՝ համարում են ֆոլկլոր, իսկ երբ շեղւում է արագիցիտն ըմբռնումներից՝ ժխտում են որպէս այդպիսին: Վերցնենք, օրինակ, ժողովրդական բանահյուսութեան հայտնի սահմանումը՝ ֆոլկլորը որպէս աշխատավոր ժողովրդի կուլտիւր ստեղծագործութիւն: Ոմանք սովետական ժողովրդական բանահյուսութեան կուլտիւր

բնույթը բացատրում են նրա մշակմամբ ու շրջանառու-
թյամբ, իսկ ծագումն ու առաջացումը՝ անհատական ստեղ-
ծագործական պրոցեսով: Ոմանք էլ գտնում են, որ ժամա-
նակակից ժողովրդական բանահյուսության որոշ ժանրեր
ու տեսակներ ստեղծվում են հենց կոլեկտիվի մեջ ու կո-
լեկտիվ ձևով: Կոլեկտիվ ստեղծագործության բնույթի պար-
զարանման ու սահմանման մեջ թյուրիմացությունների
պատճառը ձևական մտեցումն է ինչպես անցյալի բանա-
հյուսության, այնպես և սովետական ժողովրդական բանա-
հյուսության նկատմամբ: Նույնը պետք է ասել նաև անց-
յալի բանահյուսության սպեցիֆիկ կոլմերից մեկի՝ բանա-
վոր ստեղծագործական պրոցեսի և բանավոր տարածման
մասին: Սովետական ժողովրդական բանահյուսության առ-
թիվ դիտլուսիայի մասնակիցներից ոմանք գտնում են, որ
պետք է որպես բանահյուսություն համարել միայն բանա-
վոր ստեղծվող և բանավոր տարածվող գործերը, ոմանք էլ
ընդհակառակը, բանահյուսություն են համարում նույնիսկ
ժողովրդի մեջ մասսայականացված ու տարածված սովե-
տական գրողների հանրահայտ ստեղծագործությունները:
Նույնպիսի մոտեցում ենք նկատում նաև ժողովրդական
բանահյուսության անանուն ստեղծագործություն լինելու
հարցի պարզարանման մեջ: Ինչի¹⁰ց են առաջանում այս
տարակարծությունները և դրն է այս թյուրիմացություն-
ների ու սխալների պատճառները:

Ամենից առաջ դա բխում է նրանից, որ անցյալի բա-
նահյուսության մասին եղած սահմանումը մեխանիկորեն
տարածում են սովետական շրջանի ժողովրդական ստեղ-
ծագործության վրա, և վերջինիս առանձնահատկություն-
ներն ու բնույթը քննելիս ելակետ են ընդունում անցյալի
բանահյուսության սպեցիֆիկումը, մոռանալով, որ սովե-
տական ժողովրդական բանահյուսության նոր որակը ար-
մատական բեկումն ու տեղաշարժեր է առաջացնում ոչ
միայն գաղափարական բովանդակության, այլ նաև ստեղ-
ծագործական պրոցեսի, գեղարվեստական առանձնահատկու-
թյունների ու ձևերի ասպարեզում:

Այնուհետեւ, սովետական ժողովրդական բանահյուսութ-
յան սպեցիֆիկումը բնութագրելիս կամ նրա առանձնա-
հատկությունների մասին խոսելիս սովորաբար նկատի է
առնվում որեւէ ազգի կամ ժողովրդի ստեղծագործությունը,
մեծ մասամբ ռուսական՝ և այն էլ նրա որեւէ շրջանն ու
մոմենտը, մոռանալով, որ սովետական ժողովրդական բա-
նահյուսության, կարեւոր առանձնահատկություններից մեկը՝
ՍՍՌ-ը բաղմազդ ժողովուրդներին՝ ձեռով ազգային, բովանդա-
կությամբ սոցիալիստական ստեղծագործություն լինելու
հանգամանքն է։ Սովետական ժողովրդական բանահյուսու-
թյունը անհրաժեշտ է քննել ամբողջության մեջ՝ ստեղծա-
գործական տրոցեսների բաղմազանությամբ ու տարբեր
էտապների հաշվառումով, որպեսզի հնարավոր լինի որոշել
սովետական ժողովրդական բանահյուսության սպեցիֆի-
կումն ու բնութագրել նրա առանձնահատկությունները։

Վերցնենք, օրինակ, ֆուկլորի՝ որպէս աշխատավոր ժո-
ղովրդի, կոլեկտիվ ստեղծագործության բնութագրումը, և
տեսնենք, թե դա որքանով է համապատասխանում սովե-
տական շրջանի ժողովրդական բանահյուսությանը։ Անցյա-
լի բանահյուսության համար այդ բնութագրումը միան-
գամայն իրավացի և օրինաչափ է, որովհետեւ մասնավոր
սեփականատիրական հասարակարգում աշխատավոր ժողո-
վուրդը իր ձգտումներն ու ակնկալությունները, իր աշխար-
հայեցությունն ու վերաբերմունքը շրջապատող իրակա-
նության մասին արտահայտել է բանավոր գրականու-
թյան մեջ, դարերի ընթացքում գրավոր գեղարվեստական
գրականությանը զուգահեռ ստեղծելով ճոխ ու հարուստ
ժողովրդական բանահյուսություն։ Այդ բանահյուսությու-
նը, իր էությամբ, ըստ ամենայնի, կոլեկտիվ ստեղծագոր-
ծություն է՝ կոլեկտիվի հոգեբանության ու տրամադրու-
թյունների արտահայտման տեսանկյունից։ Անշուշտ, կո-
լեկտիվ ստեղծագործության տրամաբան չի բացառում ան-
հատական ստեղծագործության հիմքը։ Սկզբնապէս ժողո-
վրդական ստեղծագործության երկերը, բացի մի քանի
ժանրից, որոնք անմիջական կապ ունեն կոլեկտիվ աշխա-

տանքի հետ, անհատական ստեղծագործության ազդեցութիւն
են ըստում: Բայց, քանի որ այդ ստեղծագործությունները
իրենց գաղափարական բովանդակութեամբ ու ընդհանուր
նպատակագրմամբ ներհակ ու աններդաշնակ են եղել ժա-
մանակի պաշտոնական գրականութեան հետ և, մյուս կող-
մից՝ ժամանակի սոցիալ-քաղաքական պայմանների հետե-
վանքով աշխատավորական լայն խավերը զրկված են եղել
գրականությունից, կրթությունից ու կուլտուրական այլ
միջոցներից, այս բոլորը նպաստել է բանահյուսական
ստեղծագործությունների կուլեկտիվ մշակմանը և բանավոր
տարածմանը: Հաղորդվելով ու տարածվելով սերնդից սե-
րունդ, դարերի ընթացքում այդ ստեղծագործությունները
փոփոխվել են, հզկվել՝ ընդունելով պատմական տարրեր
ժամանակաշրջանների իրադարձությունների կնիքը, հասա-
րակական տարրեր խավերի տրամագրությունները՝ ստեղ-
ծելով բազմազան ու բազմաթիվ տարրերակներ, և այդպի-
սով մոռացութեան մատնել նրանց սկզբնական հորինողնե-
րի անունները:


Պարզ է, որ ժողովրդական բանահյուսութեան վերո-
հիշյալ սահմանումը և նրա բնորոշ առանձնահատկություն-
ները չենք կարող նույնութեամբ տարածել սովետական
շրջանի ժողովրդական բանահյուսութեան վրա: Այն պայման-
ներն ու հանգամանքները, որոնք հիմք են եղել անցյալի
ժողովրդական բանահյուսութեան համար, գովետական
իրավակարգում վերացվել են: Ժողովուրդ հասկացողու-
թյունն էլ ինքնին փոխվել է: Սովետական աշխատավոր
մասսաները իրենց քաղաքական-սոցիալական վիճակով և
կուլտուր-կենցաղային պայմաններով արմատապես տար-
բերվում են նախկին վիճակից:

Ահա թե ինչու գրականութեան, ռադիոյի, մամուլի,
կուլտուրական բազմաթիվ օջախների, կրթական ռեսուրսի
լայն ժողովրդականացման պայմաններում սովետական ժո-
ղովրդական բանահյուսութեան համար սպեցիֆիկ գլխի
կարող լինել կոլեկտիվ մշակումը, բանավոր տարածումը
կամ անանուն ստեղծագործութեան տրագիցիան և այլն:

3024 A 31150

Ձգեալք է համաձայնել նաև դիտարկողին մասնակից
այն ֆորկլորագետների ու գրականագետների մոտեցմանը,
որոնք բանահյուսութեան հին սահմանումից շեղվող ստեղծագործությունները չեն համարում ժողովրդական: Մինչդեռ իրականությունը հաստատում է, որ սովետական շրջանի ժողովրդական բանահյուսությունն էլ մի պրոցես է, որը անցման էտապներ է ունեցել: Օրինակ՝ 1920—30-ական թվականների ժողովրդական բանահյուսությունը արտահայտչական եզանակներով ու միջոցներով համեմատաբար ավելի մոտ է անցյալի բանահյուսությանը, որովհետև դեռ ապրում էին հին բանահյուսության վարպետ ասացողներն ու հորինողները և կիրառում էին անցյալի ստեղծագործական տրագիգիաները: Մյուս կողմից էլ հասարակական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը, կուլտուրական փոփոխությունները աստիճանաբար իրենց ազդեցությունն են թողնում նաև ժողովրդական ստեղծագործության վրա և փոփոխում նրա արտահայտչական ձևերն ու բնույթը:

Ձի կարելի հավասարեցնել և նույնացնել ժողովրդական ստեղծագործության պրոցեսը ՍՍՌՄ տարբեր ժողովուրդների ու ազգությունների մոտ: Սովետական Միության մեջ կան ժողովուրդներ ու ազգային փոքրամասնություններ, որոնք դարերով զրկված են եղել ազգային գիր ու գրականությունից (էվենկներ, նանայներ, օյրոթներ, բուրյատներ, մուրգովներ, քրդեր և այլն): Այդ և մի շարք այլ ժողովուրդների մոտ սովետական շրջանում ևս բուռն ծաղկում է ապրում բանահյուսական տրագիգիան, և նրանց նոր գրականությունն էլ աճում ու զարգանում է բանահյուսական տրագիգիայով: Այսպես չէ գրությունը Սովետական Միության այն ժողովուրդների մոտ, որոնք ունեցել են գրավոր գեղարվեստական գրականության տրագիգիաներ, ինչպես օրինակ՝ ռուսները, ուկրաինացիները, վրացիները և ուրիշ այլ ժողովուրդներ: Հայ իրականության մեջ ևս դոյություն է ունեցել անցյալից եկող և՛ գեղարվեստական գրավոր գրականության, և՛ աշուղական



գրավոր ու բանավոր գրականության, և՛ թե ղուտ բանավոր գրականության՝ ժողովրդական բանահյուսության, ստեղծագործական տրագիցիաներ: Սովետական շրջանի հայ ժողովրդական բանահյուսության մեջ, տարրեր էտապներում, հանդես է եկել ստեղծագործական այս տրագիցիաներից որևէ մեկի առավել ցայտուն ազդեցությունը:

Նույնը պետք է ասել ժանրերի մասին: Անցյալի բանահյուսության տրագիցիոն ժանրերը փոխել են իրենց բնույթն ու իմաստը, արտահայտելով նոր հանգամանքներից ծնված նոր բովանդակության պահանջները: Եվ նայած տվյալ ժողովրդին և պատմական ժամանակաշրջանին, սովետական ժողովրդական բանահյուսության մեջ նկատում ենք բանահյուսական այս կամ այն ժանրի աշխուժացումն ու ընդգծված գրսևորումը. այսպես, օրինակ՝ սովետականի մեջ առավել ուժեղ գրսևորում են ստացել երգերն ու խաղիկները (частушка), հյուսիսի ժողովուրդների մոտ՝ հեքիաթներն ու լեգենդները, միջին ասիական ժողովուրդների մոտ՝ վիպական երգերը և այլն: Այստեղ խոշոր դեր ունի դարձյալ անցյալից եկող ստեղծագործական տրագիցիան: Լավագույն օրինակ կարող է ծառայել դրան էպիկական արվեստի տրագիցիայով ստեղծված «Լենին փաշա» հերոսական վիպերգը՝ սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ:

Այս տարրերություններն ու ալլադանությունները հաշվի առնելով հանդերձ, կարելի է ցույց տալ, որ սովետական ժողովրդական բանահյուսության մեջ ժանրային կերպարանքով ու բնույթով բանահյուսությանն ավելի մոտ են առած-ասացվածքները, երգերն ու խաղիկները:

Ուսումնասիրելով սովետահայ ժողովրդական բանահյուսության ղեկավարվածության արտահայտչական միջոցները, տեսնում ենք անցյալի բանահյուսության գեղարվեստական տրագիցիայի սրժակի ազդեցությունը պատկերների, սիմվոլների, էպիտետների, կառուցվածքի, տաղաչափության և գեղարվեստական այլ ձևերի բնագավառում: Ընդհանրապես պետք է ասել, որ առանց տրագի-

ցիայի օգտագործման անխմաստ է որևէ ստեղծագործություն, որովհետեւ գեղարվեստական ստեղծագործության նյութը բառն է, բառարվեստը, որն ստեղծվել ու զարգացել է դարերի ընթացքում: Ա. Մ. Գորկին այս ստիժիլ նշել է՝ «Գրական-նության հիմնական նյութը բառն է, որ ձևավորում է մեր բոլոր ապավորությունները, զգայմունքները, մտքերը: Գրականությունը բառի միջոցով պլաստիկ պատկերման արվեստ է»¹: Ուրեմն, ստեղծագործության մեջ անխմաստ են գեղարվեստական ձևի ինչ-որ հեղաշրջումները: Այլ բան է տրագիցիայի օգտագործման ասույարեղում գեղարվեստական ձևի նոր դրսևորումը, նոր խմտտավորումը: Համեմատած գրականության հետ, ժողովրդական բանահյուսության վրա անցյալի գեղարվեստական տրագիցիայի ազդեցությունը ավելի ուժեղ է եղել: Դա բացատրվում է, անշուշտ, կոլեկտիվ ստեղծագործության և բանավոր տարածման առանձնահատկությունների: Սակայն, անցյալի բանահյուսության գեղարվեստական տրագիցիայի ազդեցությունն ու գեղարվեստական ձևերի օգտագործումը իրավունք չեն տալիս մտելու, թե ժամանակակից ժողովրդական բանահյուսության արվեստը անցյալի բանահյուսության արվեստն է: Տրագիցիոն ձևերի օգտագործումը դեռևս չի նշանակում անցյալի արվեստի նույնացում:

Բացմաթիվ օրինակներ կարող ենք բերել ցույց տալու համար, թե ինչպես ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ օգտագործվում են անցյալի բանահյուսության գեղարվեստական ձևերը: Վերցնենք ժողովրդական երգերը: Ժողովրդական երգի կառուցման տաղաչափական ներքին հիմունքը, ուրիշ, կրկներգերն ու հանդերձը նույն ձևով կիրառվում են ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ: Գեղարվեստական այդ ձևվերով են պայմանավորված ժողովրդական երգի ժանրային գծերը: Այսպես, օրինակ, հին ժողովրդական երգերից մեկում կարգում ենք.

¹ Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոգվածներ, Երևան, 1949, էջ 42:

Հունձ ենք անում քոմագով,
Յար լե-լե հո'պ, լե-լե հո'պ,
Դե, ջան տղերք քոմագով,
Ջան լե-լե հո'պ, լե-լե հո'պ¹:

Ժամանակակից ժողովրդական ստեղծագործություն
լենինյան ցիկլի երգերից մեկում կարդում ենք.

Լենին եկավ ինչը սպառե,
Վա՛յ լե, լե, լե, լե,
Մե ազատեց շատ սթամե,
Վա՛յ լո, լո, լո, լո²:

Վերցնենք ժողովրդական բանահյուսություն մեջ շատ
տարածված, այսպես կոչված, «Հարրրան»-ի երգերը, որոնք
ղարդանում են գիալսճներով, անցյալի բանահյուսությու-
նից.

Տղան	Սիրել եմ սերն էրեսին, Անթառամ թերն էրեսին, Ով իմ սիրածն ինձ չի տա՝ Ասածու կրակն էրեսին:
Աղջիկը	Սարի թրթնջուկ թաղա, Մեղքն ու շաքար քեզ մաղա: Ինձ պես նաղանի աղջիկ Քեզ պես տղին ճնց սաղա: ³

«Հարրրան» գեղարվեստական արտահայտչական
նույն եղանակը, տաղաչափությու-
նն ու ուրիշ մեծ տեսնում
ենք նաև ժամանակակից ժողովրդական բանահյուսությու-
նի մեջ.

Գոլթողնիկ եմ, վար կանեմ,
Ես իմ գլխիս ճար կանեմ.
Անհա՛տ, անճար կը մեռնես,
Քողը գլխիտ տար կանեմ⁴:

1 Հայ ժողովրդական բանահյուսություն, կաղմեց Գր. Դրիգոր-
յան, 1951, էջ 340:

2 Լենինը հայ ֆուկորի մեջ, 1936, էջ 61:

3 Հայ ժողովրդական բանահյուսություն, 1951, էջ 377:

4 Հայկական խորհրդային ֆուկորը, 1938, էջ 104:

Ըստ որում նույնությամբ կրկնվում է ժողովրդական
երգի երկխոսության արտահայտությունները.

— Հարրա՛ն,
— Զանե ջա՛ն:

Ժողովրդական բանահյուսության երգերի (Վարդ կո-
շիկո՞ւ, Վալ ալուխս՞ և այլն) օրինակով սովետահայ ժո-
ղովրդական բանահյուսության մեջ կան բազմաթիվ նույն-
պիսի երգեր (Մըր Խաչոյի խաղը՞, Պիյան Խաչոն կոխո-
ղում՞ և այլն): Ինչպե՞ս տեսնում ենք վերը բերված օրի-
նակներից, գեղարվեստական արտահայտչական ձևերը և՛
անցյալի բանահյուսության մեջ, և՛ ժամանակակից ժողո-
վրդական ստեղծագործության մեջ նույնն են: Բայց եր-
կու դեպքում էլ գեղարվեստական այդ եղանակը ներդաշ-
նակվում է տարրեր բովանդակությունների հետ: Նույն այդ
տաղաչափությամբ, ութմիկայով ու բառապաշարով մի
գեպքում մենք գործ ունենք մասնավոր սեփականատիրա-
կան իրավակարգում ապրող անհատի զգայմունքների հետ,
իսկ մյուս գեպքում երգի լիրիկական հերոսը նոր մարդն
է, միանգամայն նոր պայմաններում ու հանգամանքնե-
րում: Այսպիսով, նույն գեղարվեստական ձևը իմաստավոր-
վում է տարրեր բովանդակությամբ: Պատահում է այնպես,
որ ժամանակակից ժողովրդական ստեղծագործության մեջ
անցյալի բանահյուսության հանրահայտ պատկերներն ու
համեմատությունները անփոփոխ օգտագործվում են միան-
գամայն նոր երևույթներ արտահայտող տողերի հետ, ինչ-
պե՞ս օրինակ՝

Էս քըշեր լուսնակ քըշեր,
Զունն էկե, գետին նախշե.
Կոխող, սովխող, կոմունա,
Հաստատ մընա, թո մընա:

Ավանդական բանահյուսության գեղարվեստական-
արտահայտչական միջոցները հանդիսանում են ազգային

ձևի գրեկերման կարևոր ֆակտորներից մեկը: Ժողովրդական բանահյուսությունը մեջ տվյալ ժողովրդի ազգային բնավորությունը իր որոշակի գրեկերումն է ստանում, որովհետև բանահյուսությունը հանգրիստանում է ժողովրդական ամենալայն մասսաների ստեղծագործությունը:

Ժամանակակից ժողովրդական բանահյուսությունը մեջ ազգային գծերն ու առանձնատիպությունները, անշուշտ, չեն կարող այն գրեկերումն ստանալ, ինչ որ անցյալի բանահյուսությունը մեջ, նախ և առաջ այն պատճառով, որ տվյալ գեպքում մենք գործ ունենք սոցիալիստական ազգերի հետ: Այդ պատճառով էլ ժամանակակից ժողովրդական ստեղծագործությունը, ինչպես ողջ սովետական կուլտուրան բովանդակությամբ միասնական է՝ սոցիալիստական: Սակայն այդ միասնական, սոցիալիստական բովանդակությունը միապաղպաղ ու շարունակ է. այն արտահայտվում է ամենաբազմազան ձևերով:

„Творчество народов СССР“ հանրահայտ ժողովածուի առաջարանում խոսելով ժամանակակից ժողովրդական ստեղծագործության մասին, նշվում է. „Многоцветна, многокрасочна золотая книга народного творчества, как многоцветна многонациональная прекрасная наша страна“¹.

Սովետական ժողովրդական բանահյուսությունը գեղարվեստական առանձնատիպության հարցերից մեկը այդ ստեղծագործության ժանրային բնույթի հարցն է: Անցյալի բանահյուսությունը հիմնական ժանրային բաժանումները՝ էրիկան և էպիկան պահպանվում են նաև ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ: Գրեթե աննշան են դրամատիկական ժողովրդական ստեղծագործությունները, որոնք անցյալի բանահյուսության մեջ էլ մեծ տարածում չեն ունեցել: Բանահյուսական հիմնական ժանրերը իրենց ենթատեսակներով (երգ, վրպերգ, առած, առակ, անեկդոտ, հեքիաթ և այլն) հանդես են գալիս ժամանակակից ժողո-

¹ Творчество народов СССР, 1937, Москва, стр. 5.

վերդական բանահյուսության մեջ, ըստ սրում նկատվում է պատմական տարրեր էտապներում այս կամ այն ժանրի գերակշռությունը: Եվ պետք է ասել, որ բանահյուսական բոլոր ժանրերը չեն, որ իրենց կենսունակությունը հավասարաչափ պահպանել են նոր շրջանի ստեղծագործություններում: Այս տեսակետից սովետահայ ժողովրդական ստեղծագործության մեջ տիրապետողը լիրիկական ժանրն է՝ երգը, որը հավասարապես հանդես է եկել ժողովրդական ստեղծագործության զարգացման բոլոր էտապներում:

Լիրիկան սովետահայ ժողովրդական բանահյուսության հիմնական ժանրն է: Անցյալի բանահյուսությունը շատ հարուստ է լիրիկական ժանրի ստեղծագործություններով: Եվ դա հասկանալի է, որովհետև մարդու հոգեկան աշխարհը և նրա վերաբերմունքը գեպի արտաքին աշխարհի երևույթները անմիջականորեն վերարտադրվում են լիրիկական մոտիվներով: Այս տեսակետից ժողովրդական բանահյուսության լիրիկական ժանրի ամենատարածված և ամենամասշտապական տեսակը երգն է՝ ժողովրդական երգը: Երգերը ընդգրկում են ժողովրդի կյանքն ու առօրյան բոլոր կողմերով: Հայկական ժողովրդական երգերը բաղմազան են ու բաղմատեսակ:

Ժամանակակից երգերը, ինչպես հին, ավանդական բանահյուսության երգերը, տողորված են երաժշտական, ութմիկ շնչով: Դա պայմանավորված է ժողովրդական երգերի ժանրային բնույթով՝ բոլոր գեպքերում երգերը որպես կանոն, եղանակներ են ընդունել և երգային կատարումով տարածվել: Ահա թե ինչո՞ւ ժամանակակից գրեթե բոլոր երգերը ունեն ութմիկ կրկներգեր ու հանկերգեր, ինչպես օրինակ՝

Դա լի, լե, լե, դա լի, լե, լե, լե սեյրան է,
Ծաղիկ քաղեմ, ծամիք շարեմ, հեյրան է,
կոլիտդ մտանք, մուրազ առանք, հեյրան է,
Դա լի, լե, լե, դա լի, լե, լե... սեյրան է¹:

¹ Դուստնական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 95,

Այն հանդամանքը, որ ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ երգերն են հատկապես պանպանել բանահյուսության գծերը, մասամբ կապված է եղանակներ ընդունելու և երգվելով տարածվելու հետ։ Երաժշտական մոտիվները ապահովում են երգերի տեքստերի լայն շրջանստույթյունը և տարբերակների ստեղծումը։

Լիրիկական ժանրը ժամանակակից բանահյուսության ամենակենսունակ ժանրն է, որն անմիջականորեն արձագանքում է ժամանակի պահանջներին։ Ինչպիսի ուղղություն մը էլ ընթանա ժամանակակից ժողովրդական բանահյուսության պրոցեսը, լիրիկական ժանրը չի կորցնի իր հեռանկարները։ Պրտ ամենահիմնական ապացույցը մեր իրականություն մեջ լայնորեն տարածվող ժողովրդական մասսայական երգերն են։ Ինչ ձևով էլ ստեղծվեն մասսայական այդ երգերը, առանձին հեղինակների կողմից հորինվելով և գործածություն մեջ խմբագրվելով, թե կոլեկտիվ աշխատանքի ու հավաքույթների պայմաններում, միևնույնն է, այդ երգերը մասսայական տարածում են գրանում։ Մասսայական ժողովրդական երգը մեծ դեր է խաղում ամբողջ Սովետական Միության մեջ, քաղաքականագիտացիոն ու դաստիարակչական իր բարձր նպատակներով։

Էպիկական տրագիցիան սովետահայ ժողովրդական ստեղծագործություն մեջ շարունակվել է վիպերգների ձևով։ Վիպական տրագիցիայով ստեղծվել են նաև ոչ մեծ թվով հեքիաթներ, առակներ և բաղմամբիվ անեկդոտներ (որոնք, սակայն, չեն հավաքվել ու գրի առնվել)։ Այնուամենայնիվ, պետք է ասել, որ հեքիաթն ու առակը չեն ստացել և չէին կարող ստանալ այնպիսի տարածում, ինչպիսին անցյալի բանահյուսության մեջ էր։

Անդրադառնալով ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ վիպական ժանրի բնույթին և նրա հեռանկարներին, նկատում ենք վիպական ժանրի մի քանի տեսակների աստիճանաբար վերացումը։ Օրինակ՝ ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ գրեթե

տական շրջանի ժողովրդական ստեղծագործությունը՝ այդ իմաստով էլ այդ տերմինը պայմանական է:

Սովետական շրջանի ժողովրդական բանահյուսության նոր սրակով են պայմանավորված նաև այդ ստեղծագործության ու գրականության միջև եղած կապերի ու փոխհարաբերությունների՝ ասանձնատկությունները: Գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերություններն անցյալում ներդաշնակ չեն ընթացել: Եթե պաշտոնական, գրավոր դեղարվեստական գրականության մեջ արտացոլում է գտել նաև իշխող դասակարգերի գաղափարախոսությունը, ապա ժողովրդական բանահյուսությունը իր էությունը բուն աշխատավորական մասսաների՝ արամադրություններն ու ըմբռնումներն է անդրադարձրել, նրանց պատմական սահմանափակությամբ հանգերձ: Այդ է պատճառը, որ ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններն ու նրանց կատարողները խոր միջնադարից սկսած իշխող վերնախավի ու պաշտոնական գրականության կողմից անուշադրության են մատնվել: Պատահական չէ նաև, որ ժողովրդական բանահյուսությունն օգտագործած գրողների ու արվեստագետների ստեղծագործությունը բարձր է հնչել և համաժողովրդական ճանաչման ու գնահատման արժանացել: Սովետական գրականության և ժողովրդական ստեղծագործության փոխհարաբերությունների ու կապերի մեջ արմատական տեղաշարժը անցյալում եղած հակասությունների ու աններդաշնակության խոցառ անհետացումն է: Սովետական գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը իրենց ներքին էությունով են, որովհետև ծառայում են միևնույն նպատակին՝ սովետական բաղժազ ժողովրդի ու նրա պետության շահերի ամրապնդմանը: Մեր գրականության ոգուն հարազատ է հնչում աշխատավորական լայն մասսաների անմիջական ստեղծագործությունները՝ երգերը, խաղիկները, տոած-ստացվածքներն ու թևավոր խոսքերը, սրամիտ արտահայտությունները և այլն: Սովետական իրականության մեջ գրողն ու արվեստագետը չեն

տական շրջանի ժողովրդական ստեղծագործությունը. այդ իմաստով էլ այդ տերմինը պայմանական է:

Սովետական շրջանի ժողովրդական բանահյուսության նոր սրահով են պայմանավորված նաև այդ ստեղծագործության ու գրականության միջև եղած կապերի ու փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերություններն անցյալում ներդաշնակ չեն ընթացել: Եթե պաշտոնական, գրավոր գեղարվեստական գրականություն մեջ արտացոլում է գտել նաև իշխող դասակարգերի գաղափարախոսությունը, ապա ժողովրդական բանահյուսությունը իր էությունով բուն աշխատավորական մասսաների տրամագրություններն ու ըմբռնումներն է անդրադարձրել, նրանց պատմական սահմանափակությունները: Այդ է պատճառը, որ ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններն ու նրանց կատարողները խոր միջնադարից սկսած իշխող վերնախավի ու պաշտոնական գրականության կողմից անուշադրություն են մատնվել: Պատահական չէ նաև, որ ժողովրդական բանահյուսությունն օգտագործած գրողների ու արվեստագետների ստեղծագործությունը բարձր է հնչել և համաժողովրդական ճանաչման ու գնահատման արժանապես: Սովետական գրականության և ժողովրդական ստեղծագործության փոխհարաբերությունների ու կապերի մեջ արմատական անդաշտը անցյալում եղած հակասությունների ու աններդաշնակությունների խզումն անհետացում է: Սովետական գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը իրենց ներքին էությունով նույնանում են, որովհետև ծագումով են միևնույն նպատակին՝ սովետական բազմազգ ժողովրդի ու նրա սկսություն շահերի ամրապնդմանը: Մեր գրականության սգուն հարադատ է հնչում աշխատավորական լայն մասսաների անմիջական ստեղծագործությունները՝ երգերը, խաղիկները, առած-ասացվածքներն ու թևավոր խոսքերը, սրամիտ արտահայտությունները և այլն: Սովետական իրականության մեջ գրողն ու արվեստագետը չեն

կարող հաջողութեան հասնել, եթէ իրենց ստեղծագործութեամբ նրանք չեն արտահայտում ժողովրդի հույզերը, կտրված են ժողովրդից ու նրա առօրյայից:

Բայց սխալ կատարած կլինեինք, եթէ սովետական գրականութեան դարգացման պրոցեսը ամբողջովին նույնացնեինք ժողովրդական բանահյուսութեանը: Կան ստեղծագործական պրոցեսի, ժանրային գծերի և երկերի տարածման ու շրջանառութեան եղանակների յուրահատկութեաններ, որոնք գալիս են մասամբ անցյալի տրագիդիաներից, մասամբ էլ արդյունք են կոնկրետ ժամանակի ու հանգամանքների: Պետք է առել, որ գնալով այդ յուրահատկութեանները մեղմացել ու աստիճանաբար ջնջվել են և առավել ցայտուն է դարձել գրավոր գեղարվեստական գրականութեան ազդեցութեանը ժողովրդական բանահյուսութեան վրա:

Սովորաբար, գրականութեան և ժողովրդական բանահյուսութեան միջև եղած տարբերութեանների առթիվ վիսյակոչում են պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ ստեղծագործութեան մաստը: Այստեղ էլ որոշ թյուրիմացութեան կա: Պրոֆեսիոնալ ստեղծագործութեանը չափեր է դիտել որպէս քարացած ու կաստայացած մի երևույթ: Գրողը կամ արվեստագետը պրոֆեսիոնալ է դառնում ոչ հատուկ ուսուցման ու կրթութեան շնորհիվ: Գրողի պրոֆեսիան չի կարելի նույնացնել մյուս պրոֆեսիաներին: Անցյալում նույնիսկ տարբեր պրոֆեսիաների տեղ մարդիկ գրական ստեղծագործութեամբ են զրադվել և ոչ պակաս հաջողութեան են ունեցել, առավել ևս սովետական իրականութեան մեջ: Ժողովրդական բանահյուսութեան մեջ էլ անցյալում, հայտնի են եղել պրոֆեսիոնալ բանաստեղծներ, որոնք օժտված են եղել քնդուհանութեամբ ու տաղանդով: Սովետական ժողովրդական բանահյուսութեան մեջ ոչ պրոֆեսիոնալ ստեղծագործութեանը վերցվում է գրականութեան ու արվեստի հարաբերութեամբ: Աշխատավոր մասնաւորի գեղարվեստական ինքնաստեղծագործութեանը, որ ծավալվում է ոչ միայն խոսքի՝ ասպարեղում, այլ նաև կիրառական արվեստների՝ քանդակագործութեան, նկարչութեան, փո-

բազմաթիւյն, դժուարագործութեան, ձեռագործի և երաժշտութեան ու պարարվեստի բնագավառներում, ոչ պրոֆեսիոնալ ստեղծագործութեան է, որը, սակայն, միշտ ձգտում է բարձրանալ պրոֆեսիոնալ ստեղծագործութեան մակարդակին: Ուրեմն, սկզբունքային տարբերութեան գոյութեան չունի, հարցը վարպետութեան ու կատարելագործման մեջ է: Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարութեանը բոլոր միջոցներով նպաստում են ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացմանը: Գնահատվում և խրախուսվում են ժողովրդական տաղանդները: Սովետական իրավակարգում գործում է կուլտուրլուսավորական օջախների մի ամբողջ ցանց, որոնց նպատակն է զարկ տալ ժողովրդի գեղարվեստական ինքնագործունեութեանը: Այդ նպատակին են ծառայում հատկապես ժողովրդական ստեղծագործութեան սեպուրիկական և միութենական տները, ամեն տարի անցկացվող ժողովրդական ինքնագործունեութեան օլիմպիադաները, կիրառական արվեստի ցուցահանդեսները և այլն: Ժողովրդական ստեղծագործութեան նկատմամբ եղած Պարտիայի ու Կառավարութեան վերաբերմունքը ելնում է արվեստի ու գրականութեան լայն մասսայականացումից ու ժողովրդականութեանից: Իր ժամանակին մեծ Լենինն ասել է, որ արվեստը պատկանում է ժողովրդին: Ներկա պայմաններում ժողովրդական ստեղծագործութեանը վսխում է իր ձևը, այլևի է մոտենում գրականութեանը, և մենք տկանատես ենք, թե ինչպես ոչ պրոֆեսիոնալ ստեղծագործողները դառնում են պրոֆեսիոնալ: Անցյալում անհատի ստեղծագործական ուժերի ծաղկման ու գրեթե ամբողջական ճանապարհին եղած խոչընդոտները մեր իրավակարգում հիմնահատակ կործանված են, և ամենուրեք հանդես է գալիս անհատի ստեղծագործական նախաձեռնութեանը, որը տոգորված է կոլեկտիվի շահերով ու հեռանկարներով: Այս նոր երևույթները նկատի ունենալով, որ մեր բանվորական մասսան, մեր նոր սպառողները արագորեն աշխատանք

քի են անցնում արվեստի բոլոր բնագավառներում և որ մենք գտնվում ենք արվեստի մեջ կոլեկտիվ ստեղծագործության ինչ-որ ձևի ստեղծման նախօրյակին: Անհրաժեշտ է ընդառաջել այդ երեույթին¹:

Սովետական գրականության ու արվեստի մեջ կան բազմաթիվ օրինակներ, թե ինչպես ժողովրդական բանահյուսության տրագիցիաները ներդաշնակորեն միահյուսվել են պրոֆեսիոնալ ստեղծագործության հետ: Այսպես, օրինակ, զապախական, սեղրեկական, տաջիկական, թուրքմենական, հայկական, քրդական գրականության մեջ հանդես են եկել ժողովրդական երգիչներ, որոնք, ըստ տեղական անվանումների, կոչվում են ալիսներ, ժիրշիներ, աշուղներ ու գուսաններ: Այնպիսի գրական խոշոր գեմքեր, որպիսիք են զապախական ալին Ջամբուլը և Դադասանի ժողովրդական երգիչ, «XX դարի Հովերոս», Սուլեյման Սուալսկին գալիս են հենց ժողովրդական բանահյուսությանից: Դիչեն նաև ազգային սեպուլսիկաներում այնպիսի տաղանդավոր նկարիչներն ու քանդակագործները, որոնք իրենց գործունեությունն սկսել են սրպես ժողովրդական, ինքնուստ ստեղծագործողներ: Սովետական Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տան կազմակերպած ցուցահանդեսներում և ժողոված նյութերի մեջ կարելի է գրանել ժողովրդական ինքնուս վարպետների՝ նկարիչների, քանդակագործների, փորագրողների, արծաթագործների, դորագործների, ձեռագործ-ասեղնագործների աշխատանքների բազմաթիվ նմուշներ, որոնք իսկական արվեստի ստեղծագործություններ են:

* * *

Հանգիստանալով ժամանակակից կյանքի գեղարվեստական յուրատեսակ անդրադարձումը, սովետահայ ժողովրդ-

1 Մ. Դ ո Ր Կ ի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 107:

գական բանահյուսության պատմությունը համապատասխանում է մեր հասարակական կյանքի զարգացման պրոցեսին: Սովետական ժողովրդական բանահյուսության պերիոդիզացիայի համար հիմք է ծառայում ստեղծագործության գաղափարական բովանդակության մեջ տեղի ունեցած էտապային անցումները: Այս իմաստով ժամանակակից ժողովրդական բանահյուսության պերիոդիզացիան ավելի մոտ է այն բաժանմանը, որ ընդունված է սովետական հասարակության պատմության համար: Ըստ այդմ, սովետական հասարակության պատմությունը բաժանվում է երեք հիմնական շրջանների՝ 1) նախաստեղծության շրջան (1917—1941 թթ.), 2) Հայրենական Մեծ պատերազմի շրջան (1941—1945 թթ.) և 3) հետպատերազմյան շրջան (սկսած 1945 թ.):

Սովետական շրջանի պատմություն և դրականության, ինչպես և ուսուսական ժողովրդական բանահյուսության պատմության պերիոդիզացիայի համար վերահիշյալ հիմնական էտապները ևս ստորաբաժանված են մի շարք ենթաշրջանների:

Ելնելով սովետահայ ժողովրդական ստեղծագործության նյութերի գաղափարական բովանդակությունից ու թեմատիկ ընդգրկումից, այն բաժանում ենք հետևյալ շրջանների՝ 1) Հսկաներերյան ռեալության, Հայաստանի ազատագրման ու քաղաքացիական կռիվների տարիներ և ժողովրդական տնտեսության վերականգնման շրջան (1917—1929 թթ.), 2) կոլեկտիվացման, հնգամյակների և սոցիալիզմի կոոռցման շրջան (1925—1941 թթ.), 3) Հայրենական Մեծ պատերազմի շրջան (1941—1945 թթ.) և 4) հետպատերազմյան շրջան (սկսած 1945 թ.): Այս ստորաբաժանման համար հիմք չեն կարող ծառայել ժողովրդական բանահյուսության նյութերի գրառման կոնկրետ թվականները, սրովհետև այդ նյութերի գրառումները սկսվել են ավելի ուշ, մինչդեռ այդ ստեղծագործությունները դուրս են ունեցել և տարածված են եղել ժողովրդի մեջ: Բանահավաքների վկայության համաձայն, բանաստեղծներն

ու երգիչները այդ ստեղծագործությունները լսել են՝ կամ «սովորել» ռեփիշներից: Ինչպես տեսնում ենք, այստեղ բավականաչափ մեծ դեր է խաղացել բանավոր տրադիցիան: Հավանաբար այդ ստեղծագործությունների որոշ մասը հորինվել է կոնկրետ իրադարձությունների շրջանում, ապա տարածվելով, աստիճանաբար նորացվել են և կոնկրետ մշակման սրտը պրոցեսն անցել: Այդպես են տարածվել «Լենին փաշա» վիպերգը, լենինյան երգերը, քաղաքացիական կռիվներին նվիրված վիպական ու լիրիկական երգերը և այլն: Հնարավոր է նաև, որ այդ ստեղծագործությունների մի մասն էլ ստեղծվել է իրադարձություններին հաջորդող շրջանում: Բայց այդ բոլորը չի խանգարում, որ մենք այդ ստեղծագործությունները տեղադրենք իրենց ժամանակաշրջանն արտացոլող էտապներում:

Որո՞նք են սովետահայ ժողովրդական բանահյուսության էտապներն առանձնահատկությունները և ինչպե՞ս է արձագանքել ժողովրդական բանահյուսությունը ժամանակի խնդիրներին: Ինչպես ասացինք, սովետահայ ժողովրդական բանահյուսության առաջին էտապն ընդգրկում է Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի, Հայաստանում սովետական իշխանության հաստատման և քաղաքացիական կռիվների, ինչպես և ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանները:

Ժամանակագրական կտրված առաջին երկը, որ գրի է առնվել մեզ մոտ, «Լենին փաշա» ժողովրդական վիպերգն է, որտեղ խոր և բազմափայլմանիորեն անդրադարձում են ստացել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի իրադարձությունները: «Լենին փաշան» գրի է առնվել 1934 թ. Ադրբայջանի յայլաներում, դրար Գարո Բադյումյանից: Բանտնապաշտ Գ. Թարվերդյանը ծանոթության մեջ գրում է, որ Գարոն «Հանու Նազըլը» սովորել է գրությամբ Սեփոյից, երբ վերջինիս հետ 1922—1924 թթ. «գառտա» է եղել ու միասին շրջել, գլխավորությամբ են արել:

Գարոյի ասելով՝ նազրը Սեփոն ինքն է հորինել, Այստեղից պարզ է դառնում, որ «Լենին փաշան» արդեն հորինված ու տարածված էր 1922 թ., ուրեմն այն գոյություն ուներ 1922 թվականից էլ առաջ, գուցե և հենց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շրջանում: Չմտնելով ժամանակագրական մանրամասնությունների մեջ, պետք է ասել, որ «Լենին փաշան» ռևոլյուցիայի ժամանակաշրջանն արտացոլող ամենախոշոր ստեղծագործությունն է: «Լենին փաշայից» բացի, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի իրագործություններն արտացոլվել են նաև հետագա շրջանում գրի առնված քնարական մի շարք երգերում և մի քանի հեքիաթներում: Ներկայացնելով ժամանակի իրագործությունները, ժողովրդական երգիչներն ու բանասացները հայտնում են, թե ինչպես զարթել է, մտավ Պետրոսով», «սրվեց, կտորեց բուրժուին բուր», «Մավետը դրեց Լենինը»²: Հասկանալի է, որ նման երգերը կարող էին ստեղծվել և լայն տարածում ստանալ ռևոլյուցիայի անմիջական ազդեցությամբ միայն: Հոկտեմբերյան իրագործությունները յուրահատուկ արտացոլում են գտել նաև մի քանի հեքիաթներում, որոնք գրի են առնվել 1935 թ.³ Լենինյան երգերում և հեքիաթներում արձագանքվել է նաև Սովետների երկրի վրա կազմակերպված օտարերկրյա ինտերվենցիայի և նրա ջախջախման փաստերը: Այս շրջանի սովետահայ բանահյուսությունն առանցքային թեմաներից մեկը Հայաստանում սովետական իշխանության հաստատման կարևորագույն իրագործությունն է: Այստեղ արդեն ավելի անմիջական ու կոնկրետ բնույթ ունեն ժամանակակից դեպքերի ընդգրկումն ու արտացոլումը: Դրանք մեծ մասամբ ժողովրդական երգեր են կրկնեղներով, կամ վիպական բնույթի փոքր երգեր և այլն: Այդ ստեղծագործություններում ներկայացվում է կոմունիստա-

¹ Լենինը հայ ֆոլկլորի մեջ, Երևան, 1936, էջ 125:

² Նույն տեղում, էջ 101:

³ Նույն տեղում:

յիւսն պարտիայի ղեկավարութեամբ ռեուլյուցիոն մասսաների պայքարն ու հաղթանակը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար:

Ժողովրդական բանահյուսութեան մեջ պատկերվում է նաև Սովետական իշխանութեան առաջին յարիւնների իրադարձութիւնները, ժողովրդական տնտեսութեան վերականգնումը, մասսաների ստեղծագործական խանդավառութիւնը, բանվորա-գյուղացիական պետութեան ամրապնդումը և այլն: Վերականգնման ժամանակաշրջանի գրականութեան կարեւորագույն թեմաները՝ ժողովրդի կուլտուրական տեղաշարժը՝ անգրագիտութեան վերացում, նորը տնտեսութեան մեջ և կենցաղում լայն արձագանք են գտել նաև ժողովրդական ստեղծագործութեան մեջ: Այս էտապի ժողովրդական բանահյուսութեան համար ընդորոշը մասսայական բնույթն է և տեղագրական լայն ընդգրկումը: Դա բացատրվում է ժամանակաշրջանի մեծագույն իրադարձութեան՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման նկատմամբ ունեցած մասսաների բուռն խանդավառութեամբ:

Վ. Ի. Լենինը իր աշխատութիւններից մեկում («Խնչպե՞ս կազմակերպել մրցութիւնը»), 1918 թ. գրել է. եթե կապիտալիզմի ժամանակ «Մրցութիւնը նշանակում է բնակչութեան մասնաճեղքի, նրա հսկայական մեծամասնութեան, աշխատավորների իննսունինը հարյուրերորդականի ձեռներեցութեան, եռանդի, համարձակ նախաձեռնութեան անլուր գաղանային ճնշում...», ապա «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցութիւնը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորութիւն տնտեսում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասնաշաղկապ չափով, իրոք աշխատավորների մեծամասնութիւնը ներգրավելու այնպիսի աշխատանքի տառարեղը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծախել իրենց ընդունակութիւնները, դրսեւորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ ազդեցութիւն

են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հաղար-
ներով ու միլիոններով¹։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս շրջանի ժո-
ղովրդական բանահյուսության հորինողներն ու կատարող-
ները՝ բանասացներն ու երգիչները ժողովրդական լայն
մասսաների ներկայացուցիչներ են—անգրագետ ու կիսա-
գրագետ գյուղացիներ, բանվորներ ու արհեստավորներ։
Մյուս կարևոր առանձնահատկությունը այս էտապի համար
ժողովրդական բանահյուսության ժանրային քաղաքանու-
թյունն է։ Այստեղ հանդիպում ենք բանահյուսության հին
ժանրերի՝ վիպերգի, հեքիաթի, ժողովրդական երգերի ու
խաղիկների դեղարվեստական տրագիցիաների կիրառում։
Սովետական ժողովրդական ստեղծագործության այս էտա-
պում, ինչպես Սովետական Միության բոլոր ժողովուրդ-
ների բանահյուսության մեջ, կենտրոնական հերոսը ամ-
բողջ աշխարհի ճնշված ժողովուրդների մեծ առաջնորդ
հանճարեղ Լենինն է։

Սովետահայ ժողովրդական բանահյուսության երկրորդ
շրջանն ընդգրկում է մեր երկրի տնտեսական և քաղաքա-
կան իրադարձությունները՝ հնգամյակների տարիները,
երկրի ինդուստրացումը, կոլեկտիվացումը, որոնց ընթաց-
քում սովետական ժողովուրդն արդեն ավարտում է սոցիա-
լիզմի կառուցումն ու թևակոխում կոմունիստական հասա-
րակարգի կառուցմանը։

Ժողովրդական բանահյուսության մեջ այդ իրադարձու-
թյունների արտացոլումը երևան է գալիս և որակ է կազ-
մում հատկապես 1929—1930 թվականներից, երբ մեծ ծավալ
է ստանում մասսայական կոլխոզային շարժումը։ Ինդուստ-
րացման ժամանակաշրջանի դեպքերը լայն արձագանք
չեն գտել սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ,
թեև կան, իհարկե, առանձին երգեր ու ոտանավորներ, նվիր-
ված էլեկտրիֆիկացիայի ուղղությամբ տարվող հսկայական
շինարարությանը և այլն։

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ բազմակողմանի ու լայն արձագանք է գտել կոլեկտիվացման ժամանակաշրջանը: Կոլխոզային երգերը հորինվում և տարածվում են նաև հետադայում, ինչպես Հայրենական Մեծ պատերազմի, այնպես էլ հետպատերազմյան ժամանակաշրջանում: Բայց այս էտապի կոլխոզային երգերը վերարտադրում են կոլեկտիվացման ժամանակաշրջանի առանձնահատկությունները, մասնավոր սեփականատիրական հոգերանությունից գյուղացու անցնելը կոլեկտիվ կյանքի, կոլեկտիվիստի հոգերանության: Կոլխոզային երգերը նույնպես մասսայական բնույթ ունեն և ավելի շատ են մոտենում բանահյուսությանը: Բազմաթիվ մոտիֆներով ու եղանակներով այդ ստեղծագործությունների մեջ փառարանվում է աշխատանքը:

Կոլխոզային երգերում պատկերվում են աշխատանքի նոր պայմանները, մեքենայացումը, նոր տեխնիկան, նրա մացրած հեղաշրջումը («Տրակտորի երգը», «Կոլխոզը» և այլն)¹: Նոր կյանքն ու աշխատանքի նոր պայմանները վերափոխել են մարդկանց բարքերն ու կենցաղը: Այս երգերում անդրադարձում են գտել նաև գյուղացու նոր կենցաղն ու առօրյան («Խինը գնաց, նորը եկավ», «Հին աղաթը» և բազմաթիվ այլ երգեր)²: Դրանց ստեղծողները գերազանցապես շարքային աշխատավորներ են, ժողովրդական մասսաների լայն խավերի ներկայացուցիչները, մեծ մասամբ անգրագետ ու կիսագրագետ: Հետաքրքրական է այն, որ կոլխոզային երգերը միապաղաղ չեն. այնտեղ կարելի է տեսնել երգիծական երգեր («Պիյան Խաչոն կոլխոզում», «Նախագան»), ինչպես և լիրիկական երգեր, պարերգեր և այլն:

Ինդուստրացիան և կոլեկտիվացման հաղթանակով Սովետական երկիրը թևակոխում է նոր ժամանակաշրջան. հեռաճանապարհային երկրից այն դառնում է զարգա-

¹ Հոյակական խորհրդային ֆոլկլորը, Երևան, 1938:

² Նույն տեղում:

ցած ինդուստրիալ-ագրարային երկիր: Տնտեսական այս խո-
շոր տեղաշարժերը արմատապես վերափոխում են նաև սո-
վետական ժողովրդի տնտեսական-կուլտուրական կյանքը,
սկսվում է աստիճանաբար կոմունիզմին անցնելու ժամա-
նակաշրջանը: Սովետական պետության ամրապնդման ու
հզորացման հանգեպ թշնամանքով են լցվում իմպերիա-
լիստական տերությունները: Արևմուտքում՝ ֆաշիստական
Գերմանիան, իսկ Արևելքում՝ իմպերիալիստական Ճապո-
նիան զավթողական պատերազմ են սկսում այլ երկրների
դեմ և այդպիսով աշխարհում սկիզբ է առնում երկրորդ
համաշխարհային պատերազմը: Սովետական Միությունը
ավելի է ամրացնում իր պաշտպանունակությունը: Հատ-
կանշական է, որ այս շրջանի ժողովրդական ստեղծա-
գործության մեջ մեծ նշանակություն է ստանում պաշտ-
պանական թեմատիկան: Գուսաններն ու լանատացները
տարբեր եղանակներով գովերգում են հերոսական Կարմիր
Բանակը:

Այս շրջանի սովետահայ ժողովրդական բանահյուսու-
թյան բնույթի մեջ էական փոփոխություններ են նկատ-
վում: Կյանքում տեղի ունեցած տնտեսական-կուլտուրա-
կան փոփոխություններն ու տեղաշարժերը չէին կարող
չազդել ժողովրդական ստեղծագործության պրոցեսի վրա:
Ահա թե ինչու այս շրջանի ստեղծագործությունների մեծ
մասը պրոֆեսիոնալ գուսանների և ժողովրդական վարպետ
երգիչների հորինածն է: Ժողովրդական բանահյուսության
տրագիցիան տեղի է ապրիս անհատական ստեղծագործու-
թյանը, հատկապես գուսանական գրականությանը: Այս
շրջանում աչքի են ընկնում հատկապես պրոֆեսիոնալ գու-
սաններից՝ Աշխույժը, Աթան, Հրկեզը, Նազուքը և շատ
ուրիշներ: Դրանց հետ մեկտեղ լայն ժողովրդականություն
են վայելում ինքնուս հորինողները: Ժողովրդական բանա-
հյուսության բնագավառին զուգընթաց բուռն ծավալում են
ապրում կիրառական արվեստներն ու երաժշտությունը:
Ժողովրդական բանահյուսության նկատմամբ հետաքրքր-

բուժյան բուռն վերելք սկսվեց 1934 թ., երբ սովետական
գրողների համամիութենական I համագումարում Ա. Մ.
Գորկին հարց բարձրացրեց ուսումնասիրել և օգտագործել
Փոլկլորը, Մեծ աշխատանքներ ծավալեցին ինչպես տրադի-
ցիոն Փոլկլորի, այնպես և ժամանակակից ժողովրդական
ստեղծագործությունը հավաքելու և ուսումնասիրելու հա-
մար։ Այդ տեսակետից խոշոր դեր խաղացին նաև պարբե-
րաբար կազմակերպվող ժողովրդական ինքնաստեղծագոր-
ծության ստուգատեսները և կիրառական արվեստի ցուցա-
հանդեսները։

Սակայն, հենց այս շրջանում ժողովրդական բանա-
հյուսության մեջ ծայր է առնում մի փնտսակար ու բացա-
սական երևույթ՝ կեղծիքը, որը տեսնում է բավականին եր-
կար ժամանակ։ Դա մարքս-լենինյան աշխարհայեցողությանը
և Կոմունիստական պարտիայի ոգուն խորթ անհատի պաշ-
տամունքի հետևանքն էր։ Ժողովրդական ստեղծագոր-
ծության մեջ խրախուսվում էր փառաբանությունն ու
մերկապարանոց պանեգիրիզմը, հաճախ անտեսելով ճշմար-
տությունն ու իրականությունը, բաղմակողմանի փառ-
ասերը։

Լույս տեսան բանահյուսական մի քանի ժողովա-
ծունեք, որոնց մեջ Կոմունիստական պարտիայի գոր-
ծունեություն և սովետական հասարակարգի ամրապնդ-
ման գործում Ստալինի պատմական դերը բացահայտող
ժողովրդական ու գուսանական երգերի («Բարով էրեք»,
«Խալի» և այլն) հետ մեկտեղ հանդես եկան նաև ստեղ-
ծագործական ունակություններից զուրկ ապաշնորհ ու
էպիգոն գուսանների բավականաչափ շինծու հորինվածք-
ներ, որոնք միապաղաղ ու միօրինակ եղանակներով մե-
ծարանքի ու փառաբանության փքուն խոսքերից զատ
ոչինչ չէին արտահայտում։

Ժողովրդական ստեղծագործության մեջ կեղծիքի ար-
տահայտություններից է նաև միջամտությունն ու պատ-
վերը։ Այստեղ էլ դարձյալ դեր է խաղացել անհատի պաշ-

տամուռքը: Այդ տեսանկյունից խմբագրվել ու վերանայվել են ժողովրդական ստեղծագործության մի շարք երկեր: Այդպես, օրինակ, սովետահայ ժողովրդական ստեղծագործության մեջ «խմբագրվել» է «Լենին փաշա» վիպերգը: Բավական է համեմատել 1936 թ. լույս տեսած «Լենինը հայ ֆոլկլորի մեջ» ժողովածուում տեղ գտած «Լենին փաշա» վիպերգի տեքստը 1938 թ. «Հայկական խորհրդային ֆոլկլորը» ժողովածուի տեքստի հետ և որոշակիորեն պարզ կգա՞նա այդ կեղծիքն ու աղավաղումը:

Բացահայտ կեղծիքից բացի, բացասական դեր են խաղացել նաև ժողովրդական բանահյուսության անվան տակ հավաքված ու հրապարակված ունարժեք, թույլ գործերը, որոնց հեղինակները ապաշնորհ էպիգոններ ու անտաղանդ հորինողներ էին: Այդ առավելապես վերաբերվում է ժամանակակից գուսանական (աշուղական) պոեզիային: Չնայած ժամանակակից գուսանների թիվը բավականին մեծ է, բայց պետք է ասել, որ նրանցից քչերն են ստեղծագործորեն զարգացնում ու հարստացնում գուսանական պոեզիայի անցյալից եկող լավագույն տրագիկաները: Ժամանակակից գուսաններից Աշխույժի, Հավասուռ, Աշոտի և մի քանի ուրիշների երգերը խոսքի ու երաժշտության կողմից աչքի են ընկնում ինքնատիպությամբ և զրա շնորհիվ էլ ժողովրդականություն են վայելում:

Բայց, ցավոք սրտի, ժամանակակից գուսանների մեծ մասը «գուսան» անվան տակ թաքնված անշնորհք ու անտաղանդ երգաստացներ են: Ժամանակակից գուսանների մեծ մասը հար ու նման ձեերով կրկնում են անցյալի գուսանական պոեզիայի մոտիվները՝ միևնույն էպիտետներով, միևնույն պատկերներով ու արտահայտություններով, իսկ հաճախ էլ աղավաղած ու գոհեկացրած: Ժամանակակից գուսանական պոեզիայի մեջ նկատվող այս բացերն ու թերությունները բխում են գեղարվեստական ցածր մակարդակից, վարպետության պակասից:

Բանահյուսական դիսկուսիայի ընթացքում հանդես

եկած որոշ ֆուլկլորագետների ու գրականագետների ժխտողական վերաբերմունքը սովետական ժողովրդական ստեղծագործության նկատմամբ հիմնվում է գլխավորապես այս կարգի գործերի վրա: Սովետական ժողովրդական ստեղծագործությունը բնութագրելիս անպայման պետք է հիմնվել իսկական ժողովրդական-գոլասանական ստեղծագործությունների վրա:

Սովետահայ բանահյուսության պատմության հաջորդ էտապը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանն է (1941—1945): Այս շրջանում Սովետական երկիրը համախմբվեց և դարձավ ռազմական միասնական լագեր: Ինչպես երկրի տնտեսական կյանքում, այնպես էլ իդեոլոգիական բնագավառում հիմնական լողունքը դարձավ «Ամեն ինչ ռազմաճակատին, ամեն ինչ հաղթանակի համար»: Այս մեծ նշանաբանով էլ ընթանում նաև սովետական գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը: Սովետահայ բանահյուսությունն այս էտապում արտահայտում է ժողովրդական մասսաների միասնական կամքը՝ ֆաշիստական բարբարոսներին ջախջախելու համար: Այդ միասնական տրամաբնությամբ են տոգորված՝ և՛ ռազմաճակատի մարտիկների մասին ստեղծված երգերը, և՛ թիկունքի մարդկանց աշխատանքային սխրագործությունները արտացոլող երգերը, և թե իրենց՝ զինվորների ստեղծած երգերը:

Ժողովրդական բանահյուսության մեջ մեծ տեղ են գրավում Սովետական Բանակին և նրա պանծալի զորավարներին նվիրված ձոները: Մասսայական բնույթ ունեն հերոսներին նվիրված երգերն ու ընդհանրապես հերոսության գովքը: Ուշագրության արժանի են նաև պարտիզաններին նվիրված երգերը: Պարտիզանական երգերը ավելի մեծ տեղ են գրավում ուղևորական ժողովրդական բանահյուսության մեջ, որովհետև պարտիզանական շարժումը ծավալվեց հատկապես օկուպացիայի ենթարկված տերիտորիայում:

Ռազմաճակատին համահավասար ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ լայն արտացոլում է գտել նաև թիկունքի մարդկանց աշխատանքը:

Ուշագրության արժանի է այն վաստը, որ հատկապես այս շրջանում մեծ ուժ է ստանում ժողովրդական երգիծանքը: Ժողովուրդը ռազմաճակատում ղենքի ու ծով, թիկունքում՝ հերոսական աշխատանքով և խոսքի միջոցով ֆիզիկապես ու բարոյապես ոչնչացնում է թշնամուն: Հատկանշական է, որ այս շրջանում հատկապես մեծ ծավալ ստացավ անցյալի բանահյուսության այնպիսի մի հին ժանր, որպիսին անեծքն ու պարսավանքն է («Անեծք Հիտլերին», «Փշի մաղով մաղվեա Հիտլեր» և այլն)¹: Կծու սարկազմ ունեն նաև այդ շրջանում լայն տարածում ստացած հակաֆաշիստական քառյակները:

Անդրադառնալով Հայրենական Մեծ պատերազմի շրջանի ժողովրդական բանահյուսության բնույթին, պետք է ասել, որ նորից աշխուժանում է բանահյուսության տրագիցիան: Լայն տարածում են ստանում ժողովրդական երգերը: Բազմաթիվ անհայտ երգիչների և հորինողների հետ հանդես են գալիս նաև պրոֆեսիոնալ գուսանները:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության հաջորդ էտապը հետպատերազմյան շրջանն է, որ սկսվում է 1945 թ.: Այս էտապի բնորոշ առանձնահատկությունը սովետական հաղթանակած ժողովրդի աշխատանքային բուռն պաթոսն է՝ պատերազմի հետևանքով երկրի ավերված շրջանների վերականգնման համար:

Հետպատերազմյան սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ առաջնակարգ տեղ են գրավում այն ստեղծագործությունները, որոնք ներկայացնում են սովետական ժողովրդի մեծ հաղթանակը գերմանական ֆաշիզմի դեմ: Հետաքրքրական է հետպատերազմյան սովետահայ

¹ Հայ աշուղներն ու հորինողները Հայրենական պատերազմի օրերին, Նրեան, 1943:

բանահյուսութեան մեջ հայրենադարձութեան մոտիվը: Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումից հետո Կոմսենիստական պարտիայի և Սովետական կառավարութեան անմիջական ջանքերով հնարավորութիւնն ստեղծվեց կազմակերպել արտասահմանյան տարագրութեան մեջ գտնվող հայ ժողովրդի տարբեր հատվածների ներգաղթը դեպի մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան: Հայրենադարձութեան այդ երգերը աչքի են ընկնում զգացմունքի անկեղծութեամբ ու ջերմութեամբ:

Սովետահայ ժողովրդական բանահյուսութեան մեջ լայնորեն արտացոլում են գտել նաև հետպատերազմյան միջազգային իրադարձութիւնները: Ժամանակակից ժողովրդական երգերում մասսայական բողոք ու ատելութիւն է հնչում պատերազմի հրձիգների դեմ: Խաղաղութեան համար մղվող մեծ շարժումը լայն արձագանք է գտել ժողովրդական մասսաների սրտերում և ազդակ է դարձել նրանց ստեղծագործական ուժերի ծաղկման: Այդ է պատճառը, որ այս շրջանի բանահյուսութեան մեջ մեծ քանակ են կազմում խաղաղութեան երգերը: Հետպատերազմյան շրջանի ժողովրդական բանահյուսութեան կատարողներն ու հորինողները մեծ մասամբ պրոֆեսիոնալ գուսաններն են և ինքնուրու բանաստեղծները:

Այս շրջանի ստեղծագործութիւնների մեջ բացակայում է բարբառայնութիւնը, զգացվում է միայն ժողովրդական լեզվի կոլորիտը: Բանահյուսութեան հին ժանրերը՝ վիպերգ, հեքիաթ, իսպառ բացակայում են, պահպանվում են միայն ժողովրդական երգերն ու խաղիկները:

Ինչպես Հայրենական Մեծ պատերազմի, այնպես և հետպատերազմյան շրջանի ժողովրդական բանահյուսութեան ամենակենսունակ և զարգացող ժանրը անեկդոտն է: Անեկդոտների շարքում հանդիպում ենք նաև անցենզուր հորինվածքների, բայց, ընդհանուր առմամբ, դրանք շատ կարևոր են ժամանակի քաղաքական, սոցիալական և կենցաղային իրադարձութիւնների բանահյուսական յուրահառուկ անդրադարձման տեսանկյունից: Յավոք, պետք է ար-

ձանագրել, որ մեզ մոտ հարկ եղած ուշադրութիւն չի դարձվում անեկդոտների հաւաքման ու հրատարակման աշխատանքներին:

Ժամանակակից ժողովրդական բանահյուսութեան հետ երբեք չեն մոռացվում տրագիցիոն բանահյուսութեան երկերը: Ուշագրավ է, որ մինչև օրս էլ ժողովրդի մեջ սիրով ունկնդրվում են էսոսը, ժողովրդական բանահյուսութեան մյուս ժանրերի ստեղծագործութիւնները:

Այսպիսով, սովետահայ ժողովրդական բանահյուսութեան պատմութիւնը մի ամբողջական պրոցես է, որը բաժանվում է զարգացման տարրեր շրջանների ու ենթաշրջանների: Բոլոր այդ էտապներում ժողովրդական ստեղծագործութիւնը հարադատորեն ծառայել է սովետական ժողովրդի շահերին և պատասխանել ժամանակաշրջանի կենսական հարցերին ու պահանջներին:

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սովետահայ ժողովրդական բանահյուսության բովանդակությունն են կազմում այն հիմնական թեմաներն ու մոտիվները, որոնք արտացոլում են հայ ժողովրդի սովետական շրջանի կյանքի իրադարձություններն ու երևույթները։ Բայց, իհարկե, կյանքի ոչ բոլոր երևույթներն ու իրադարձություններն են, որ ըստ էության արձագանքվել են ժողովրդական բանահյուսության մեջ։ Այսատալոր մասաների ուշադրությունը գրավել են կյանքում տեղի ունեցած կարևոր երևույթները, կենսական նշանակութուն ունեցող տեղաշարժերը։ Սովետահայ ժողովրդական ստեղծագործության մեջ կյանքի, իրականության դեպքերն ու պրոցեսները արտահայտված ենք գտնում ոչ թե կոնկրետ մանրամասնություններով ու ժամանակագրական ճշգրտությամբ, այլ նրանց էության հիմնական գծերի դրսևորմամբ։ Վերցնենք, օրինակ, Հոկտեմբերյան ուժեղացիայի և հայ ժողովրդի ազատագրության թեման։ Այստեղ չի կարելի գրտնել Հոկտեմբերյան ուժեղացիայի պատմական դեպքերի կապակցված ու պատճառաբանված անդրադարձումը, և կամ թե Հայաստանում քաղաքացիական կռիվների հաջորդական ընթացքն ու դարգացումը։ Բայց դրա փոխարեն այստեղ, ի դեմս Վլենին փաշա՝ փկերդի և Հայաստանում մղված քաղաքացիական կռիվներն անդրադարձնող մի շարք երգերի, տրված է Հոկտեմբերյան ուժեղացիայի պատմական դերի ու նշանակության գեղարվեստական ընդհանրացումը, ինչ-

պէս և ռեուլյուցիայի նկատմամբ աշխատավոր մասսաների ցուցարներած վերաբերմունքը:

Սովետահայ ժողովրդական բանահյուսութեան գաղափարական բովանդակութեան մեջ հասարակական կյանքի ու առօրյայի համապարփակ ընդգրկում չկա, և այդպիսին չենք էլ կարող պահանջել, որովհետեւ ժողովրդական բանահյուսութեանը սովետական շրջանում այս կամ այն չափով լրացնում է կյանքի գեղարվեստական վերարտադրութեանը. հիմնականում այդ գերը պատկանում է գեղարվեստական գրականութեանն ու արվեստներին: Այդ պատճառով էլ սովետահայ ժողովրդական բանահյուսութեան գաղափարական բովանդակութեան վերլուծութեան մեջ առաջ քաշված թեմաներն ու մոտիվները ամբողջովին չեն կարող բավարարել այն պահանջներն ու խնդիրները, որոնք առաջադրվում են սովետահայ գրականութեանն ու արվեստին:

Իսկ որոնք են սովետահայ ժողովրդական բանահյուսութեան գաղափարական բովանդակութեան հիմնական թեմաներն ու մոտիվները: Ամենակարեւոր ու հիմնական թեման սովետահայ ժողովրդական բանահյուսութեան մեջ, որ բաղմակողմանի և հարադատ արտացոլում է գտել, Հոկտեմբերյան ռեուլյուցիայի և հայ ժողովրդի ազատագրութեան թեման է, որը, ինչպէս նշել ենք, ազդակ է ծառայել ժողովրդական բանահյուսութեան բուռն ծաղկման: Այս կամ այն չափով սովետահայ ժողովրդական բանահյուսութեան մեջ անդրադարձում է ստացել կոլեկտիվ աշխատանքի թեման ու աշխատանքի մեջ մարդկանց նոր հարաբերութեանները՝ սովետական հայրենասիրութեան, ժողովուրդների բարեկամութեան և մի շարք այլ թեմաներ ու մոտիվներ: Ընդ որում, պետք է նկատել, որ հասարակական կյանքի տարրեր էտապներում տարրեր ուժով են հնչել այս կամ այն թեման ու մոտիվը:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՅԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՍՈՑԻԱԼ-ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավոր ժողովրդի ազատագրության գաղափարը անցյալի ժողովրդական բանահյուսության տարերքն է: Ազատ ու երջանիկ կյանքի մասին աշխատավոր ժողովուրդը երազել է հնագույն ժամանակներից սկսած՝ անգամ նախագահակարգային հասարակության պայմաններում ստեղծված հնագույն առասպելներում ու ավանդություններում, որոնք ֆանտաստիկական գույներով արտացոլում են մարդու պայքարը բնության արհավիրքների դեմ՝ հանուն ապահով ու բարեկեցիկ կյանքի: Այդ առասպելներն ու ավանդությունները իմաստավորվում, դասակարգային երանգ են ստանում, իհարկե, հետագա շրջանում: Այսպես, օրինակ, աստվածներից մարդկանց համար կրակ փախցնող հունական Պրոմեթևսը, նրա եղբայրակից վրացական Ամիրանը, անձրևարեր ամպերը ճեղքող վիշապաքաղ հայկական Վահագնը և ուրիշ ժողովուրդների դիցարանական շատ հերոսներ, ինչպես և մարդկանց հափշտակող աղետաբեր դեվերին ու ջրարգել վիշապներին ոչնչացնող ու երջանկության խորհրդանիշ հաղարան հավքը, անմահական ջուրն ու խնձորը ձեռք բերող հեքիաթային դյուցադները ու շքրջանում՝ մարդու կողմից մաքուր շահագործման պայմաններում, ընկալվում և դառնում են ճնշված ու տառապող աշխատավոր մասսաների իդձերն ու ակնկալությունները մարմնավորող հերոսներ:

Բայց ժողովրդական բանահյուսությունը պահպանել է սոցիալական պայքարի ստավել բացահայտ դրսևորումներ: Այդ տեսակետից մեզ առատ նյութ են տալիս էպոսը, բիլինան, ժողովրդական երգերը, առակը, առածն ու ասացվածքը, որտեղ սոցիալական անհավասարությունը և դասակարգային ներհակությունը ներկայացված են բազմազան ու հարուստ մոտիվներով և ամենաուր արտահայտություններով: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սոցիալական հարցը ժողովրդական բանահյուսության արմատական հարցե-

րից մեկն է։ Անտես առնել այն՝ նշանակում է աղավաղել ժողովրդական բանահյուսության էությունը։ Իր ժամանակին ծանոթանալով բուսական ժողովրդական բանահյուսության նյութերին, Վ. Ի. Լենինը ընդգծել է հենց այդ կողմը, խնդիր դնելով ժողովրդական բանահյուսության նյութերին «սոցիալ-քաղաքական տեսանկյունով նայելու» և այդ նյութերի հիման վրա ուսումնասիրություն գրել «ժողովրդական մասսաների ձգտումների և սպասելիքների մասին», այդ նյութերն օգտագործել սրպես «ժողովրդի հոգեբանությունից ուսումնասիրությունից կարևոր աղբյուր»¹։

Որքան էլ անցյալի բանահյուսության մեջ սոցիալական հարցը գիտակցվել ու անդրադարձում է ստացել, բայց, այնուամենայնիվ, հանդես չի եկել որպես կոնկրետ քաղաքական նպատակադրում ունեցող մոտիվ, այլ շղարշվել է ալլարանական-սիմվոլիկ քողով։

Սոցիալական հարցի դասակարգային գիտակցությունն ու ռևոլյուցիոն ըմբռնումը ժողովրդական բանահյուսության մեջ հանդես է գալիս կապիտալիզմի զարգացման, բանվորական շարժման ուժեղացման և պրոլետարիատի ռևոլյուցիոն աշխարհայացքի ձևավորման պայմաններում։ Խոսքն այստեղ արդեն վերաբերում է պրոլետարական, ռևոլյուցիոն ֆուկլորին։

Պրոլետարական-ռևոլյուցիոն ֆուկլորի լավագույն արտահայտությունը մասսայական-ռևոլյուցիոն երգն է, որը սերտորեն կապված է բանվորական շարժման, ռևոլյուցիոն ցույցերի ու միտինգների հետ։ Իրրե բանահյուսական ըստեղծագործությունն մասսայական-ռևոլյուցիոն երգը տարբերվում է անցյալի ժողովրդական տրագիցիոն երգից։ Ռեվոլյուցիոն-մասսայական երգի մեջ կա դասակարգային հստակ ըմբռնում և քաղաքական որոշակի նպատակադրում, բայց, միաժամանակ, այդ եղբը մասսայական է, այսինքն՝ ընդհանրացված ձևով արտահայտում է կոլեկտիվի տրամա-

¹ Вл. Бонч-Бруевич, Ленин о поэзии, «На литературном посту». 1931, № 4, стр. 4.

գրություններն ու տպրութիւնները: Ֆր. Էնգելսը մի կարեւոր գիտողություն ունի մասսայական-ռեւոլյուցիոն երգերի մասին. «Առհասարակ անցյալ հեղափոխությունների պոեզիան (միշտ բացառելով Մարսելյոզը), — գրում է Էնգելսը, — հաղվադեպ է հեղափոխական ազգեցություն ունենում ավելի հետագա ժամանակներում, որովհետեւ մասսաների վրա ներգործելու համար նա պետք է արտացոլի նաև մասսաների նախապաշարութիւնները»¹: Էնգելսի գիտողությունը մասսաների նախապաշարութիւնների մասին վերաբերում է կոլեկտիվի մեջ մշակված բմրոնութիւններն ու պատկերացումներին, որոնք կարող են հարազատորեն ընկալվել մասսաների կողմից և սգեւորել ու տրամադրել նրանց: Այդպիսի երգեր են «Մարսելյոզը», «Վարչապետական», «Խտերնացիոնալը» և այլն:

Ռուսական պրոլետարական-ռեւոլյուցիոն ֆուկլորը թեմատիկայի և գաղափարական հագեցվածության տեսակետից հարուստ ու բազմադան է: Մեծ տեղ են զբաղում այնտեղ ֆարրիկաների ու գործարանների բանվորական երգերը, որտեղ դժգոհությամբ ու բողոքով նկարագրվում է աշխատանքային ծանր պայմանները, բացահայտ ռեւոլյուցիոն տրամադրությամբ են տողորված քաղաքական աքսորյալների ու տաժանակրության դատապարտվածների երգերը, երգիծական երգերում ոչնչացնող սարկազմով է ծաղրըված ցարական արքունիքն ու բոնապետական ռեժիմը և այլն²:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիան առաջին անգամ աշխարհում հիմնահատակ կործանեց չահագործման բոլոր շրջաններն ու կապանքները և իրականացրեց աշխատավոր մասսաների դարավոր ձգտումներն ու

¹ Մարքսը և Էնգելսը արվեստի մասին, Պետհրատ, Երևան—Մոսկվա, 1934, էջ 358:

² Տե՛ս, „Русский фольклор“, хрестоматия, составил Н. П. Андреев, Москва—Ленинград, 1938. Б. П. Бирюков, „Дореволюционный фольклор на Урале“, Свердловск, 1936, „Фольклор Восточной Сибири“, составил А. Гуревич, Иркутск, 1938.

իղծերը սոցիալական ու քաղաքական ազատագրութեան մասին: Աշխատավոր ժողովուրդը կյանքի հատակից վեր բարձրացաւ և հասաւ քաղաքական բարձր ինքնագիտակցութեան: Կոմունիստական պարտիան հաղթանակով պսակեց ուսուցչիան. ջախջախիկօք օտարերկրյա ռազմական ինտերվենցիան: Պարտիան նորաստեղծ Սովետական իշխանութեանը դուրս բերեց տնտեսական ու քաղաքական ներքին դժվարութիւններէն շնորհիւ այն բանի, որ կարողացաւ կազմակերպել ու միավորել ժողովրդի կոլեկտիվ ուժը, հնաքամութիւնն ու ստեղծագործական նախաձեռնութիւնը:

Ուսուցչիայի շրջանում էնինք գրում էր. «Ռուսաստանն այժմ ետում է: Միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մարդիկ, որոնք քաղաքականապէս քնած էին տասը տարի, քաղաքականապէս տրորված ցարիզմի զարնուրէի ճընձմամբ և կալվածատերերի ու ֆաբրիկատերերի համար թափած տաժանակիր աշխատանքով, արթնացել են և դիմել քաղաքականութեան»¹: Հոկտեմբերյան ուսուցչիան բուռն բեկում առաջացրեց նաև մասսաների ներքին հոգևոր աշխարհում և անարգել ու անկաշկանդ հնչեց ժողովրդի գեղարվեստական ստեղծագործութիւնը: Այդ ստեղծագործութեան մեջ, ահա, առանցքային թեման դարձաւ Հոկտեմբերյան ուսուցչիան և աշխատավոր ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրութիւնը, որտեղ և արտահայտվեց մասսաների խանդավառութիւնն ու պաթոսը:

Հոկտեմբերյան ուսուցչիայի և աշխատավոր ժողովրդի սոցիալական ազատագրութեան թեման ժողովրդական ստեղծագործութեան մեջ արտացոլում է ստացել ինչպէս լիրիկական, այնպէս և վիպական ժանրերում: Մեծ տեղ են գրավում լիրիկական այն ստեղծագործութիւնները, որոնք անդրադարձնում են ուսուցչիան որևէ իրադարձութիւն և դեպք: Սովորաբար այդ ստեղծագործութիւնները ստեղծվել են պատմական իրադարձութիւնների շրջանում և տեղա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 55:

գրական-տերիտորիալ ընդգրկմամբ համապատասխանում են այդ իրադարձությունների ու գեղքերի կոնկրետ վայրերին (Խրկուտակ, Զրտա, Ներչինսկ, Շախտաման, Սուչան և այլ վայրեր)։ Այս կարգի ստեղծագործությունները Հոկտեմբերյան ռեուլյուցիայի մասին հյուսված՝ սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ չենք գտնում, մինչդեռ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և քաղաքացիական կռիվների վերաբերյալ նման ստեղծագործությունները բավականաչափ մեծ քանակ (են կազմում)։ Վիպական ժանրի երկերը (հեքիաթ, վիպերգ, զրույց, լեգենդ, առած և այլն) ավելի տարածված են ծայրամասային ժողովուրդների (հյուսիսի և հարավի ժողովուրդների) մոտ, որտեղ ավելի շատ ռեուլյուցիայի արձագանքներն ու տպավորություններն են արտացոլված, հաճախ էլ ֆանտաստիկ, հիպերբոլիկ գույներով։ Այս կարգի ստեղծագործությունների վրա զգալի ազդեցություն է ունեցել անցյալի բանահյուսական տրագիցիան։

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ, ինչպես վիպական, այնպես և լիրիկական ժանրերում Հոկտեմբերյան ռեուլյուցիայի և աշխատավոր ժողովրդի ազատագրության թեման անխզելիորեն կապված է Լենինի անվան հետ։ Հատկանշական է, որ այս փաստը բնորոշ է նաև Սովետական Միության մյուս ժողովուրդների բանահյուսությանը։ Լենինն է այդ ստեղծագործությունների կենտրոնական հերոսը։

Մասսաների կոլեկտիվ հանճարի իմաստությամբ ռեուլյուցիայի ամբողջ վեհությունը և դարերով տառապած աշխատավորության ազատագրման մեծ գաղափարը ժողովուրդը սիմվոլացրել է Լենինի կերպարի մեջ։ Ժողովրդական բանահյուսությունը բազմաթիվ օրինակներ է տվել, թե ինչպես ճախատագրական իրադարձությունների ու բախտորոշ գեղքերի ժամանակ ժողովուրդն իր ուժն ու էությունը իմաստավորել ու սիմվոլացրել է հերոսի հավաքական մի կերպարի մեջ։ Այս առթիվ Ա. Մ. Գորկին ճշմարտացիորեն գրել է, որ «...հերոսների ամենից ավելի

խոր ու պայծառ, գեղարվեստորեն կատարյալ տիպերը ստեղծել է ֆուկլորը, աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործությունը¹։ Էպոսը, հեքիաթները հետաքրքրական օրինակներով հաստատում են այն ճշմարտությունը, որ ժողովրդական ստեղծագործության դրական հերոսը ժողովրդի հավաքական ուժի մարմնացումն է։ Պատահական չէ, որ այդ հերոսների կերպարները անթերի ու ամբողջական են։ Լենինի կերպարի մեջ էլ ժողովուրդը բնագահն առնալով ու սխալվողացրած կերպով ներկայացրել է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հավաքական գծերն ու էությունը։ Միայն այն տարբերությամբ, որ եթե անցյալի բանահյուսության կենտրոնական-դրական հերոսը, գերազանցապես երևակայությամբ ստեղծված, ժողովրդի իղձերի ու պատկերացումների արդյունքն է, ապա Լենինի կերպարը իրական-պատմական հոգի վրա ստեղծված ռևոլյուցիոն կենսավորձի արդյունքն է։

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ ամենաբազմազան եղանակներով ու ելևէջներով միշտ անմիջական ու անկեղծ հնչում է ժողովրդի ձայնը. հաճախ դա անբռնադրոսիկ խոսակցություն է, ցանկություն ու բարեմաղթանք, հրճվածքի ու խանդավառության պոռթկում այն բոլոր բարիքների համար, որ պարգևել է Լենինը ժողովրդին։ Ժողովուրդը կյանքի բոլոր բնագավառներում տեսնում է Լենինին, զգում նրա հովանավոր ձեռքը և մրշտական հոգատարությունը։ Այս եղանակով է ժողովրդական ստեղծագործության մեջ պատկերվում հաղթանակած Հոկտեմբերյան ռևոլյուցիայի էությունը։ Ժողովրդական մի երգում, որը կրում է «Լենինի դաստանը» խորագիրը, ներկայացնում է ռևոլյուցիոն իրադարձությունների արձագանքներն ու տպավորությունները. «Հենց որ Նիկոլն բնկավ թախտեն, սահմանն ընցավ Լենինը», — ասվում է այդ երգում, և ապա յուրահատուկ պարզությամբ ու անմիջականությամբ, ժողովրդական կոլորիտով շարունակում ու-

¹ Մ. Գ ո Ր Կ ի, Գրական հրապարակախոսական հոգիածներ, Երեւան, 1949, էջ 283։

վոյշուցիայի ընթացքն ու դեպքերը պատմել Լենինի գործողութիւններին մեջ մարմնավորւած: Մի երգում հիշվում է նաև օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և նրա ջախջախման մասին. «...Ֆրանգ, ինգլիզներ էդ վախտը, զոշում քաշին եկան», Դենիկին, Վրանգել և այլն, Երուշէմիկն ամենի կտրեց վիզը»: Չի մոռացվում նաև երկրի ներքին վիճակի պատկերը, կոնտրռոկուցիոն խժդուկութիւնների և նրանց ջախջախման մասին. «մենշեիկ-կադետը հալա չէր մեռել, թունաւոր օձի պէս պաղել էր, սատեւ»¹:

Լենինի մասին հյուսված այդ երգերի մեջ ամբողջ ուժով հնչում է շահագործման դարավոր լծից ազատագրւած աշխատավոր մարդկանց հրճմանքն ու խանդավառութիւնը: Մարդիկ դարերի ընթացքում կրել են սոցիալական - քաղաքական ճնշման ծանր լուծը, ճաշակել և իրենց կաշվի վրա զգացել աշխարհում գոյութիւն ունեցող սոցիալական կարգերի անարդարութիւնը: Ռեուլուցիայի շնորհիվ հեղաշրջւել են հին աշխարհի կարգերը, իրականացել է աշխատավոր մարդկանց վաղեմի երազանքը՝ արդար ու երջանիկ կյանքի մասին: Ժողովրդական երգերում փառաբանվում է աշխարհի նոր կարգերը.

Պո, պո, պո, Լենին բարա,
 Խին աշխարը խարաբա,
 Շենցուցիր, շինիր արագ,
 Զուգսդի տունը բարբադ²:

Լենինն է աշխարհի այդ նոր «սարք ու կարգ» հաստատողը, նա «հաշխար շինեց խալսար», ժողովրդին ազատեց «դարդ ու ցավից»³.

Հոկտեմբերյան ռեուլուցիայի շնորհիվ կյանքում տեղի ունեցած այդ մեծ հեղաշրջման արդիւնքն այն եղավ, որ մեկընդմիջտ վերացավ սոցիալական անարդարութիւնը: Ժողովրդական երգերում զուգահեռներով վերհիշվում է անցյալը. «Բաարակը» վերնագիրը կրող երգում,

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, Երևան, 1936, էջ 109:

² Նույն տեղում, էջ 70:

³ Նույն տեղում, էջ 74:

օրինակ, անսքող գույներով ներկայացված է մասնավոր սեփականատիրական աշխարհում ապրող աշխատավոր հասարակ մարդու ողբերգությունը.

Սովից մեռան հերքո, մերքո,
էլ աշխարհում ով էր տերը...

Այսպես էր հին աշխարհում շահագործման դայլային օրենքը՝ մինչև որ աշխատավորը հավելյալ արդյունք չտա տիրոջը, ոչ ոք նրա մասին հոգ չի տանի: Այդ երգում պատկերվում է աշխատավորի չարքաշ կյանքը. քաղաքում նա ճխեղճ ու եթիմ՝ մնալով, տարին բոլոր մի փոքր հացի համար՝ նոքյար է դառնում հարուստի մոտ, «մեկել տարին վեց մահեթով հոտաղ է մտնում» մի կուլակի մոտ, և այսպես շարունակ... Ճամեն հասնող ինձ կղարկեր, չկար մեկը, որ ինձ փրկեր», — ասվում է երգի լիրիկական հերոսի բերանով: Երգի մասիվն ու տրամադրությունը զարգանում է որպես մի անհատի կյանքի պատմություն, բայց ըստ էության, դա գեղարվեստորեն ընդհանրացնում է շահագործվող ժողովրդի կյանքի պատկերը: Եվ այդ կյանքը հեղաշրջվում է միայն այն ժամանակ, երբ գալիս է Սովետը՝ փրկություն էլ բերելով հետը: Աշխատավոր, ճնշված ժողովրդին հովանավոր ու պահապան է կանգնում բուլճերի: Ժողովրդական բանահյուսություն մեջ տրտացույցվում է Կոմունիստական պարտիայի վե՛ր սկզբունքները, սովետական հասարակարգի ու պետական իշխանություն իսկական ժողովրդական էությունը.

Ձորա-դուռությունը վերչացավ, գնաց,
Աշխարհ տերը, հոբի ջան, քսիլը մնաց¹:

Ժողովրդական լիրիկական այդ երգերում լիասիրտ փառարանվում են Հոկտեմբերյան ռեոլյուցիայի շնորհիվ ստեղծված նոր կարգերը, շահագործման իսպառ վերացումը և ունեզրկողներին ունեզրկման ենթարկելը («Ջրվողին փրկեցիր, զրկողին՝ զրկեցիր»): Մեծարվում ու գովերգվում է ռեոլյուցիայի պարգևած բարիքները՝ ազգային, ռա-

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, էջ 115:

«այսպէս խտրականութեան վերացումը («Թշնամի աղգերը ընկեր շինեցիր»), կանանց իրավահավասարութեան հռչակումը («Լենու մասար մե ազատեց, կնիկ մարթերանց խալսըրեց») և այլն:

Ինչպէս տեսնում ենք, լիբիական այս երգերում արտացոլւած է աշխատավոր մարդկանց անմիջական զգացմունքներն ու տպավորութեանները, որոնցով էլ պայմանավորւած են այդ երգերի ժանրային բնույթը:

Լիբիական երգերից բացի, սովետահայ ժողովրդական բանահյուսութեան մեջ հայտնի են նաև էպիկական ժանրի ստեղծագործութեանները, որոնք լայն պլանով և գեղարվեստական խոր ընդհանրացմամբ վերարտագրում են Հոկտեմբերյան ուսուցչության և աշխատավոր ժողովրդի ազատագրութեան մեծ գաղափարները: Այս տեսակետից ուշագրութեան արժանի են «Լենին փաշա» վիպերգը և ժողովրդական մի քանի հեքիաթներ¹:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուսուցչական այնպիսի մի իրադարձութեան էր մարդկութեան կյանքում, որ չէր կարող անգրագործում չստանալ գեղարվեստական մեծ կտավի վրա: «Լենին փաշա» ժողովրդական հերոսական վիպերգը, էպիկական դույներով հյուսւած մի ամբողջական դրվագ է, որտեղ ուսուցչության պատմական դերն ու մեծագույն իրադարձութեանների էությունը արտացոլւել է վիպական պատկերներով ու գեղարվեստական սիմվոլիկ ընդհանրացումներով: «Լենին փաշա» հերոսական վիպերգը աշխատավոր ժողովրդի սոցիալական-ազատագրական դարավոր պայքարի խտացւած ընդհանրացումն է և այդ պայքարի հաղթական վախճանի գեղարվեստական արտացոլումը:

Ուսուցչական իր էութեամբ ու մասշտաբներով մի աննախնիմաց երևույթ էր, որի մեծութունն ու բացառիկ նշանակութեանը գեղարվեստորեն վերարտագրելու համար

¹ «Լենին փաշա» վիպերգը թարգմանվել է ռուսերեն և մտել «Творчество народов СССР» բանահյուսական ժողովածուի մեջ, հետադադում արժանանալով մի քանի հրատարակութեան:

աղատագրված ժողովուրդները գլխում են նաև հեքիաթային ժանրին:

Այսպես, օրինակ, հայկական ժամանակակից հեքիաթներում, որոնք առանձնապես մեծ թիվ չեն կազմում, Լենինը պատկերվում է որպես արտակարգ ուժի և կարողությունների դյուցազն. նա կարողանում է պայթեցնել ցարի ապարանքը և փախչել Չին-Մաչին: Եվ ինչպես հին հեքիաթներում է. լինում սովորաբար, Լենինը սիրահարվում է Չին-Մաչինի թագավորի գեղեցկուհի աղջկան, որին, ինչպես պարզվում է, սիրահարված է լինում ուսանան ցարի որդին: Լենինը փախցնում է սիրած աղջկան և կրթվելով՝ հաղթում ողոսական ցարին: Մի այլ հեքիաթում պահպանվել է կախարդական սյուժեներին բնորոշ գիծը. ողոսաց թագավորի կինը երազում տեսնում է, որ Միրիբում ծնվել է մի կրակ-կարմիր հսկա, որը պետք է խեղդի իր որդուն: Լենինի մայրն էլ երազում կանխապես է վերահաս վտանգը և որդուն վերցրած փախչում է, հեռանում Գերմանու թագավորի հողը: Գերմանու թագավորին էլ դարձյալ երազում զգուշացնում են, որ չգիտչի Լենինին, այլապես մեծ պատուհասի կհանդիպի:

Հեքիաթային տարրը և ֆանտաստիկ պատկերացումները տարածված են նաև ՍՍՌՄ ժողովուրդների այս շրջանի բանահյուսության մեջ: Էվենեյկական մի հեքիաթի մեջ, հարուստների գրգամամբ, որսորդ Դուրսենն ցանկանում է սպանել Լենինին Յ ուերլի նվեր ստանալու համար, բայց անտառի բոլոր կենդանիները խանդարում են նրան և կանխում աղետը:

Բոլոր այս գեղեքերում ժողովուրդը հեքիաթային ֆանտաստիկային և հիպերբոլիկ արտահայտչական միջոցներին գլխում է Լենինի մեծություները ցուցադրելու և նրան կատամար ունեցած երախտագիտություն և բացառիկ սիրո բարձր զգացմունքներն արտահայտելու համար: Նման հանդամանքները հաշվի առնելով, Մ. Գորկին մի առիթով շատ կարևոր բնահանրացում է անում, որ «...ֆուլկուրը մեր օրերին Վլադիմիր Լենինին բարձրացրեց հնություն առաս-

պելաղիան հերոսին՝ Պրոմեթեոսին հալածար բարձրության»¹։

Այժմ տեսնենք, թե ինչպիսի արտացոլում է գտել Հոկտեմբերյան ռեոլյուցիան և աշխատավոր ժողովրդի սոցիալական ազատագրության գաղափարը «Լենին փաշա» ժողովրդական հերոսական վիպերգում։ «Լենին փաշա» ժողովրդական հերոսական վիպերգի ստեղծման գործում մեծ դեր է խաղացել աշխատավոր մասսաների ռեոլյուցիոն կենսավորձը։ Եվ հատկանշական է, որ վիպերգում զարգացվող գործողություններն ու դեպքերը տրամաբանված են դասակարգային հոտակ գիտակցությամբ։ «Լենին փաշա» ժողովրդական վիպերգում նախքան բուն ռեոլյուցիոն իրադարձություններին անցնելը տրվում է հասարակության դասակարգային երկփեղկվածության իսկական պատկերը։ Գեղարվեստական այդ անդրադարձումը չունի անցյալի բանահյուսության այլարանական-ալեգորիկ շղարշը։ Մեր առաջ ամենայն խորությամբ ու անսքող դույներով ներկայանում է սոցիալ-դասակարգային այն անջրպետը, որ հասարակությանը բաժանում է երկու մասի. մի կողմում հարուստներն են՝ շահագործողները, իսկ մյուս կողմում աղքատները՝ շահագործվողները։ Այդ երկու դասակարգերի սոցիալական վիճակի և նրանց միջև գոյություն ունեցող հակամարտության պատկերը «Լենին փաշա» վիպերգում ցուցադրված է գեղարվեստական ընդհանրացնող գծերով։ Դարերով հին, մասնավոր-սեփականատիրական աշխարհում սրբադործված օրենք է եղել սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը։

Հաշիւրի մալ, գովլաթ զո զըմմեն մոտ զանդինաց.

կայր, զըկարողութեն, զո զըմմեն մոտ զանդինաց.

Վուսկի, զըմուլը, զո զըմմեն մոտ զանդինաց.

Ֆաղիրն ի, ըզուր էրկու տարտակ ձեռնիր...²

Վիպերգում ներկայացված է նաև այն ճշմարտությունը, որ անցյալում պետական իշխանությունը միշտ պաշտ-

1 Մ. Գ ո Ր կ ի, Գրական հրատարակատեսակային հոգվածներ, Երևան, 1949, էջ 293։

2 Լենինը հայ ֆոլկլորի մեջ, Երևան, 1936, էջ 129։

սլանել է շահագործողներին շահերը, և թեև շահագործողները հասարակության փոքրամասնությունն են կազմել, բայց ուժն ու զորությունը նրանց կողմն է եղել: Շահագործման սխտեմի, սոցիալական այդ անարդարությունն ու անհավասարության մերկացումը շատ անմիջական ու հստակ պատկերներով է ներկայացված «Լենին փաշա» վիպերգում:

Ձանդինաց ը սուլթանաց խոսի մեկ ի:

Ամա զարի վուր, անուհք քիչ են, հախկատ շատ ի:

Քիչ զըշատ կը տանջա, զանոս նաֆ կուտի:

Սիւահ ը կուվաթ անուս ձեռին ի:

Շահագործման այդ սխտեմը պահպանվում է բռնապետության ու դաժանության միջոցով: «Ձանդին տըփի նոքրու կլխուն, անել տա ըզուր պան», իսկ շահագործողներին վիճակված էր տառապանքն ու հալածանքը՝ «Հախկատ չարչըրվի, չարըշի, չուր տուս կա ուր ջան»:

«Լենին փաշա» վիպերգում ցարական ինքնակալության բնութագրումն աչնքան տիպիկ ու բնորոշ դերով է ներկայացված, որ վերջինս դառնում է ոմեն մի բռնակալական սխտեմի ղեղարվեստական, վիպական ընդհանրացում: Ժողովրդական ըմբռնմամբ ու ոճով ինքնակալության էությունը բացահայտող գործողությունները թվարկելով, վիպերգում զրանով իսկ պատկերվում է աշխատավոր հասարակ ժողովրդի տառապալից վիճակը:

...Քանի-քանի տրուհքտեր էր էրի էնի,

Քանի-քանի օջախներ էր մարե էնի,

Քանի-քանի ճժուկներ էր թոզե խիսճ-վուրվի,

Քանի-քանի մերեր-քուրեր սեվիր խաքած,

Քանի ջահե-ջիվան կնքտիր որփեվարի,

Քանի-քանի կը մխլըտին մըշ զնդանաց,

Քանի կտիվ, զըշամաթա սարքեց էնի,

Կ'ուզեր զ'աշխար-ալամ զավթի, իրմով էնի...²:

Վիպերգում պատկերավոր ձևով մերկացված շահագործման ու ճնշման դաժան ուժիմի հետ մեկտեղ ժողովուրդը չի

¹ Լենինը հայ ֆոկլորի մեջ, Երևան, 1936, էջ 130:

² Նույն տեղում, էջ 137:

մոռացել նաև ցարիզմի վարած քաղաքական հալածանքի
և իմպերիալիստական - զավթողական քաղաքականության
նշավակումը:

Սոցիալական անհավասարության ու անարդարու-
թյան պատկերը Տէնիսն փաշառ վիպերգից բացի, արտա-
ցելվել է նաև այս շրջանի ժողովրդական բաղմաթիվ ստեղ-
ծագործություններում: Ժողովուրդը սոցիալական իր վի-
ճակը ներկայացրել է շատ խորունկ ու իմաստալից գե-
ղարվեստական մի պատկերով:

Աշխարհը մե ծով էր
Մենք մեշը ծաբավ...¹

Այդ ստեղծագործությունների մեջ էլ արտացոլված ենք
տեսնում մի հիմնական ճշմարտություն, դա այն է, որ
մասնավոր սեփականատիրական աշխարհում հասարակա-
կան հարաբերությունների մեջ տիրապետող «մարդը մար-
դուն դալ» սկզբունքն էր:

Ուժեղը աշխարհը տիրել ա,
Զրկել, քանդել ավիրել ա,
Զուր անդորին կերել ա...²

«Աշխարհը դմակ, մարդը դանակ» հայտնի ժողովրդ-
գական առածը մի երգի մեջ փոխված ու ներկայացված է
այսպես՝ «Աշխարհը դմակ, հարուստը դանակ»: Ժողովրդա-
կան մի այլ երգում, որը կրում է «Շնգի զաման» (նոր ժա-
մանակ) անունը, ամբողջ սրությամբ և խստությամբ մեր-
կացվում է մասնավոր սեփականատիրական իրավակարգի,
ինչպես երգում է անվանվում, «քյոհնա զամանի» (հին ժա-
մանակի) պատկերը:

...կար մի կադան թաքավոր,
էրուն խմող բմբն օր,
է՛լ երանալ, նաչաւիկ,
Սաղ շունը ք կել աշխարք լիք,
է՛լ զլըավա, սլոքստավ,
Կլխներիս դառք ք ցավ:

¹ Լենինը հայ ֆոլկլորի մեջ, Երևան, 1936, էջ 86:

² Նույն տեղում, էջ 96:

Քոխվա, գզիր, ըսպոռչի,
 Լեանիկ, աղենա, քոմազչի,
 Է՛լ իրիսփոխ, է՛լ ժամխեր,
 Է՛լ քանդխուղա, է՛լ տերտեր,
 Ֆալչի, դառվուշ, դուքանչի,
 Է՛լ թիզ պաղոզ, է՛լ չառչի
 Էտ ժամ, էտ վանք, վարթըպետ,
 Սաղ թալանչի, ծեթ ը պետ¹:

Շահագործողները այս ամբողջ ոհմակը, սկսած գյուղական տանուտերից մինչև թագավորը, թալանում և կեղեքում էին աշխատավորին: «Տղատ ծնավ — տո՛ւ հա տո՛ւ, կնունք արիր — տո՛ւ հա տո՛ւ, մեռել մեռավ — տո՛ւ հա տո՛ւ», «Կալը ծեծիր — բը մեզի, բաղը քաղիր — բը մեզի, կովը կթիր — բը մեզի», և այդպես միշտ «գիշեր-ցերեկ՝ տո՛ւ հա տո՛ւ»²: Ժողովրդական ստեղծագործություն մեջ դատաւիտավում է մասնավոր սեփականատիրական իրավակարգի, պետական ու կառավարական սխտեմի կեղծիքն ու անօրինականությունը: «Իրավունքն էր խանչլի ծերը, մարդ բեզար էր իր ջանեն»³, — ասված է ժողովրդական մի երգում:

Սոցիալական անհավասարությունն ու անարդարությունն մերկացման հետ միասին, «Լենին փաշա» հերոսական վիպերգում, միաժամանակ, պատկերվում է մասսաների աճող դասակարգային պայքարը: Պատմական իրականություն համապատասխան ժողովրդական վիպերգը արտացոլում է դասակարգային հակառակությունների սրումն ու հասունացումը: Վիպերգում դա ներկայացված է ժողովրդական մի պատկերավոր արտահայտությունով՝ «Տանակ ոսկոտաց խասեր ի չխո...»: Մասսաների ուսուցչությունը պայքարը ղեկավարում է պատմական ասպարեզ բարձրացած բոլշևիկների պարտիան: «Լենին փաշա» վիպերգում յուրահատուկ վիպական եղանակով է ներկայացված աշխատավոր ժողովրդի բմբուռն ու պատկերացումը բոլշևիկների պարտիայի մասին.

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, Երևան, 1936, էջ 119—120:

² Նույն տեղում, էջ 120:

³ Հայկական խորհրդային ֆուկլոր, 1938, էջ 77:

Մասսար ըմ կեր, անուն ուր մալշուրիկ:

...Վով անունց խեա ի, զուր մալ կես կ'ենի խըտ ուրիշացի:

Պարզ ու հասարակ այս պատկերի միջոցով ներկայացված է բոլշևիկների դավանած հավասարության սկզբունքը: Հետաքրքրական է նաև այն, որ ժողովուրդը այս նույն գաղափարն արտահայտել է «բոլշևիկ» բառի ժողովրդական ստուգարանությամբ: «Բոլշևիկը» վիպերգում տառադարձված է՝ «մալշուրիկ» — որ նշանակում է մալ (ունեցվածք) — շուրիկ կամ շիրիկ (հավասար կիսող): Վիպերգում ժողովրդի պատկերացմամբ բոլշևիկմը ներկայացված է որպես մասաբ (հավատ), և որ Հենին անունը դինրաշին ի»: Հենինին հանդես բերելով որպես բոլշևիկների գլխավորը (դինրաշին), ժողովուրդը արտացոլել է պատմական ճշմարտությունն այն մասին, որ Հենինն է եղել բոլշևիկյան պարտիայի հիմնադիրը:

«Հենին փաշա» ժողովրդական վիպերգում բոլշևիկներին պարտիան իր էությամբ ու գործունեությամբ գեղարվեստորեն սիմվոլացել է Հենինի կերպարի մեջ: Եվ որովհետև ժողովրդական բմբունմամբ պարտիան ներհյուսված է Հենինի կերպարի մեջ, այդ պատճառով էլ նա հանդես է գալիս որպես զարգացող գործողությունների առաջմղիչ ու ղեկավարող ուժ: Հենինն է արտահայտում ժողովրդի սոցիալական ու դասակարգային պայքարի մարտահրավերը:

...Էնիկ թռավ ըզուր սուլթան ը հուքմաթի հիրես:

— Ես տը կսվիմ, ասից, տ'աղատիմ զհախկատ²:

Դասակարգային պայքարի այս կոչը տարրեր եղանակներով դրսևորվել է նաև ժողովրդական այլ երգերում, որտեղ արգեն խոսվում է հին աշխարհը շուռ տալու մասին: Հենինն էլ գլխավորում է աշխատավոր մասնաների դասակարգային մեծ կռիվը հին աշխարհը շուռ տալու համար:

«Հենին փաշա» ժողովրդական-հերոսական վիպերգում, այնուամենայնիվ, դեպքերի ընթացքն ու վախճանը որոշող

1 Հենինը հայ ֆուլիորի մեջ, Երևան, 1936, էջ 129:

2 Նույն սեղում, էջ 130:

հիմնական, գործող ուժը ինքը՝ ժողովուրդն է, ազատագրական մեծ կռիվ ելած շահագործվող մասսաները: Ուլքեր են վիպերգում ներկայացված այդ մասսաները՝ «հախկատ ֆոդարաքտիր, պանփուր, քասըր, խեխճ խզմաթ քարքիր» և ինչքան կան այդպիսիք: Լենինը, սրպես պարտիան մարմնավորող հավաքական կերպար, գլխավորում է մասսաների այդ պայքարը. Լենինը պայքարող մասսաների առաջնորդն է և ազատագրական այդ մեծ կռիվը վարում է իր զինակիցների օգնությամբ: Վիպերգում այդ առթիվ կարգում ենք.

Ըսխտին Լանին փաշեն խեծավ ուր ձին, քըշից.

Մյասլիկ փաշեն խեծավ ուր ձին, քըշից.

Այթարբեկ փաշեն խեծավ ուր ձին, քըշից.

Կալյին փաշեն խեծավ ուր ձին, քըշից.

Ղուկասըվ փաշեն խեծավ ուր ձին, քըշից.

Քամկից լե գժւ էրին Ֆաղիրաց օրգուն¹:

Ինչպես տեսնում ենք վիպերգում Լենինի զինակիցների շարքում հիշվում են Ա. Մյասնիկյանը, Գ. Այթարբեկյանը, Մ. Կալինինը, Ղ. Ղուկասյանը: Այս փաստից չի կարելի որևէ օրինաչափություն բխեցնել ու որոշակի եզրակացություն հանգել: Դարձյալ այստեղ ախանառես ենք ժողովրդական բանահյուսության տրագիցիային: Վիպերգն հորինող երգիչն ու այն տարածողները առաջնորդվել են անմիջական ապավորություններով ու քմբոնումներով, հավանաբար նկատի ունենալով ամյալ միջավայրի ու կոնկրետ տեղի պայմանները:

«Լենին փաշա» վիպերգի մեջ, ուրեմն, դեպքերի զարգացման ընթացքը որոշողը կոլեկտիվ ուժն է. այստեղ մենք գործ ունենք ստեղծագործության հերոսի՝ կոլեկտիվի հետ:

¹ Լենինը հայ ֆուկլորում, 1930, էջ 131: «Հայկական խորհրդային ֆուկլոր» ժողովածուի մեջ տպագրված (Երևան, 1958) «Լենին փաշա» ժողովրդական վիպերգի ընագրի մեջ կամայական աղավաղում է կատարված՝ վիպերգում հիշված Լենինի զինակիցները մի քանիսի անունները հանելով, իսկ ուրիշներինը ավելացնելով:

Անցյալի բանահյուսութեան մեջ կոլեկտիվը, որպէս գործող հերոս, հանդէս չի եկել: Այնտեղ տիրապետողը և իրադրութեաների ելքը վճռողը անհատ հերոսն էր (այդպէս է էպոսում, հեքիաթներում և որևէ այլ ժանրի ստեղծագործութեաններում): Այդ անհատը, սակայն, մարմնավորում էր կոլեկտիվի ուժը, նրա գիտակցութեանն ու վերաբերմունքը: Պատմական գործունեութեան ասպարեզ դուրս չգալով, ժողովուրդն իր փոխարեն ներկայացնում է անհատ-հերոսին: Եւ որպէսզի այդ անհատ-հերոսը կարողանա կոլեկտիվի ցանկութեանն իրագործի, նրան օժտում էր գերբնական ուժով: Ահա թե որտեղից է գալիս անցյալի բանահյուսութեան համար պարտադիր զանազան կախարդական առարկաներ ի հրաշագործութեան մոմենտը: Ժամանակակից ստեղծագործութեան մեջ ժողովուրդն արդեն քաղաքական ինքնագիտակցութեան է բարձրացել և, որպէս պատմական իրականութեան շարժիչ ուժ, որպէս ստեղծագործութեան հիմնական հերոս, ներկայացնում է աշխատավոր մասսաներին, սրոնց ղլխավորում է պարտիան, հանճարեղ անհատի՝ Լենինի առաջնորդութեամբ:

Հետաքրքրական է նաև հերոսի սոցիալական ծագման մասին եղած պատկերացումը: Որպէս կանոն, անցյալի բանահյուսութեան մեջ, ժողովրդի գրական հերոսները մեծ մասամբ իշխանական ծագմամբ ու տիրողոններով են ներկայացվում, թեև, ըստ էութեան, նրանք իրենց գործունեութեամբ ու վերաբերմունքով ժողովրդի շահերի արտահայտիչներն են: Բայց հենց այդ արտաքին հանգամանքն էլ ցույց է տալիս, որ շահագործման դարավոր լուծը ճգմել ու բթացրել է ժողովրդի ինքնագիտակցութեանն ու նրա աչքում նվազել է ինքնագնահատութեան մոմենտը: Նոր ստեղծագործութեան մեջ հասարակական-քաղաքական գործունեութեան ասպարեզ դուրս գալով, ժողովուրդը գնահատում է իր ուժն ու արժանիքները, և փոխվում են հին պատկերացումները ժողովրդի ինքնագնահատութեան մասին: Ահա թե ինչու Լենինը մեր նոր վիպերգում հանդէս է բերված որ-

պես բուն ժողովրդական ներքնախափերից ծագում առած մի հերոս:

«Լենինն փաշեն հախկտի մ'տեղե մ' էլը»:

Բայց վեսում մենք ախանատես ենք հին ու նոր պատկերացումների գուգակցման մի հետաքրքրական երևույթի: Այն հանգամանքը, որ Լենինը իր ծագումով ներկայացված է որպես աղքատի որդի, դա նոր գիտակցության արդյունքն է, բայց օգտագործելով ստեղծագործական հին տրագիկիան և ցանկանալով մեծարել ու դնահատել Լենինին՝ ժողովուրդը որպես բնութագրող էսկատոս՝ «փաշա» է անվանում նրան: Մինչև այժմ էլ ժողովրդի մեջ պահպանվում է այդ էսկատոսը, երբ ցանկանում են որևէ մեկին մեծարել և նրա արժանիքները դնահատել:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյոլուցիայի և քաղաքացիական կռիվների պատկերումը «Լենին փաշա» ժողովրդական հերոսական վիպերգում արմատապես տարբերվում են այն կռիվներից ու պատերազմներից, որոնք արտացոլվել են հին բանահյուսության ստեղծագործություններում: Անցյալի բանահյուսության մեջ ներկայացված կռիվները մեծ մասամբ աղգային անկախության և ինքնուրույնության համար մղվող ազատագրական կռիվներ էին. «Լենին փաշա» վիպերգում պատկերացված կռիվը դասակարգային կռիվ է: Այդտեղ դործում են անկախ ազգային պատկանելության երկու կողմ՝ ճնշողներ ու ճնշվողներ, «մի կողմ՝ հուլիսի, մի կողմ՝ ոսյաթ»: Վիպերգում համոզիչ ու ճշմարտացիորեն է բնութագրված դասակարգային այդ մեծ կռիվն մասնակից երկու կողմերը, նրանց ուժերն ու նպատակները, սոցիալական կազմն ու պատկերը:

Ահա շահագործվողների բանակը.

...Զրմեն էլ զրկված պանլորքտեր ին հախկատ.

Զրմեն էլ զրկված բոշաբքիբ ին հախկատ,

Զրմեն էլ զրկված անկուռծ, խեխճ, հախկատ...¹:

¹ Լենինը հայ ֆուկյորի մեջ, Երևան, 1936, էջ 132:

Դրանք բոլորն էլ «Հախշերի զուրկ, սիրտը վառված մարթեր» են, որոնք ունեն «մեկ սիրտ, մեկ խոքի»։ Ժողովուրդը դրանով ցանկացել է ներկայացնել շահագործվողների ու ճնշվածների բանակի սոցիալական շահերի միասնությունը։ Միանգամայն այլ պատկեր ունի շահագործողների, հարբստահարողների բանակը. «Հուքամթը» (իշխանությունը) քաշեց իր զորքն ու զորապետներին, «զանգիյքտեր» (հարուստները), բեկերն ու աղաները իրենց կարողությամբ են օգնության գալիս, իսկ օտարերկրյա իմպերիալիստները իրենց ռազմական ուժերն են տրամադրում միապետությանը։ «Լենին փաշա» վիպերգում, ինչպես տեսնում ենք, չի պահպանված դեպքերի ժամանակագրական հաջորդական զարգացումը. օտարերկրյա ռազմական ինտերվենցիան գուցակցված է ռեուլյուցիայի իրադարձություններին։ Վիպերգում բանահյուսական երանգավորմամբ է տրված ինտերվենտների անվանումը, ինչպես օրինակ, Ինգլիզը (Անգլիան), Ֆռանգսըղը (Ֆրանսիան), Ամբքյան (Ամերիկան), Ճայլունը (Ճապոնիան), Օսման-տաճիկ (Թյուրքիան), պատմական, իրական ինտերվենտների այս անուններին վիպերգում միացել են նաև ավանդական թշնամիների անունները՝ Մըսը-Հիսար, Աջամ-պարսիկ, Հարաշ-Ալման, որոնք դարերով ասպատակել են հայ ժողովրդին։

Եթե լենինյան բանակը իր սոցիալական շահերով ու կազմով միասնական է, ապա իմպերիալիստների բանակը աններգաշնակ ու խայտառղետ է. դրանց մի մասը փողով վարձված, մի մասը՝ «վախկոտ-ջանպահ», մի մասն էլ օտար-անձանոթ մարզիկ են։

Բոլորովին տարբեր է այս երկու բանակների նպատակը. լենինյանների՝ շահագործվողների բանակը, իր ազատագրության մեծ դործի՝ արդար նպատակի համար է կռվում, իսկ հարստահարիչների, իմպերիալիստների բանակի նպատակն է ճնշել մասսաների ռեուլյուցիոն ըմբոստացումը, հանուն շահագործման, հանուն կողոպուտի ու թալանի։ Լենինը արդար վրիժառությամբ լցված դեպի շահա-

գործողները, աշխարհի բոլոր ճնշվողներին ահազանդում և մարտական կոչ է ուղղում:

Ձարկեք, ծե դուշման փուչ էրեք,
կռվեք, ձե ազատութեն ձեռք պերեք...¹:

Մինչդեռ թագավոր-սուլթանը իր զորքերին խրախուսում է.

Ձարկեք, էտա չփլախ-չփլախ նախիրաց.
Ոն շատ կոտորի, անու կը տամ զըսաչ ք մինդալ:

Վիպերում ժողովրդի պատկերացումը հակառակորդի բանակի ներքին շահերի աններկաշնակության մասին արվարանում է. իմպերիալիստների և միապետության կողմից բռնությամբ հավաքած ու զինվոր դարձած գյուղացիներն ու բանվորները հրաժարվում են իրենց զրկված ու տառապած եղբայրների դեմ կռվելուց և անցնում են լենինյանների կողմը: Այստեղ էլ նկատում ենք պատմական ճշմարտությունը ցարական բանակի շարքերում եղած եղբայրացման գեպքերի մասին, որ ժողովրդական վիպերգում ներշնչվել է ընդհանուր գեպքերին և յուրատեսակ արտացոլում գտել:

Այն փաստը, որ միապետության ու իմպերիալիստների բանակը կռվում էր շահագործման ու հարստահարման կարգերի համար, իսկ լենինյանների բանակը ուներ ազատագրական արվարացի մեծ նպատակ,— հենց դա էլ սրուշում է դասակարգային այդ մեծ ճակատամարտի բախտը: Չնայած որ ինքնակալության ու ինտերվենտների ուժերը զինված էին առաջնակարգ տեխնիկայով, իսկ ռևոլյուցիոն մասսաները զուրկ էին այդ բոլոր միջոցներից, ինչպես որ պոեմում է ցույց տրված.

Ձանուհք ունին զրթով ք դուլլա, զըղումբարա,
Ատունք՝ քանի մ'փշտով թվանք, դարարինա.
Ձանուհք ունին մոսին մառտին, խըշո-հրացան,
Ատունք՝ պախ ք փոցխը եղան, շիշ, կերանթի.
Ձանուհք ունին զրպուլըմիտ, չարի ի ֆալաք,
Ատունք՝ ճպուտ, քար ք կոթթ, կացին, ուրաք...²:

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, Երևան, 1936, էջ 132:

² Նույն տեղում, էջ 134:

Ձնայած որ ուսուցիչներն մասսաները զուրկ էին նաև կենսական անհրաժեշտ շատ միջոցներից, այնուամենայնիվ, շահագործիչների, զրկվածների պայքարը հաղթական վախճանի է հասնում: Ժողովրդական վիպերգում հետաքրքրական ձևով է ներկայացված երկու հակառակորդ գասակարգերի այդ սուր բախումը: Դա իր նշանակությամբ մի ախտանական կոիվ էր, որ աշխարհում առաջին անգամ մրդվում էր աշխատավոր մարդու ազատագրության համար: Եվ ժողովուրդն էլ այդ մեծ պայքարի համար արտահայտչական համապատասխան միջոցներ է ընտրել: Վիպական հանդիսավոր ոճով է նկարագրված աշխատավորների բանակի մարտական երթը.

Աստվ, քեց հառեչ՝ ըզուր կարմիր բայրադ պռնած.

Անու էտվեն պանվուր կնաց խաղար-խաղար,

Անու էտվեն ոըշպար կնաց խաղար-խաղար...¹

Ռեուլյուցիոն մասսաները տարածվում են ամեն կողմ Վպոնին դաշխարհ, զըսար, զըքար, զըմմեն գեխեն: Եվ այնուհետև այս բոլորին հաջորդում է զորքերի բախման պատկերը.

Ջարկին, դարկվան, Լենին փաշի դորքը զոռից.

Ձո՛ւ քաշեցին, աչքը խփուկ հառեչ վազին.

Էլ չիրիշկին թոփ ը թվանք, զպոլլմիտ.

Դոշով պացին հերանց ճամփան մըչ էն զորաց.

Վուտքի տակ լաշ տապակ-տապակ կոխին, անցան.

Յոթ խառ դորնյեք, բնդներ, մեկը անցներ հառեչ.

Ջամդաք թափեր, քանց փայլզու խռիվ-խաղալ...²

Երկու կողմերի այդ անհղ կոտորածի ուժն ու մեծությունը ժողովրդական վիպերգում ներկայացված է մի սիմվոլիկ պատկերով.

«Մեկ դիյամաթ փոթավ, դաշխար գիպավ իրուրս:

Հարստահարված ժողովրդի հուժկու հարվածին չեն գիմանում ինքնակալության և ինտերվենտների զորքերը.

¹ Լենինը հայ Ֆրիկոթի մեջ, Երևան, 1936, էջ 133:

² Նույն տեղում, էջ 135—136:

Հուքմաթաց զուրք վուր մեկն ընդամ, վուր մեկ փախավ՝
Մըշ հաշխրին կորան, կացին, թողեր կորավ¹:

Աշխատավոր, շահագործվող ժողովրդի պայքարի այս միասնությունը, մասսաների ռեւոլյուցիոն խանդավառությունն ու բարձր մարտունակությունը բխում է այն հըստակ ու մեծ գիտակցությունից, որ նրանք պայքարում են իրենց ազատ կյանքի և երջանկության համար: Իր ժամանակին Վ. Ի. Լենինը խոսելով արթնացած մասսաների ռեւոլյուցիոն խանդավառության մասին, գրել է. «Երբեք չեն հաղթի այն ժողովրդին, որի մեջ բանվորներն ու գյուղացիներն իրենց մեծամասնությամբ իմացել, զգացել և տեսել են, որ իրենք պաշտպանում են իրենց, Սովետական իշխանությունը՝ աշխատավորների իշխանությունը, որ պաշտպանում են այն դուրը, որի հաղթանակը իրենց և իրենց զավակների համար կապահովի կուլտուրայի բոլոր բարիքներից, մարդկային աշխատանքի բոլոր ստեղծագործություններից օգտվելու հնարավորությունը»²:

«Լենին փաշա» ժողովրդական վիպերգում ներկայացված է նաև ռեւոլյուցիայի թշնամիների դեմ ցուցարկելու աշխատավոր մասսաների անողորմությունը: Այդ տեսակետից շատ բնորոշ և ուշագրավ է ցարի նկատմամբ կայացրած դատաստանի միջադեպը: Այդ միջադեպն էլ անշուշտ վիպական գույներով է ներկայացված, ինչպես և Լենինի ու ցարի միջև եղած խոսակցությունը: Յարը մեղա է գալիս Լենինի առջև, աղաչում, պաղատում է. «— Նս քո ոտաց մեռնիմ Լենին, մի սպանիր, հեյրան իմ քե, ձի խնայիր. կտոր ըմ խող տեւ ցանեմ զավուն, ըլնեմ բոստանչի»³: Լենինը չի խաբվում ցարի շողոմ խոսքերից, սուրը քաշում, զարկում է ցարի գլուխը. ժողովուրդը ցարի գլուխը ցցի հանած պտտեցնում է աշխարհով մեկ: Այս ամբողջ էպիզոդը տողորված է բանահյուսական, վիպական շնչով, բայց նույնիսկ այդ չափազանցված, հիպերբոլիկ-այլաբանական պատկերների տակ ներկայացված է իրականության

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, էջ 136:

² Վ. Ի. Լենին, Ներկեր, հատ. 29, էջ 386:

ճշմարտացի ընդհանրացումը, այսինքն՝ ռեուլյուցիոն մաս-
սաների արդար դատաստանը ժողովրդի զարավոր թշնա-
մու՝ ինքնակալության նկատմամբ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի
իրագարծությունների գեղարվեստական վերարտադրու-
թյունը «Լենին փաշտ» հերոսական վիպերգում ռեուլյու-
ցիայի հաղթանակով չի սահմանափակվում: Վիպերգում
ներկայացված է նաև Հոկտեմբերյան ռեուլյուցիայի շնոր-
հիվ ստեղծված նոր կարգերը: Աշխարհում առաջին սոցիա-
լիստական պետության հիմնադիր մեծ Լենինի անվան հետ
է կապված այդ նոր կարգերի ստեղծումը: Վիպերգը հարա-
վատորեն անդրադարձրել է պատմական ճշմարտությունը.

Լենին փաշեն մալուրիկի տրից դակուն.

Էրկրի կարք՝ վերուց, էրից կլոխն ի վեր:

...Էրկիր զբմենն կլոխ էտու պանվուրքերաց.

Էրկիր զբմենն կլոխ էտու ըորշպարաց,

Երկիր զբմենն կլոխ խէտու խեխճ նոբարաց¹:

Վիպերգի լեզվով ասած՝ «մալուրիկ» (բուլճեկիկ) զրած
«դակունը» սոցիալիստական իրավակարգն է, որտեղ իշխա-
նության գլուխ են կանգնած բանվորներն ու գյուղացի-
ները: Վիպերգում ներկայացված են նաև բանվորա-գյուղա-
ցիական իշխանության միջոցառումները, ունեզրկողների
ունեզրկումը — «էն առաչլա դանգիններաց էրից կատու»,
«...Ով զանգին էր, աղա ու բագ, տվեց կլխին», իսկ մյուս
կողմից՝ «էն առաչլա քասըրներաց էրից փաշա», նախկին
աղքատները, չորաններն ու նոքարները ուսում առացան,
առաջ քաշվեցին՝ «Զբմենն մեկ-մեկ տատավուր ին մըչ
գիվանին»:

Էրկիր հիստեց Լենին փաշեն

Թողից զբմենն ուրախ մարթեր.

Հաշատավուր առից ուր թեվի տակ...²:

Այսպիսով, «Լենին փաշտ» վիպերգը, ռեուլյուցիոն իրագար-
ծությունների պատկերման հետ միասին, յուրահատուկ ար-

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, Երևան, 1936, էջ 138:

² Նույն տեղում:

տահալալան Եղանակով ներկայացնում է նաև ուղղու-
ցիայի ստեղծած բարիքները:

«Լենին փաշա» վիպերգի վրա առանձնապես ուժեղ է
արտահայտվել էպոսի ստեղծագործական տրագիկոսյի աղ-
ղեցությունը: «Լենին փաշա» վիպերգի գեղարվեստական-
արտահայտչական բնորոշ գիծը էպոսին հաստով էպիկական
կրկնությունն է հիպերբոլիզմի սկզբունքն է: Պատկերների
հիպերբոլիզմը և վիպական կրկնությունները ինչպես էպո-
սում, այնպես էլ «Լենին փաշա» ժողովրդական վիպերգում,
էպիկական հանգիստավոր տրամագրություն են ստեղծում.
այսպես, օրինակ՝

«Սասունցի Դավիթ» էպոսից

... Զիերի ոտաց փռչին էլավ երգնուց երես.
... էղոնց զարկ-զարկոցից աշխարհ կռողզողար...
Կովան, զարկին, կոտորեցին,
Արնահեղեղ էլավ, լեշեր տարավ...

Ինչպես շուն մի ոռնա՝ դետին սլոթեց
Ինչպես քառսուն ջուխտ դոմեշներ լծես,
Դուծան վարես՝ դետին սլոթա,
Թող-դուստն երկեր-երկինք բռնեց,
Օր ու գիշեր էդ թող չիջավ գետնին¹:

«Լենին փաշա» վիպերգից

Զարկին, զարկվան, դուստն էլավ, հաշխար սլոնից.
Զարկին, զարկվան, լեշը փռվավ, տապալ-տապալ.
Ըստանվողաց արուն էլավ՝ կոսեց զդետ,
Էս արնագետ քար կլտորեր զըմանաքաշ...

... Լենին փաշի դուրքը թափավ քանց զըմուրիխ.
Քանց բհարու սել ը սելավ, դետ վարարած.
Քանց գուլանի վարար կարկուտ... զի՛նչ սլատուխաս.
Քանց զըծովու ֆոթունի սկես առդ ը ասման,
Քանց սամ կել... էրկինք, կետինք իրուր խառնվան...
Մեկ զիյամաթ փոթավ զաշխար զսլավ իրուր...²

¹ Սասունցի Դավիթ, Երևան, 1939, էջ 277:

² Լենինը հայ ֆուդլորի մեջ, 1936, էջ 135—136:

Այս զուգահեռները բալականին պարզորոշ կերպով ցույց են տալիս էպոսի գեղարվեստական-արտահայտչական արվեստի ներգործությունը «Լենին փաշա» ժողովրդական վիպերգի վրա¹:



Սովետական Միության ժողովուրդները, ինչպես և աշխարհի բոլոր ժողովուրդները, Լենինի կերպարի մեջ ընդգծել են աշխատավոր մարդու, հարստահարված ու տանջված մարդու իսկական պաշտպանի, հովանավորի, բնավորությունը: Եվ այդ բնավորությունը ամբողջական է: Ձկա ամենափոքր անգամ հակասություն Լենինի խոսքի ու գործի միջև: Լենինը իր մեծ գաղափարներով ու մտքերով լուսավորել է աշխատավոր մարդկանց ուղին և միաժամանակ ղեկավարել մասսաների ռուլյուցիոն կոնվը՝ հանուն ազատազրության ու երջանիկ կյանքի: Այդ իմաստով էլ ժողովրդական ստեղծագործությունների մեջ հավասարապես փառաբանվում է և՛ «Լենինի խոսքն ու ղրույցը», «խորհուրդն ու ղալամը», և թե՛ «Լենինի գործերը», «օրենքն ու ղակոնը», «կոլլսոզն ու կոմունը»:

Այն հանգամանքը, որ Լենինի գործը հարադատ է բոլոր ժողովուրդներին և որ Լենինը պաշտպանել է տառապած ժողովրդի շահերը՝ առանց ազգային խտրության ու տարրերության, ամեն մի ժողովուրդ իր ստեղծագործությունների մեջ Լենինին ներկայացրել է ազգային տրագիկայով ընդունված լավագույնի ու բարձրի, ընկալման արտահայտչական եղանակներով: Լենինի կերպարը Սովետական Միության ժողովուրդների բանահյուսության մեջ կրում է ազգային կոլորիտի որոշակի գույները, ըստ որում, այդ գույները

¹ Այսուհանդերձ, էպիկական արվեստի օգտագործմամբ «Լենին փաշա» վիպերգը էպոս չի դառնում: Այդ մասին մանրամասն ու հանգամանորեն տես «Լենինը հայ ֆոլկլորի մեջ», Երևան, 1936 թ. պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի ընդարձակ առաջաբանը և Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948 թ., № 5, Ա. Ղանալանյանի «Հայ ժողովրդի հերոսական ասքը Լենինի մասին և նրա ղրական մշակումները» հոդվածը:

էրբեք կոնտրաստ չեն ստեղծում, այլ ներգաշնակելով լրաց-
նում և ամբողջացնում են ամբողջ աշխարհի աշխատա-
վորութեան սիրելի առաջնորդ մեծ Լենինի տիտանական
կերպարի էութեանը, ստեղծելով, մի կողմից՝ Լենինի մարդ-
կային բնավորութեան կոնկրետ ու որոշակի գծերը, իսկ
մյուս կողմից՝ ռիմովուիկ աշխարհական գծերով բնական-
բացնելով Լենինյան վեհ գաղափարները, Լենինի մեծ դորժը:

Ժողովրդական բանահյուսութեան մեջ Լենինի կեր-
պարը աչքի է ընկնում հատկապես ընդգծված գեղարվես-
տական արտահայտչական երկու կողմով, մեկը՝ Լենինի
կերպարի մեջ դուշագոյնական, հերոսական, նույնիսկ հե-
քիաթային բնավորութեան դիմ է, մյուսը՝ սովորական
մարդկային-առօրեական բնավորութեան գիծը: «Լենին փա-
շա» լիպերգի մեջ Լենինն իսկական մի հոկա է, որ ահ ու
սարսափ է պատճառում թշնամուն: Ժողովրդական մի երգի
մեջ էլ Լենինը պատկերված է որպես մի «քաջ իգիթ», որին
օգնական է կանգնած ամբողջ բանակը. նա հրեղեն ձին հե-
ծած՝ ջարդ ու փշուր է անում թշնամուն.

Լենի խեծով ուրան զոաթ
Սաղ հաշխար էնու մնաց մաթ.
Նիկոլի, բուրջըլի մեչը,
էցկեց զուլում ք զիամաթ¹:

Ժողովրդական ստեղծագործութեան մեջ Լենինի կեր-
պարի դուշագոյնական-հերոսական բնավորութեանը ընդգը-
ծելու համար նրան համեմատում են պատմավիպական հե-
րոսների հետ, ինչպիսիք են՝ Ռոստամ Զալն ու Ալեքսանդր
Մակեդոնացին.

Ու Ռոստամի Զալ Լենի,
Ըսկանդար-գուլգուր Լենի,
Հաշխարի փրկիչ Լենի,
Մեզի ազատիչ Լենի²:

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, 1936, էջ 89:

² Նույն տեղում:

Լենինի կերպարի այս գյուցազնական-հերոսական ընա-
վորության գիծը պատահական չէ, և ոչ էլ էֆեկտի ու ար-
տաքին տպավորության համար է ստեղծված: Ժողովուրդը
խորապես գիտակցում է Լենինի և բոլշևիկների գործի վե-
հուժյունն ու տիտանական նշանակությունը: «Լենի խին
հաշխար շուռ իսկ» — ասվում է ժողովրդական երգում: Եվ
ժողովրդական տրամաբանությամբ, ժողովրդի երևակայու-
թյամբ «հաշխարհի փրկիչ Լենինը» չի կարող լինել սոսկ
որպես սովորական մահկանացու: Նա մի արատսովոր հսկա-
գյուցազն է ոչ միայն իր ֆիզիկական ուժով ու արտա-
քինով, այլ նաև խելքով ու էությունով: Այդ իմաստով էլ
Լենինը ժողովրդական բանահյուսության մեջ ներկայաց-
ված է որպես իմաստուն մարգարե՝ «Տու ես մեծ մարգա-
րե, փրկող ամենքիս», — Բինչ ասեց Լենին, հոգի ջան, պո-
լոր կատարվեց», — ասված է ժողովրդական երգում:

Ժողովուրդը միաժամանակ Լենինին ներկայացնում է
պարզ ու հասարակ, մարդկային սովորական բնավորության
գծերով: Լենինի կերպարի մեջ ժողովուրդը հատկապես դար-
գացրել է մի մոմենտ, որը չենք տեսնում անցյալի բանա-
հյուսության մեջ: Դա հերոսի բնավորության մեջ ղեկա-
վարի, առաջնորդի և շարքային մարդու հատկանիշների
ներդաշնակությունն է: Ժողովրդական բանահյուսության
մեջ շատ հարադատորեն է անդրադարձել Լենինի խորապես
մարդկային էությունը: Լենինը հոգեբանությամբ ու ամ-
բողջ էությունով ժողովրդի մարդն է. նա ժողովրդասեր է բա-
ռիտ ամենաաղյան հասկացողությամբ: Բոլոր պարագաներում
ու հանգամանքներում Լենինի ուշադրության կենտրոնում
աշխատավոր ժողովուրդն է, նրա հետաքրքրության, մտա-
հոգության օրյակից աշխատավոր մարդն է՝ իր առօրյայով
ու ապագայով: Լենինի կերպարի համար ամենաբնորոշ գիծը
նրա խոր մարդասիրությունն է:

Բարի, մարթասեր, անկեղծ էր,
էհտիքարով էր Լենինը...¹

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, 1936, էջ 92:

՝ Լենինը Շշատ հոգսեր քաշեց անհամար», «խավար աշխարհին մի լուս դուռ բացեց», «Լենին հաշխար շինեց դրախտ», և այսպես Լենինը ամենուրեք աշխատավոր . ժողովրդի շահերի պաշտպան է հանդես գալիս՝ «Զքավորի պաշտպան Լենին...», «Դու խեղճի պախտպան Լենին...», «Բասիր-քուսուրի գու խամխար Լենին» (116, 118), — ահա այն բնութագրումները, որ տալիս են ժողովրդական երգերում Լենինի մարդասիրությունն ու հոգատարությունը ցուցադրելու համար:

Լենինի կերպարի գեղարվեստական մարմնավորումը ամբողջաբան է նրա մարդկային հոգերանության ու բնավորության բարեմասնությունների մանրադնին ցուցադրմամբ: Ժողովրդի իմաստուն ընկալումն ու ամենատես աչքը չի վրիպել ամենափոքր մանրամասներն անգամ: Ժողովրդական գիպուկ արտահայտություններով ներկայացված է Լենինի բնավորության պարզությունն ու շիտակությունը, համարձակությունն ու անմիջականությունը: Լենինը ժողովրդական մի երգում համեմատվում է բազեի հետ՝ «Լենի էկավ ինչը լս պաղե...» (61), մի այլ երգում կարգում ենք.

Անունը պայծառ ու մեծ էր,

Լուս տվող կրակ ու բոց էր...

Հիացմունքով ու գործմանքով ժողովուրդը երգում է. «Մեր անկեղծ Լենին, դու մեր մեծ Լենին...»: Ժողովրդական երգերում ներկայացվում են նաև Լենինի բնավորության մյուս գծերը՝ արգարադատությունը, գթաստությունը, բարեսրտությունը, նուրբ ու զգայուն վերաբերմունքը՝ «մեծ հոգի էր, խղճով բարի...», «Արև ծաթեց ամբի ծերեն, Լենին մեզի էկավ տերեն», «Մեզ փրկիչ Լենին, ադատիչ Լենին», «Էնիկ մեզի հույս ու ճար ի», «Մեր Լենին էր ոսկի պերան», «Լենինի խոսքերը մեկ-մեկ անգին քար...» (89—92): Ժողովրդական ստեղծագործության մեջ արտացոլում է գտել նաև Լենինի բնավորության խոր համեստությունը: Ժողովրդական մի երգում շատ խորիմաստ

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, 1936, էջ 92:

կերպով Լենինը համեմատված է լուսատու. ճրագի հետ
«Մեկ խառ պայծառ ճրագ ի» (85):

Մեծ Լենինի գեղարվեստական կերպարը ժողովրդա-
կան ստեղծագործության մեջ մի ուրիշ կարևոր առանձ-
նահատկություն ունի: Դա Վ. Խ. Լենինի անձնավորության
նկատմամբ աշխատավոր լայն մասսաների, ժողովրդական
դանդիվածների սիրո և համակրանքի արտակարգ ջերմու-
թյունն ու քնքշությունն է: Այդ սերն ու համակրանքը
Լենինի նկատմամբ հասնում է անձնագոհության զգաց-
մունքի բարձրության: Հատկանշական է, որ ժողովրդական
երգերում շատ տարածված են այն արտահայտությունները,
որոնք և ժողովրդի մոտ բնութագրում են նրա զգացմունք-
ների ու ապրումների բարձրակետը: Այդ արտահայտու-
թյունները իսկական ժողովրդական ծագում ունեն, ինչպես
օրինակ՝ «մատաղ լինեմ», «մեռնեմ», «ջան» և այլն: Բե-
րենք մի քանի նմուշներ Լենինի նկատմամբ ցուցաբերվող
ժողովրդական մեծ սիրո ու համակրանքի այդ բնորոշ ար-
տահայտություններից՝ «Ընեմ Լենինի մատաղը», «Ես
մեռնեմ Լենու գալիսին», «Էնու ջալա՜նի ջանին դուրբան»,
«Մեռնեմ Լենու կանոնին», «Մեռնեմ Լենու սրֆաթին»,
«Անունիդ մեռնեմ Լենին ջան, ջան», «Մեռնեմ Լենու մո-
րուսին, բուսաթին, բոյին ու բաժին», «Մեռնեմ մեր Լե-
նու խոքուն», «Վա՛յ Լենինի ջանին մատաղ», «Պատկերիտ
մատաղ, Լենին ջան, պատկերիտ» (66, 71, 86): Ինչպես
տեսնում ենք, ժողովուրդն այստեղ գրվատում է Լենինի և՛
արտաքին կերպարանքը, և՛ ներքին բարեմասնությունները:
Բոլոր գեպքերում Լենինի նկատմամբ ցուցաբերվող համա-
ժողովրդական այդ մեծ սիրո աղբյուրը աշխարհը հեղաշըր-
ջող Լենինի մեծ գործն է, Կոմունիստական պարտիայի
ստեղծումը և Հոկտեմբերյան ռեյոլուցիայի իրականացումը:

Համաժողովրդական այդ մեծ սերն ու համակրանքը
Լենինի նկատմամբ տեսնում ենք նաև նրա մահվան առ-
թիվ ստեղծված երգերում: Անհուն ու խոր է մասսաների
վիշտը: Լենինի մահը, ինչպես ասված է հայկական մի եր-
գում՝ «պատճառեց աշխարհին մեծ շիվան ու լաց»: «Հա-

զար ափսոս մեռար, դու մեր լավ Լենին», — կարդում ենք մի այլ երգում։ Համաժողովրդական այս վիշտը ժողովրդական երգերում արտահայտված է նույնպիսի անմիջականությամբ ու անկեղծությամբ։

Ընկեր Լենինը, ընտիր Լենինը,

Մեր տեր Լենինը, հոգի ջան, ինչի՞ պակասեց...

Այսպիսի բազմաթիվ երգերում ու ոտանավորներում ժողովուրդը դրսևորում է իր զգացմունքներն ու ապրումները, խորհրդածություններն ու մտքերը։

Լենինի կերպարի գեղարվեստական բնութագրման համար շատ կարևոր են ժողովրդական ստեղծագործության գեղարվեստական արտահայտչական միջոցները։ Դրանցից ուշագրավ են Լենինին արվող էպիտետները։ Այդ էպիտետներից են, օրինակ՝ փրկիչ, ազատիչ, մեծ, անկեղծ, անուշ, կարմիր և այլն։ Այս էպիտետները պատահական անվանումներ չեն և ոչ էլ միայն մեծարանքի խոսքեր։ Դրանց միջոցով ժողովուրդը ընդհանրացնում և բնութագրում է Լենինի էությունը։ Ջրավականանալով այդ էպիտետներով, ժողովուրդը Լենինին սիմվոլացնում է բնության այնպիսի երևույթների միջոցով, որոնք իր պատկերացմամբ հանդիսանում են գերազանց աստվելությունն ու բարիքը։ Ժողովրդական երգերում Լենինը համեմատվում է լուսնի, արևի, լուսավոր աստղի հետ՝ «Մեր Լենինը մեկ լուս ի...», «Լենի շափմաղ քանց արև...», «Դանց լուսավոր տոտղ...» (95) և այլն։ Գեղարվեստական արտահայտչական այս միջոցներով ժողովուրդն, ըստ էության, հավերժացնում է Լենինին՝ իր անմահ ու մեծ գործի մեջ։ Շատ բնորոշ է այս տեսակետից թաթարական ժողովրդական մի երգ («Ծովը հատաչում էր...»²), որտեղ Լենինը իր հավերժությամբ համեմատվում է վեհապանծ Այուլ-գաղ լեռան հետ։

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, էջ 99։

² Այդ երգը մեծ վարպետությամբ հայերենի է փոխադրել ժողովրդական բանաստեղծ Ա.վ. Իսահակյանը, տես Երկերի ժողովածու, հատ. II, 1950, էջ 204։

Սովետական ժողովրդական բանահյուսության մեջ Հոկտեմբերյան սեպտեմբերյան հետ միասին գեղարվեստական անդրադարձում է գտել նաև սովետական կարգերի հաստատման համար Ռուսաստանի բաղմազգ ժողովուրդների միած հերոսական պայքարը: Այդպիսի ստեղծագործությունների թիվը բավականին մեծ է. հիշենք զբանցից մի քանիսը՝ ավարական «Հերոսի մահը», զաղախական «Ջիգիտ Մակիշ», կիրգիզական «Կարմիր Բանակի կոկիլը Դեմլյատմանտի և Էնվեր վաշայի դեմ», վիպերգները, դադրատանյան «Հաղթանակ», կարարգական «Կովկասի ազատարարներին», ազրբեջանական «Կարմիր ասկեր», հայկական «Ռուբենի երգը» վիպական փոքր երգերը և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Այդ երգերի ու վիպերգների մեջ երևում է ոտքի ելած աշխատավոր մասսաների հերոսութունն ու անձնագոհությունը՝ իրենց ազգային ու սոցիալական ազատագրության մեծ գործի համար: Հիշյալ ստեղծագործությունները պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն ունեն, որքանով որ արտացոլում են իրական-պատմական շատ դեպքեր ու էպիզոդներ: Բաղմազգ ժողովուրդների այդ ստեղծագործություններում աչքի է ընկնում մի մոմենտ, որը համահնչուն ու ընդհանուր է բոլորի համար: Դա աշխատավորական լայն մասսաների երախտագրություն և սիրո բուռն զգացումն է Կոմունիստական պարտիայի, որն էլ ժողովրդի և քաջարի Կարմիր Բանակի նկատմամբ:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ Հայաստանում սովետական կարգերի համար մղված քաղաքացիական կռիվների թեման ու մոտիվները կարևոր տեղ են զբաղում: Հոկտեմբերյան սեպտեմբերյան հնարավորություն տվեց իրականացնել հայ ժողովրդի դարերով երազած ազատագրությունը: Իր բաղմազարյան պատմության վերջին այդ շրջանում, երբ Հայաստանը գտնվում էր գաշնակ ավանտյուրիստների անփառունակ տիրապետության տակ, հայ

Ժողովուրդը օրհասական, ծանր վիճակ էր ապրում: Անտար-
քեր դեպի ժողովրդական մասսաների անելանելի վիճակը,
դաշնակցական «կառավարությունը» և նրա եվրոպական
«խնամակալներն» ու «հովանավորները», ստոր դործարքնե-
րի մեջ մտնելով, ցանկացան հայ ժողովրդի բախտը հանձ-
նել թյուրքական ջարդարարների և գերմանական իմպե-
րիալիստների տնօրինությանը:

Մրանով պետք է բացատրել ժողովրդական բանահյու-
սության մեջ գրեթե անբացահայտ համաժողովրդական բուռն ցն-
ծությունը բոլշևիկների, ուսում ժողովրդի, Լենինի ուղարկած
գործի՝ Կարմիր Բանակի նկատմամբ, որոնց օգնությամբ
հայ ժողովուրդը փրկվեց օրհասական այդ ծանր վիճակից:
Մյուս կողմից՝ այդ ստեղծագործություններում ամբողջ ու-
ժով արտահայտված է աշխատավոր մասսաների նողկանքն
ու ատելությունը դաշնակների և նրանց «կառավարության»
նկատմամբ: Մի շարք երգերում անսքող գույներով ցու-
ցադրված է դաշնակների պատճառած ավերածությունն ու
սովը Հայաստանում. մի երգի մեջ ասվում է.

Նիկոլի վախճանը զաթի քաղցած,
Ձուր եկավ դաշնակն անաստված,
Էն էլ թալեղ, բան չմնաց.
Սավետն եկավ, դալուն դուրբան՝:

Թալան ու կոտորած, — ահա դաշնակցականների «գոր-
ծունեության» անկեղծագործ զգեստը: Ժողովրդական մի եր-
գում, օրինակ, նկարագրված է Դավաբոյի կոտորածը, թե
ինչպես «անխիղճ, անաստված խմբապետները» շատ անմեղ
մարդ կոտորեցին, հաշվի չառնելով ոչ ձերերին, ոչ մանուկ-
ներին.

Սարեր ու քարեր ոխպացին,
Քանի՜ մերեր նստան, լացին,
Ա՛խ, մեր բալեք ուր դնացին²...

Ահա թե ինչու ժողովուրդն ամենուրեք նզովքով ու
ատելությամբ է խոսում ռուս, թալանչի, գեղ-գաղան՝ դաշ-

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, 1936, էջ 107:

² Հայկական խորհրդային ֆուկլորը, Երևան, 1938, էջ 72:

նակներն մասին: Ընդհանրացնելով մասսաների վերաբերմունքը, ժողովրդական երգիչը ժողովրդական ոճով ու ոգով ներկայում է դաշնակներին:

Վե՛յ ձե գնալ բնի, գալ չբնի,
Թո՛ւ ձե մի խոշ իղբալ չբնի¹:

Ժողովրդական մի ալլ երգի մեջ, նկատի ունենալով դաշնակների պատճառած ավերածություններն ու թալանը, կոտորածներն ու անօրենսությունները, դիպուկ բնութագրովում է դաշնակների վարքագիծն ու էությունը՝ «դաշնակ հաշխարի ապականն էր», Այս սպանիչ բնութագրմամբ ժողովուրդը դաշնակցությանը ջնջում ու ոչնչացնում է որպես պարագիտ, ավելորդ տարր հասարակության մեջ:

Ժողովրդական բանաստեղծության մեջ արտացոլված ենք գտնում Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված քաղաքացիական կռիվների տարրեր էտապները: Մի քանի երգերի մեջ վերարտագրված են 1920 թ. մայիսյան ապստամբության իրադարձությունները և դաշնակների դաժան կոտորածները («Ղուկաս Ղուկասյան»): Առավել լայն տարածում է գտել նոյեմբերյան հաղթական ապստամբության դեպքերը և դաշնակների փախուստն ու անփառունակ վախճանը: Այս երգերում ժողովուրդը փառաբանում է ռեյսուցիոն, ապստամբած մասսաներին օգնության եկած Կարմիր Բանակին՝ «գդակ-պոպոզ բուլճիկներին», ինչպես պատկերավոր ձևով ասված է ժողովրդական երգում: Այստեղ էլ, ինչպես բոլոր դեպքերում, ժողովուրդը տեսնում է Լենինի հովանավոր ու փրկարար ձեռքը:

Լենին զրկեց իրա զորքը,
Կորեցին տաշնակի քոքը,
Ցավից աղատվեց աշխարքը,
Ես Լենինու բախտին մեռնիմ²:

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, 1936, էջ 107:

² Նույն տեղում, էջ 83:

Ժողովրդական այդ երգերում կարմիր Բանակի հան-
դիսավոր մուտքը նկարագրված է ցնծությամբ ու սգեորու-
թյամբ: «Օրդուն եկավ սարի վեշեն», «Ազատաֆայից բերե-
ցին լուրը», «Չախմախլիից անցավ դսրքը...», «Թոփերը
կապեցին էյլարա գուզը...» և մի շարք այլ երգերում որս-
շակիտունն դժագրված է ուսլուցիոն-մարտական գործու-
ղությունների կոնկրետ դեպքերը՝ պատմական տեղերի ու
դեմքերի հիշատակությամբ¹: Այդ երգերը ստեղծվել և տա-
րածվել են ուսլուցիոն իրադարձությունների շրջանում
և շատ դեպքերում նրանց հորինողների անունները չեն
պահպանվել: Իրենց ընդհանուր բնույթով ու սգով էլ այդ
երգերը ավելի մոտ են բանավոր գրականությանը: Դրանց
մեծ մասը ունեն ժողովրդական երգերին հատուկ կրկնակի-
ներ և երգվել են՝ ընդունելով տարբեր եզանակներ:

Այս շրջանի բանահյուսության բնորոշ գծերից մեկը
սովետական կարգեր հաստատվելու առթիվ ժողովրդի ցնծու-
թյունն է և դաշնակներին տապալելու մեծ հրճվանքը: Շատ
բնորոշ է այդ տեսակետից ժողովրդական մի երգի կրկնակի-
երկտողը, որտեղ ցնծությամբ ազդարարվում է բանակի
մուտքը և դաշնակներին փախուստը.

Փախիր, ա՛յ դաշնակ, բանակը եկավ
Քո վիզը կտրող դաշնակը եկավ²:

Մի այլ ժողովրդական երգի մեջ («Ռուբենի երգը»)
վիպական գույներով և լիրիկական շնչով նկարագրվում է
շրջապատված կարմիր պարտիզաններին անդիջում կոչվել, և
չնայած պարտիզան Ռուբենի սպանության սրտառուչ ու
տխուր նկարագրությանը, այնուամենայնիվ, այդ վիպերգի

¹ Պատահական չէ, որ այդ երգերը գլխավորապես հորինվել են
ուսլուցիոն-մարտական իրադարձությունների կոնկրետ վայրերում՝
Իջևան, Կոտայք և այլուր: Հետաքրքրական են այն փաստերը, որ մինչև
օրս էլ Իջևանի շրջանի գյուղերում բաղմաթիվ գրույցներ են պատմե-
վում ուսլուցիոն իրադարձությունների և առանձին, կոնկրետ դեպ-
քերի ու դեմքերի մասին:

² Հայկական խորհրդային Ֆոլկլորը, 1938, էջ 67:

մեջ էլ առկա է լավատեսական տրամադրությունը: Վիպեր-
դը վերջանում է իրեն՝ զոհված Ռուբենի ոգեշունչ խոսքե-
րով:

Քաջ քնկերներ, դուք իմ տեղս բռնեցեք,
Ձեր պարտիզան Ռուբենին հիշեցեք¹:

Քաղաքացիական կռիվների շրջանի ժողովրդական
ստեղծագործության մեջ աչքի է քնկնում նաև թշնամիներ-
ին՝ դաշնակներին ու մյուս հարստահարիչներին ծանուկող
սպանիչ երգիծանքը: Ժողովրդական սրամտությամբ ու
հեգնանքի սպանիչ զենքով ծաղրված է դաշնակների ողոր-
մելիսությունը, նրանց պարտությունն ու փախուստը:

Մովզերիստներ էլան թաղի,
Կեղից ճղին, դե հա վաղի.
Ջաթի վաղել ձեզ կը սաղի...²:

Ժողովուրդը իր երգերում հաճախ նույնիսկ մի արտահայ-
տությամբ, բայց շատ գիպուկ, ուրվագծել է դաշնակցական
խմբապետների երգիծական պորտրենները: Օրինակ՝ «Մու-
րադը փախավ վաղե-վաղ, լեզուն թալեց տուս էրկու գաղ»,
«Արարատովին տվին գալեժը, թե՛նչ պետք է անի էն սար-
սաղ գիժը»: Ահա և դաշնակցության նախարարի «կերպարը».

Նստիսոֆե հասավ Փոլիս,
Թոկից փախած շուն ա խալիս,
Քամկից մեկեկներն են գալիս...³:

Սովետական կարգերի հաստատումը ժողովրդական բա-
նահյուսության մեջ ներկայացվում է որպես իսկական ազա-
տագրություն միջավանջային անցյալից, և այդ առթիվ
ժողովուրդն իր երախտագիտությունն է արտահայտում
պարտիային՝ «բոլշևիկներին», իսկ մյուս կողմից՝ հաղթա-
նական ծիծաղում է «ազգի փրկության» նշանաբանով հո-
խորտացող ախրահուշակ դաշնակցականների վրա:

¹ Հայկական խորհրդային ֆոլկլորը, 1938, էջ 76:

² Լենինը հայ ֆոլկլորի մեջ, 1936, էջ 77:

³ Հայկական խորհրդային ֆոլկլորը, 1938, էջ 66:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ունոյութեան և Հայաստանում սովետական կարգերի հաստատումը պատկերված են որպէս օրգանապէս շաղկապված ու ներգաշնակ իրողարձութուններ: Ժողովրդական բանահյուսության մեջ Հոկտեմբերյան ունոյութեան ընդհանրացված է տմենաէական ու բնորոշ դժերով: Ռեւոլյուցիայի պատկերման մեջ ի մի է ձուլված ժողովրդական իմաստութեանն ու գեղարվեստական նպատակաւացութեանը: Հոկտեմբերյան ունոյութեան մեծ նշանակութեանը և հաստատուն տեղը սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ բացատրվում է նրանով, որ հենց ունոյութեան ասպնովեց իրեն՝ ժողովրդի ստեղծագործական ուժերի ու կարողութեաններ լայնորեն ծաղկման հնարավորութեանները:

ՍՈՅՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ունոյութեան աշխարհում առաջին անգամ, խորտակելով սոցիալական ու քաղաքական ճնշման կապանքները, հրապարակ հանեց աշխատավոր մարդու բարոյական-քաղաքական նոր կերպարը:

Որո՞նք են աշխատավոր մարդու նոր կերպարը բնութագրող դժերն ու հատկանիշները: Ամենից առաջ, ունոյութեան ինքնագիտակցութեանը, որի շնորհիւ աշխատավոր մարդը ձեռք է բերել խոր ու լայն աշխարհաճանաչութեան և իրեն նվիրել է ժողովրդի ազատագրութեան մեծ գործին:

Այնուհետեւ, աշխատավոր մարդու նոր կերպարի բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ ակգային ու ռասայական տարբերութեանները ոչ մի նշանակութեան ու գեր չեն կարող խաղալ նրանց գործունէութեան մեջ: Պրոլետարական ինտերնացիոնալիզմը միավորում է այդ մարդկանց՝ իրենց շահերի ու նպատակների միասնութեամբ:

Եվ, վերջապէս, աշխատավոր մարդու նոր կերպարի բնութագրման համար հատկանշական է այն հանգամանքը,

որ նրանք անհողգողգ ու աննահանջ են պայքարի մեջ, վախ չունեն խոչընդոտների առաջ, ձեռներեց են ամենա-
դժվարին մոմենտներում և անողոք ու անզիջում թշնամի-
ների նկատմամբ:

Ի տարբերութուն անցյալի լանահյուսության, ժա-
մանակակից ժողովրդական ստեղծագործության մեջ գրա-
կան հերոսը եղակի-անհատական ընույթ չունի, այլ դար-
ձել է մասսայական: Աշխատավոր մարդու կերպարի մասին
խոսելիս մենք նկատի ունենք այդ կերպարի հավաքական,
ընդհանուր դժերը:

Սովետական հասարակարգը աշխատավոր մարդուն նոր
մակարդակի բարձրացրեց, ամենից առաջ փոխելով նրա
նյութական կյանքի պայմանները: Աշխատավոր, հասարակ
մարդիկ, որոնք Հոկտեմբերյան ռեվոլյուցիայից առաջ կյանքի
ստրուկներն էին, և իրենց գոյությունը քարշ տալով, ու-
րիշների բարեկեցությունն էին ապահովում, սովետական
կարգերում դարձան իրենց վաստակի տերերը: Բայց միայն
սրանով չի սահմանափակվում աշխատավոր, հասարակ մար-
դու վիճակի փոփոխությունը սովետական կարգերում: Հա-
սարակ մարդը, որի տնտեսական ստորագաս վիճակին գու-
դակցում էր նաև կուլտուր-լուսավորական, մտավոր ու կեն-
ցադային հետամնաց վիճակը, Սովետական իշխանության
օրոք արմատապես փոխվում է: Տնտեսական բարւոք վի-
ճակի հետ միասին հասարակ շարքային մարդը բարձրա-
նում է նաև քաղաքականապես, կուլտուրապես և կենցա-
ղով: Անցյալում, եթե կյանքի բարիքները վայելում էր
անաշխատ փոքրամասնությունը, սովետական իրավակար-
գում բոլոր բարիքներին տեր դարձավ աշխատավոր ժողո-
վուղդը: Անցյալում ճնշված, հետամնաց և կրոնական նա-
խապաշարմունքների ենթակա մարդը դառնում է լուսա-
վոր, կրթված, կուլտուրապես զարգացած մարդ: Դրա հետ
միասին մեծանում է հարգանքը դեպի աշխատանքի մարդը:
Վերջինս էլ հենց հանգիստանում է երկրի կառավարողը, մի
բան, որ անհնարին ու աներևակայելի էր հին, մասնավոր
սեփականատիրական աշխարհում: Սովետական իրավակարգը

մարդուն վերափոխում է իր էությամբ, ներքուստ և արտաքինապես: Աշխատավոր, շարքային մարդը այլևս կյանքի անանուն միավոր չէ. նա, ինչպես Մ. Գորկին է ասել, մեծատառով գրվող Մարդ է:

Սովետական իրավակարգում մարդու վերափոխման, հասարակ մարդու կերպարի տճման ու զարգացման պրոցեսը գեղարվեստորեն վառ արտացոլում է գտել սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ: Ահա, օրինակ, «Մըր Խաչոյի խաղը» ժողովրդական երգը: Անմիջական ու պարզ պատկերներով այդտեղ ցուցադրված է նախկինում «բաթրաք, նոքար, ֆաղիր, եթըմ, քասըլի, չըփլախ, եսըր, խորած» Խաչոյի վիճակի փոփոխությունը, թե ինչպես նա արտաքինապես անճանաչելի է դարձել՝ առաջվա «փոստե փափաղի» տեղ այժմ կրում է նոր «շափախե» (զլխարկ), «ջընդըռ արխալղի» տեղ՝ «թաղա ֆոխնջ», «քրքրված տւրայի» տեղ՝ «մահուղ փալթո», «փաթավա արեխների» տեղ՝ «վզնով սե սասոքտեր» և այլն: Բայց աշխատավոր Խաչոն փոխվել է ոչ միայն արտաքինապես, այլ նաև հոգեպես, իր գաղափարական ու կենցաղային դրությամբ:

— Տղա Խաչո, եսըր Խաչո,
Քո լըկըված չափ լեզվի տեղ,
Խաթրաշ, ճարտար խոսքեր,
Վճվ ի տվե, վճվ ի տվե:

«Ճարտար ու թրաշ խոսքերի» հետ միասին Խաչոն նախկին «անտաշ ու զըռ շարժումի տեղ» ձեռք է բերել «օսըմ, գիտնակություն»: Երգի մեջ ամեն մի հարցին, որը ցուցահանում է Խաչոյի զարգացումը, հաջորդում է պատասխանը. «Լենինն ի տվե, վճվ ի տվե»: Լենինի անվան միջոցով ժողովուրդը դարձյալ սիմվոլիկ կերպով ներկայացրել է սովետական կարգերի և Կոմունիստական պարտիայի պարգևած բարիքները:

Սովետական հասարակարգում մարդու բարձրացման ու զարգացման ասպարեզում արմատական նշանակություն

¹ Լենինը հայ ֆուկլորի մեջ, Երևան, 1936, էջ 68:

ունեցող հանգամանքներից մեկը կնոջ ազատագրումն ու նրա վիճակի բարելավումն է։ Կապիտալիստական հասարակարգի պայմաններում բուրժուական թեորետիկները քիչ չեն խոսել կնոջ ազատագրության մասին, սակայն, կինը բուրժուական իրավակարգում միշտ եղել է մտավոր ու հոգևոր շատ ցածր պայմաններում։ Սովետական իրավակարգում նոր կյանքը բազմաթիվ հնարավորություններ է ստեղծել կնոջ վիճակը բնականից ու կենցաղում թեթևավացնելու համար։

Սովետական կինը հասարակական ակտիվ գործիչ է։ Երկրի տնտեսական, կուլտուրական կյանքում, գիտական բնագավառում կանայք մեծ դեր են կատարում։ Հայկական ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ անդրադարձում է դուրս նաև Սովետական իշխանության օրոք կնոջ սոցիալական ու կենցաղային պայմանների փոփոխությունը։ Վերցնենք, օրինակ, ժողովրդական մի ստեղծագործություն, որը կրում է «Շուշանի երգը» խորագիրը։ Անցյալում Շուշանը իր «քաղցած ու տկլոր» որբերին պահելու համար հարուստների դուստրն ընկած լիաց կթխեր ու լվացք կեններ։ Սովետական իշխանության օրոք Շուշանը մարդամեջ մտավ, գնաց ժողով լսոսք վերցուց, խոսաց՝ նրան ընտրում են ղեկի նախագահ։ Առաջներում, որ իրենց մոտիկ գյուղին էլ չէր տեսել, հիմի Շուշանը կվազի «Թիֆլիզ, Երևան»։

Խաթուի Շուշան մարթ ի դառցե մե խոսքով,
էս տարի ջոկեցին, ըղբրկին Մոսկովի։

Է՛յ զաման, զաման,
Սովետի զաման¹։

Նոր մարդը փոխում է հին բուրժուական բարոյական-նույթյան սրբադրժված հասկացողությունները և հիմք գնում նոր, սովետական, կոմունիստական բարոյականություն։

¹ Հայկական խորհրդային ֆուլկլորը, Երևան, 1938, էջ 81։

րով է արտահայտվել Տրակտորի հետ միասին երգվում է
նաև հնձող ու կայսող մեքենան:

Հնձում, կայսում է մեքենան,
(Պապիս կամերն հեռու կեցան),
Զտած ցորեն աչքով տեսան
Հացով յի ամբարում, հիմա:

Ահա այս նոր պայմաններն ու հանգամանքները փոխում են մարդկանց վերաբերմունքն ու հայացքը աշխատանքի նկատմամբ: Աշխատանքը դառնում է յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու սրբազան պարտականություն և պատվի գործ: Նոր, սոցիալիստական աշխատանքը մեր մարդկանց համար կենսական անհրաժեշտություն է: Այդ աշխատանքի մեջ են տեսնում նրանք իրենց կյանքի խմայտն ու նշանակությունը: Աշխատանքային կոլեկտիվի մեջ նրանք զգում են հաճույք ու բերկրանք, սեր ու համերաշխություն: Փողովրդական մի շարք երգերում հստակորեն ցուցադրված են մեր մարդկանց այդ խոնգավառ զգացումներն ու տպրումները աշխատանքի ամենատարբեր բնագավառներում: Այսպես, կոլսոզնիկը երգում է.

Ես խին խելքի չեմ, նոր եմ,
Կոլսոզի բաղ կփոքեմ,
Բաղ ք բաղչա, բարը շատ,
Դաշտ ք արոտ, վարը շատ²:

«Երկաթուղի» երգում, որի ստեղծողն էլ հենց հաւարակ երկաթուղային սլաքավարն է, մեծ ռեկոնստրուկցիայի գովերգվում է «Գիշեր ու զօր բանող», «մեր երկրի հզոր երակ» երկաթուղին: Երկաթուղին նրա հոգին է, «աչքի լիսը», «երբ գնացքի ձեն է գալիս, ասես աշխարհն ինձ են տալիս», — կարգում ենք այդ երգում³:

¹ Գուսանական և ժողովրդական երգեր, կաղմեց և խմբադրեց Ս. խանդադյանը, Երևան, 1949, էջ 88:

² Հայկական խորհրդային ֆոլկլորը, Երևան, 1938, էջ 99:

³ Գուսանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 79:

Գուսան Աշխույժի Վարտաշի երգում՝ ցուցադրված է աշխատավոր-շինարարի խինդն ու հրճվանքը: Վարտաշ-բանվորներին համար մեծ բերկրանք է, որ նրանց «տաշած քարը դառնում է տուն ու շենք»:

Արի տաշենք քարտաշ ախպեր,
Մարմար, տուֆքար ու բաղալ,
Կառուցենք մեր, վարպետ ախպեր,
Հայրենիքը՝ մի պալատ¹:

Ժամանակակից ժողովրդական բանահյուսության աշխատանքային երգերը իրենց էությամբ ու ընդհանուր բնութագրով, լավատեսությամբ ու կենսուրախությամբ են տոգորված: Ճիշդ ինչ ուրախ ժամանակ է, Շուռ խոսու-ղի լեզուն վրակ է, — ասվում է ժողովրդական երգում: Աշխատանքային այս միջավայրում զարգանում են սովետական մարդու գեպի աշխատանքն ունեցած վերաբեր-մունքի լավագույն գծերը: Ամենից առաջ, հատկանշական է սովետական մարդկանց հոգատարությունը, աղնվու-թյունը և նվիրվածությունը կոլեկտիվ աշխատանքում: Ժողովրդական երգերում այդ գծերը բնորոշվում են աշխա-տանքի մեջ բարեխղճության ցուցադրմամբ և բուռն խան-դավառությամբ: «Կոլխոզի աշխատանքը կանենք ամագով» (բարեխղճությամբ): «Կոլխոզի աշխատանքը կանենք քո-մակով», — ասվում է երգերից մեկում: Մի այլ երգի մեջ կարդում ենք.

Ծուլությունը ատեցի,
Կոլխոզումը դատեցի²:

Կոլխոզային «հիանալի աշխատանքը» աշխատավոր-ների համար «մեղրից անուշիկ է»: Մարդկանց հորդա-րուխ զգացմունքների և գեպի կոլխոզային աշխատանքն ունեցած նվիրվածության հիմքը էությունտեսային կարգերի շխտակ արգարությունն է, արդարություն, որ երազել

¹ Գուսանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 80:

² Հայկական խորհրդային ֆոլկլորը, Երևան, 1938, էջ 37:

են աշխատավոր մարդիկ դարերի ընթացքում: Այդ արդարությունը սոցիալիզմի ընդհանուր հիմունքն է՝ յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության և յուրաքանչյուրին ըստ նրա աշխատանքի: Ժողովրդական երգը հարազատորեն պահպանել է սոցիալիզմի այդ հիմունքը:

Քանց արև կապեր կամար, կոխող պերիբ մե համար,
Վով կաշխատի էն կուտի, ուրիշ ինչ ասեն՝ սութ ի:

Սովետական երկրում աշխատանքի մարդը արժանանում է մեծադույն հարգանքի ու մեծարանքի: Նա դառնում է ժամանակակից գեղարվեստական ստեղծագործության գլխավոր հերոսը: Աշխատավոր մարդու այդ բարձրացումը, նրա մեծարումը կրկնապատկում է մեր սովետական մարդկանց եռանդն ու աշխատանքային նախաձեռնությունը: Աշխատանքը մեր մարդկանց համար անցյալում միայն գոյության միջոց լինելուց դարձել է ստեղծագործություն:

Աշխատավոր մասնաների խանդավառության ու նախաձեռնության փայլուն ապացույցը սոցիալիստական մրցությունն է: Սոցիալիստական մրցությունը նոր երևույթ է, որ միայն սոցիալիստական աշխատանքին է յուրահատուկ. դա անհատների մրցությունն է կոլեկտիվ շահի համար, կոլեկտիվի բարեկեցությունը բարձրացնելու համար: Սոցիալիստական մրցությունը աշխատանքի-բոլոր բնագավառների համար դարձել է բնորոշ երևույթ: Ժողովրդական մի երգում նկարագրվում է մրցության ոգևորությունը գործարանում.

Աշխատանքի ենք անցել,
Թըլկրտա դակատ,
Շրխրտա դակատ,
Հարվածային ենք դարձել,
Բալոն դիբ վրեն
Կատարի նորմեն:

¹ Հայ ժողովրդական երգեր (սովետական շրջան), կազմեց Վ. Սամվելյան (անտիպ):

Մի այլ երգում կարգում ենք.

Սոցմրցման ենք մենք մտել,
Գյողալ բամբակ հավաքել,
Թելի ա, թելի ա,
Տեսնում ենք, որ շատ լի ա՜:

Աշխատանքի մեջ մեր մարդկանց այս վերաբերմունքը աշխատանքային նոր հարարերու թյուններ են, որոնք չգիտեն շահերի ներհակություն կամ հակամարտություն:

Սովետական հասարակարգի զարգացման ու բարգաձման հետ միասին աճում ու կատարելագործվում է սովետական մարդը, բարձրանում են նրա մտավոր ու հոգեվոր կարողությունները: Սովետական մարդու հոգևոր այս նոր նկարագիրը սերտորեն կապված է մեր երկրում կուլտուրական խոշոր տեղաշարժերի հետ: Այդ ամենից շատ դրսևորվել է ժողովրդի զբաղիտության աճի մեջ, որն իր լայն արտացոլումն է ստացել նաև ժողովրդական երգերում:

Բյուրավոր զպրոց հիմնեցին,
Նոր գիրք ու բառով,
Ուսումը պարտադիր դառավ,
Մավետի ձեռով¹:

Կուլտուրայի ու կենցաղի աճը երևում է հենց թեկուդ այն փաստերից, որ մարդիկ հմտանում են բազմաթիվ մասնագիտությունների մեջ, բարձրանում է նրանց գեղարվեստական նաշակը, ընդլայնվում նրանց հետաքրքրության սահմանները:

Սովետական մարդու, նոր մարդու բարոյա-քաղաքական կերպարը մի ինչ-որ ավարտված, անթերի ու իդեալական կերպար չէ, այն ձևավորվում, զարգանում է՝ անդարդարձնելով իրականության փաստերն ու երևույթները: Ժամանակակից ժողովրդական ստեղծագործության մեջ

¹ Հայ ժողովրդական երգեր (սովետական շրջան), կազմեց Վ. Սամվելյան (անտիպ):

² Հայկական խորհրդային ֆուկլորը, Երևան, 1938, էջ 82:

արտացոլում է գտել մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների և մասնավոր սեփականատիրական մորալի ազդեցությունների դեմ մղվող պայքարը։ Հատկանշական է այդ տեսակետից մի շարք երգերում տեղ գտած կոլխոգային աշխատանքում ձրիակերներին և ուրիշի հաշվին ապրողների դեմ երգիծանքը։ «Պիյան Սաչոն կոլխոգում» երգում, օրինակ, ծաղրվում ու դատապարտվում է ազնիվ կոլխոզնիկների շարքերում տեղ գտած պուրտաբույծը, մի այլ փոքր երգում մերկացվում է «հին գլավայի խասյաթ» ունեցող նախագահը («նախագան») և այլն։

Նոր մարգը, սովետական մարգը սոցիալիստական բարոյականության կրողն է։ Փոխվել են նրա հասկացողություններն ու ըմբռնումները։ Կյանքում ու կենցաղում արժեքավորվում են մարդկանց աշխատանքային ու հասարակական ակտիվությունը։ Մարդկանց գնահատության այլ չափանիշ գոյություն չունի։ Սա էլ հենց սոցիալիստական հումանիզմի արտահայտությունն է։ Անգամ սիրո մոտիվի մեջ, որ այնքան ընդհանուր է և լայն արտացոլում է ստացել տրադիցիոն բանահյուսության մեջ, դրսևորվե է մարդկային զգացումների մեջ տեղ գտած նորը։ Կոլխոգնիկ աղջկա համար նախընտրելի է «կոլխոզնիկ յարը», «կոմսոմոլ տղան»¹։

«Ջան-գուլումի» երգերում փառաբանվում է «հալալ աշխատող» բողջնիկ յարը, որ ամեն տեղ «հիշելիք է», «հարվածային յարը», որ «ոչ անկիրթ է, ոչ խային» (նենգ)։

Մե յար ունիմ կոլխոզնիկ
Ջան գուլում, ջան, ջան,
... Բանվոր, խելոք, զեղեցիկ,
... Ըսկի բանս պակաս չի.
... Դուռը տունըս բոլը լիք²։

Սովետական մարդու կերպարը ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ վերարտադրվել է բազմա-

¹ Հայկական խորհրդային Ֆոլկլորը, Երևան, 1938, էջ 117։

² Նույն տեղում, էջ 119։

մակնդման խորեն: Այդ կերպարը բնութագրվում է քաղաքական հասունությունով, տեսական մտահորիզոնի լայնությամբ և հասարակական-քաղաքական ակտիվ դործունեությամբ: Նոր մարդու բնավորություն մեջ բնորոշը համարձակությունն ու ակտիվությունն է, ինքնավստահությունը և ասպագայի նկատմամբ ունեցած սլայծառ լավատեսությունը:

ՍՍՍՐԵՍԱԿԱՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆԱՐԱՐ ՈՒԺԸ
ԵՎ ՍՍՈՒՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԱՆԽԱՍՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական ժողովրդական ստեղծագործության կարևոր գծերից են հայրենասիրության ու ժողովուրդների բարեկամության բարձր գաղափարները: Սովետական Հայրենիքում ապրող բոլոր ժողովուրդների ու ազգերի կենսական շահերն ու նպատակները ներգաշնակում ու միահյուսվում են: Սովետական հայրենասիրությունը ոգեշնչում ու թռիչք է տալիս մեր Միության բաղմազգ ժողովուրդներին՝ նրանց անտեսական ու կոշտության կյանքում: Ազրբեջանական ժողովրդական բանահյուսության հաջողված երգերից մեկում («Կեցցե բարեկամությունը») խոր ու համոզիչ պատկերվում է սովետական մարդկանց ձգտումներն ու ասպարումների ներգաշնակությունն ու միասնությունը՝ դրսևավորման ձևերի բաղմազանությամբ: Ազրբեջանական այդ հիանալի երգում ցուցադրվում են սովետական մարդկանց ազգային առանձնահատկությունները, նրանց արտաքին նկարագրի, կենցաղի ու սովորությունների մանրամասնություններով: Օգտագործելով այս առանձնահատկությունները, ժողովրդական երգի մեջ խորիմաստ ու սլատկերավոր ընդգծվում է, որ բոլոր այդ առանձնահատկությունները չեն խանգարում, այլ ընդհակառակը՝ խորացնում ու բաղմարտվանդակ են դարձնում բաղմազգ ժողովուրդների նպատակների ու շահերի սերտ կապն ու միասնությունը:

Тары звенят, сазы звенят, гитары звенят — привет!
Разве ты скажешь: азербайджанский, армянский ли,
Русский ли звон? Нет!

В песне бывают тонкие ноты,
Бывает погромче звук,
Такие нежные есть обороты,
Что как бы не слышен звук.

Но разве ссорятся в песне ноты?

Дружба — полнота!

Из песни, друг, не выкинешь ноты, —

Песня тогда не та!

Цветут на лулу и мак и мята, —

Разные их цвета.

Но разве ссорятся мак и мята?

Дружба — красота¹.

Սովետական հայրենասիրությունը հզոր ազդակ է ՍՍՌՄ ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման ասպարեզում: Հայրենիքի գաղափարը ոգեշնչում է մարդկանց դեպի նոր սխրագործությունների կյանքի ամենատարրերը բնագավառներում:

Սովետական ժողովրդական ստեղծագործության մեջ Հայրենիքը փառաբանվում է ամենանվիրական ու սրտահույզ զգացմունքներով: Հայրենիքը թանկագին ու սուրբ գաղափար է, այն «լույսի օջախ է, գիտության աղբյուր», — երգում է հայ բանասացը.

Լույսի օջախ ես, գիտության աղբյուր,

Հզոր արեղակ՝ Սովետի երկիր:

Մարգիտյան համար անմահական ջուր

Զուլալ աղբրակ՝ Սովետի երկիր²:

«Հազար գույներով ծաղկած Սովետական Հայրենիքը փառք ու պարծանք է», «Լուսաշաղախ բողբոջներով», «անմահական պտուղներով» ու «հարուստ բերքով» ղուգել է նա արան ու այգին: Գուսանները փառաբանում են Սովետա-

¹ Творчество народов СССР, Москва, 1933, стр. 182—183.

² Գուսանական ժողովրդական երգեր, կազմեց Ս. Խանդադյան, Երևան, 1949, էջ 29:

կան Հայրենիքի ուժն ու հղորությունը. «Հղոր ես դու աշխարհի մեջ, Սովետական Հայրենիք»։ Մանպարտեղի ուժի աղբյուրը և անսասան Հայրենիքը։ Սովետական Հայրենիքը անպարփակ ազատության և գիտության հայրենիքն է։ Խորն է դեպի հայրենիքն ունեցած սովետական մարդկանց սիրտը զգացմունքը։ Այդ զգացմունքի խորությունն ու ջերմությունը դեղեցիկ ձևով է արտահայտված ուսական հանրահայտ երգի մեջ («Երգ հայրենիքի մասին»)։

Как невесту, Родину мы любим,
Бережем, как ласковую мать¹.

Հայրենիքի սերը ամրապնդում ու ցեմենտում է ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության անխախտ հիմքերը։ Իսկ այդ բարեկամությունը լոկ դադափար չէ, այլ կենսունակ ու ամենօրյա գործոն ուժ։ Այդ բարեկամությամբ է աճել ու զարգացել սովետական ժողովուրդների երջանիկ կյանքը։ ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը միաժամանակ նրանց հետագա բարգավաճման երաշխիքն է։ Սովետական հայրենասիրության և ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության դադափարի էությունը կոնկրետ ու խոր համոզականությամբ է գրոհարված ազրբեջանական «Հաւրստություն» («Богатство») երգի մեջ։ Այս երգի մեջ ազգային կոլորիտի հաջող գույներով ներկայացված է սովետական ժողովուրդների բնական, հարստությունները, բայց այդ հարստությունները որևէ մեկի մենաշնորհը չեն։ զրանք ծառայում են ժողովուրդների փոխադարձ համագործակցությանը։ Գեղարվեստական սիմֆոլիկայի միջոցով ներկայացվում է եղբայրական ժողովուրդների շրջանը։

„Похвалимся! — Россия говорит,—

Железо и пшеница у меня!“

„Вот уголь,— Украина говорит,—

Горами громоздится у меня!“

И Белоруссия в лесах поет:

„Никто моих деревьев не сочтет...“

¹ Творчество народов СССР, стр. 335.

На каждой стройке дереву почет,
 Берите бревна, шпалы у меня!
 „А я,— Узбекистан кричит в ответ,—
 Как солнце в тучи, в белый пух одет!
 Метель из хлопка напущу, сосед!
 Все будете в обновлениях у меня!“
 Азербайджан как взглянет на него:
 „Мой хлопок будет мягче твоего!...
 Мое не в хлопке только торжество,—
 Есть кое-что крепче у меня!
 Бушует нефть, как вешняя вода,
 Как месяц, озаряет города,
 Лицом черна, душою молода,—
 И жар, и свет и пламя у меня!

Մրցակցութեան տոնով ու երանգով ներկայացված
 այս զրույցը եղբայրական զրույց է, որի հիմքը փոխա-
 դարձ համագործակցութեանն ու նվիրվածութեանն է: Հենց
 եղբայրական համագործակցութեան բարձր գաղափարով էլ
 եղբայրակվում է այս երգը.

... И всем я поделиться с братом рад,
 И каждому достойному—я брат!¹

Սովետական հայրենասիրութեանն ու ՍՍՌՄ ժողո-
 վերդների բարեկամութեանը մեր հասարակութեան բա-
 րոյա-քաղաքական միասնութեան հիմքերն են, որ խոշոր
 դեր են խաղացել հասարակական կյանքում, սկսած դեռևս
 Հոկտեմբերյան ռեւոլյուցիայի և քաղաքացիական կռիւների
 տարիներից մինչև վերականգնման ու սոցիալիզմի կա-
 ուցման ժամանակաշրջանը, Հայրենական Մեծ պատերազմի
 շրջանում և հետպատերազմյան կյանքի բնագավառում: Սո-
 վետական հայրենասիրութեանը և ՍՍՌՄ ժողովուրդների
 բարեկամութեանը մեր կյանքի առաջ մղող ուժերից են,
 կոմունիստական հասարակարգ կառուցելու կարևոր գոր-
 ծոններին:

Յնութեամբ ու հրճվանքով է փառարանված ժողո-
 վրդական ստեղծագործութեան մեջ Գերադույն Սովետի
 ընտրութեանները: Ընտրութեանների մեջ ժողովուրդը տես-

¹ Творчество народов СССР, стр. 354—335.

նում է իր ազատութեան և հաւատարմութեան իրավունքը: Սովետահայ գուսանը փառարանում է ընտրութեան օրը, որը զուգադիպում է դարնան դալու հետ: Ընտրութեան օրը հրճվանքի և ուրախութեան օր է, ասերն է ծփում ուրախ կյանքի», — երգում է գուսանը և ներկայացնում մեր մարդկանց միասնական կամքն ու նվիրվածութիւնը Սովետական Հայրենիքին.

Սովետական ազգերն համայն
Մի մարդու պես տալու են ձայն.
Հաւատ, մեղ է հառուկ միայն
Այդ զեղեցիկ օրն ընտրութեան¹:

Սովետական Միութեան ժողովուրդների իրավահավասարութեան գաղափարը խոր ու բազմակողմանի անդրադարձում է ստացել ուսական երգի մեջ, որտեղ, որպես այդ իրավահավասարութեան սխմել, ընտրված է «ընկեր» բառի հասկացողութիւնը: Այդ բառի մեջ ժողովուրդը տեսնում է սովետական հասարակարգի մեծ ուժը, դեպի մարդն ունեցած նրա վերաբերմունքի վեհութիւնը.

Наше слово гордое — «товарищ» —
Нам дороже всех красивых слов.
С этим словом мы повсюду дома,
Нет для нас ни черных, ни цветных,
Это слово каждому знакомо,
С ним везде находим мы родных².

Ժողովրդական բանահյուսութեան մեջ պայծառ անդրադարձում է ստացել ՍՍՌՄ ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքը: ՍՍՌՄ ժողովուրդների ստեղծագործութիւնը ցուցադրում է ազգային ռեսպուբլիկաների ծաղկումն ու բարգաւաճումը: Ահա, օրինակ, զաղախական ժողովրդական ակին Ջամբուլի երգը, որտեղ նա հիշում է հին Ղաղախստանը. կյանքը ծանր էր ինչպես խավար գիշեր, իրավունքը բայերի և խաների ձեռքին էր, ժո-

¹ Գուսան Հավասի, Բուրմունք, Երևան, 1950, էջ 12:

² Творчество народов СССР, стр. 335.

դովուրդը խեղդվում էր նրանց ճնշումից՝ ինչպես տափաս-
տանի այրող ափաղից խանձված խոտը. նոր կյանք ստա-
ցավ Ղազարխատանը՝ «Տափաստանը ծաղկեց ինչպես գյուլ-
լիստանի բաղ», ազատագրված զազախ ժողովուրդը տեր
դարձավ երկրի անհամար հարստություններին:

Հայրենի երկրի հարստություններն ու նոր կյանքն է
փառաբանվում ուղբեկական «Ֆերգանա», ագրրեջանական
«Իմ Բաքու» ստեղծագործություններում:

Ժողովուրդների բարեկամության պայծառ ապացույց-
ներից մեկը սովետահայ ժողովրդական ստեղծագործության
մեջ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ցու-
ցաբերումն ու գովքն է: Անցյալում ցարական կառավարու-
թյան հրահրած աղգային թշնամանքը դեմ է առել Կովկա-
սի ժողովուրդների դարավոր բարեկամության դիմադրու-
թյանը: Սովետական կարգերը Անդրկովկասի ժողովուրդնե-
րի բարեկամությունը նոր աստիճանի բարձրացրին: Սովե-
տահայ ժողովրդական ստեղծագործության հաջողված երգե-
րից մեկն է «Կովկաս»՝ վերնագիրը կրող երգը: «Դու մեր
երգերի մարգարիտն ես»: — Կովկասին է դիմում ժողովըր-
դական երգիչը: Եղբայրսկան սիրով կապված բազում աղ-
գեր են ապրում Կովկասում:

Վրաստանը շքեղ ու շեն,
Հայաստանդ արևի բեմ,
Ագրրեջանդ նոր ու վսեմ,
Եղբայրական կամքով, Կովկաս:

Կովկասը Սովետական երկրի վառ ծաղիկն է, պտղով
ու բարիքներով լի, աշխարհին հայտնի նավթով ու պղնձով:
Նույնչափ գրավիչ ու հետաքրքիր է Ղաբարադին նվիրված
երգը. «Լեռների մեջ գլուխը բարձր պահած, գյուղերը շեն,
լուսավոր ու մարդաշատ»՝

Ագրրեջան մեծ եղբորդ հետ յեկտեղ
Անուն ունես դու. գովակա՛ն ամեն տեղ²:

¹ Գուսանական և ժողովրդական երգեր, էջ 32:

² Նույն տեղում, էջ 41:

Ժողովրդական ստեղծագործության մեջ բազմաթիվ երգեր կան նվիրված արևաշող Վրաստանին, որոնք ցուցադրում են եզրայրական վրաց ժողովրդի նվաճումները:

Շատ ուշագրավ է Սովետական Հայաստանի ժամանակակից կյանքի արտացոլումն ու պատկերումը սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ: Ժողովրդական երգերում, օրինակ, ներկայացվում է Ալագյազը, որի ջրերը վարարել են», «ծաղիկները նոր դույն հագել»: Հին, հետա-մնաց, խավար Արվաքյանդ գյուղը դարձել է առաջավոր զարգացած գյուղերից մեկը. այժմ օգտագործվում են նրա «կարծր մարմարի հանքերը», «հարուստ անտառներն» ու «բերքատու դաշտերը»: Այսպիսով, Հայաստանը Սովետա-կան իշխանության օրոք նորացել է ինչպես իր ներքին կյանքով, այնպես և արտաքին տեսքով: Գուսան Հավասին իր երգերում՝ փառարանում է «վերածնված, ծաղկած այգի, անուշիկ» Հայաստանը:

Օրըստօրե ստեղծում ես կյանք ու սեր,
Ակաղեմիադ արևի պես յույն է մեր,
Երաժիշտներ, բանաստեղծներ, բանվորներ,
Գիտնականներ շատ ունես, անուշ Հայաստան»¹:

Սովետական Միության ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կյանքի վերելքը թշնամությամբ ու ատե-լությամբ են դիտում օտարերկրյա իմպերիալիստները: 1933 թ. իշխանության գլուխ անցած գերմանական Ֆաշիզմի դաժան հալածանքները գեմոկրատական ազատու-թյունների դեմ ժողովրդական ստեղծագործության մեջ ու-ժեղացնում է հակաֆաշիստական տրամադրությունները: Հետադաշում միջադգային թատերարեմում տեղի ունեցող իրադարձությունները, Եվրոպայի ժողովուրդների դեմ սկը-սած գերմանական ֆաշիզմի արշավանքները սովետական ժողովրդական ստեղծագործության մեջ առիթ են տալիս պաշտպանական թեմատիկայի ու ժեղացմանը:

Սովետական հայրենասիրության ուժը արտահայտվում է Սովետական Բանակի նկատմամբ ունեցած համաժողո-

¹ Գուսանական և ժողովրդական երգեր, էջ 42:

վերդական մեծ սիրո մեջ: Դեռևս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի ու քաղաքացիական կռիւնքների բովում աճած Կարմիր Բանակը վաստակել էր սովետական մարդկանց մեծ սերն ու համակրանքը: Իսկ այդ սերն ու համակրանքը նա վաստակել էր այն բանի շնորհիւ, որ պայքարում էր արդարության համար, ժողովրդի ազատության ու նրա շահերի պաշտպանության համար, ընդդէմ իմպերիալիստական զավթիչներին: Կարմիր Բանակը իր ազատագրական միսիան փայլուն կերպով ցուցադրեց Խառանճի, Խալխին-Գյուլի և Ֆինլանդիայում մղած ազատագրական մարտերի մեջ:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ բազմաթիւ երգեր կան նվիրւած Կարմիր Բանակին: Ժողովուրդը փառարանում է բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի ազատագրական, արդար ու վեհ նպատակը. «Մեր զորքն ա Կարմիր Բանակ, չար թշնամուն սուր ու դանակ»,— լակոնիկ ու սպառնիչ բնութագրւած է ժողովրդական մի երգում: Կարմիր Բանակը խաղաղության հուսալի պաշտպանն ու հենարանն է, որովհետեւ Սովետական Միության արտաքին քաղաքականության նպատակը միշտ ուղղւած է խաղաղության պաշտպանության և ժողովուրդների միջև համագործակցության հաստատմանը:

Կարմիր Բանակին և Կարմիր սահմանապահներին նվիրւած երգերում բազմազան մոտիվներով վերարտադրւում է Կարմիր Բանակի նկատմամբ ժողովրդի սերն ու ջերմ վերաբերմունքը: Ուշագրաւ է այս տեսակետից հատկապէս բանակ ճամփելու մոմենտը: Նթե անցյալի բանահյուսության զինվորի երգերում տիրապետողը թախիծն ու տրտմութիւնն էր, մի հանգամանք, որն ապացուցում է անցյալում զինվորագրության դաժանութիւնն ու ծանրութիւնը, ապա ժամանակակից ժողովրդական ստեղծագործության մեջ Կարմիր Բանակին նվիրւած երգերը տողորւած են ուրախությամբ ու ցնծությամբ: Մայրը որդուն բանակ է ճամփում ներքին հրճւանքով՝ «Ազիզ բալա, բարով գնաս Կարմիր Բանակ»: Նույնպիսի տրամադրությամբ

է մոտենում նաեւ սիրած աղջիկը՝ Վարմիր Բանակ գնա-
յար ջան, սուրդ կտրուկ լինի»:

Կարմիր Բանակին նվիրված երգերի հիմնական մո-
տիվներից մեկը Կարմիր Բանակի ուժի և հզորութեան գով-
քըն է:

Կարմիր Բանակի ուժն ու հզորութունը ժողովուրդը
գիտում է որպէս խաղաղութեան գրավական և Սովետական
երկրի բոլոր թշնամիներին հակահարված տալու նախապայ-
ման.

Պողպատի պէս կռուդ ամուր,
Թուրդ կտրուկ, սվինդ սուր,
Գուշմանի զեմ կայծակ ու հուր,
Անպարտելի Կարմիր Բանակ¹:

Գուսան Աշխույժը «Սովետական Բանակին» երգի մեջ
հետեւյալ էպիտետներով է բնութագրում Սովետական Բա-
նակը՝ «աղնիւլ, հզոր, հուժկու, աղքու, պայծառ, հարգի, բա-
րի, հույս, լույս, արդար ու քաջ», «գովքի ու վառքի ար-
ժանի»: Դրանով արտահայտվում է սիրո և հարազատու-
թեան այն ղգացմունքն ու գիտակցութունը, որ ժողո-
վուրդը ցուցաբերում է դեպի Կարմիր Բանակը:

Սովետական Միութեան ժողովուրդներին անխախտ բա-
րեկամութեան և Սովետական կենարար հայրենասիրութեան
մեծ ուժը իր ամբողջ խորութեամբ ու վճռական նշանա-
կութեամբ հանդէս եկավ Հայրենական Մեծ պատերազմի
ժամանակաշրջանում: Սովետական Միութեան Հայրենական
Մեծ պատերազմը հանդիսացավ ՍՍՌՄ ժողովուրդների բա-
րեկամութեան և Սովետական մարդկանց հայրենասիրու-
թեան իսկական քննութունը:

Դադտագողի, ուխտագրուժ հարձակում սկսելով Սովե-
տական Միութեան դեմ, գերմանական Ֆաշիստները սին
հույսեր էին տածում, թէ իբր Սովետական բազմազգ պե-
տութեան մեջ կոնֆլիկտներ կսկսվեն տարբեր ազգութուն-
ների ու ժողովուրդների միջև, ասպտամբութուններ կծա-

¹ Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրե-
րին, Երևան, 1943, էջ 10:

գէն և երկիրը կտրոհվի: Պատերազմը ցույց տվեց, որ գերմանական ֆաշիստները չարաչար սխալվել էին իրենց հաշիվներում: Նույնիսկ պատերազմի սկզբնական շրջանում սովետական զորքերի կրած ժամանակավոր անհաջողությունները ոչ միայն չթուլացրին, այլ, ընդհակառակը, էլավելի ուժեղացրին բանվորների ու գյուղացիների դաշինքը՝ Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը:

Անմիջականորեն արտահայտելով աշխատավորական լայն մասսաների տրամադրություններն ու ապրումները, ժողովրդական ստեղծագործությունը առավել պայծառությամբ է դրսևորել Հայրենական պատերազմի համաժողովրդական բնույթը: Ժողովուրդը խորապես ըմբռնել է գերմանական ֆաշիստների ուխտադրուժ վարքագիծը:

Սովետական երկրի վրա կախվեց ահավոր վտանգ՝ «Մեր երկիրը խուժեց կատաղած նեոը, մեզ տիրել է ուղում գոռոզ Հիտլերը»: Բայց հենց այդ ահավոր վտանգն էլ համախմբեց ու ամրապնդեց սովետական ժողովրդի ուժերը: Մի շարք երգերում՝ վերաբրտագրված է սովետական մարդկանց ցասումն ու ըմբոստացումը գերմանական դավթիչների դեմ և ժողովրդի պատրաստակամությունը՝ կռվի ելնելու երկիրը պաշտպանելու համար: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թշնամու դեմ կռվելու այդ պատրաստակամությունը համատարած ցանկություն է. սա է հենց համաժողովրդական, Հայրենական պատերազմի առանձնահատկություններից մեկը:

Միրած ողջիկը փառաբանում է «քաջ կամավոր զինվոր» յարին, որը՝

Մուրճը գցեց, սուրն առավ՝

Դեպի կռվի դաշտը թռավ¹:

Հայրենական պատերազմի շրջանի ժողովրդական բանահյուսության մեջ տիրապետողը հայրենասիրական-հերոսական ոգին էր: Հերոսականությունը մեր հասարակական

¹ Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին, Երևան, 1943, էջ 52:

կյանքի այս էտապում չի կարելի սովորական տրամագրություն համարել Սյդ շրջանի մեր ամբողջ կյանքի էությունն ու առաջնորդն ազգակն էր դա: Ահեղ ու դաժան թըշնամուն հաղթելու համար հարկավոր էր գործադրել բոլոր ջանքերը, լարել բոլոր ուժերը:

Ամբողջ Սովետական Միությունը, ամբողջ սովետական ժողովուրդը Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում ապրում և աշխատում էր մի նշանաբանով՝ «Ամեն ինչ ուղղաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար»: Հենց այդ հայրենասիրական ոգին էր, որ սովետական ժողովրդի մեջ անշեջ էր պահում հաղթանակի անսասան կամքը և պայծառ լավատեսությունը: Ուսումնասիրելով Հայրենական Մեծ պատերազմի շրջանի ժողովրդական բանահյուսությունը, մեզ համար առավել բացահայտ է դառնում այն ճշմարտությունը, որ ժողովուրդը իր առօրյայի և կյանքի բոլոր կողմերով, իր ապրումներով ու զգացումներով միշտ կանգնած է եղել ժամանակի ամենահրատապ ու կենսական խնդրի իրագործման բարձրության վրա: Ամենուրեք՝ ուղղաճակատի կյանքին, պարտիզանների, կամ թե թիկունքի մարդկանց աշխատանքներին վերաբերող ստեղծագործություններում անմիջապես երևում է հերոսական-հայրենասիրական այն ընդհանուր տրամագրությունը, որ հատուկ էր Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանին: Հերոսական-հայրենասիրական տրամագրությունն է իշխողը Հայրենակուն պատերազմի շրջանի ժողովրդական բանահյուսության նույնիսկ այնպիսի երկերում, որոնք իրենց բնույթով լիբիկական-ինտիմ զգացմունքների շրջանակներով են սահմանափակված: Այսպես, օրինակ, ուղղաճակատ ճամփելու երգերը, որոնք արտահայտում են մոր, սիրած աղջկա, հարազատների զգացմունքները:

Նախառելյուղիոն շրջանի հայկական բանահյուսության մեջ պահպանված գինյուրի երգերը ցույց են տալիս, թե որպիսի արմատական տարրերություն կա բանահյուսության այդ ժանրի հին և նոր ստեղծագործությունների

միջև, Թախիծ և հուսալքություն — ահա բնորոշ գիծը զին-
վորի հին երգերի մեջ.

Էն անդեր մաշինեն շրվիաց ու գնաց,
Իմ յարիս աղլուխը ձեռումը մնաց.
Մացինք չուերին,
Վա՛յ մեր օրերին¹:

Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի ժողո-
վրդական բանահյուսության մեջ ուղղմաճակատ մեկնելու,
վերագարձի, սպասումի լիրիկական ապրումները ամենից
առաջ արտահայտում են պայծառ լավատեսություն և այն
բարձր նպատակի գիտակցությունը, որով տողորված է ամ-
բողջ սովետական ժողովուրդը: Ռազմաճակատ մեկնելը սո-
վետական մարդկանց կողմից քնկարվում է հպարտության
ու արժանապատվության խոր գիտակցությամբ: Ժողովրդ-
րական խաղիկների մեջ սիրած աղջիկը աներեր հավատում
ու հաստատ համոզմունքով է ճանապարհում յարին ուղ-
մաճակատ.

Էս առուն ջուր է գնում,
Դնացքը հւր է գնում,
Իմ յարը մեջը նստած,
Կովի ճակատ է գնում:

Տղա, արևիդ մեռնեմ,
Տված բարեկից մեռնեմ,
Բանակ զնացող յար ջան,
Կյանքիդ, արևիդ մեռնեմ²:

Սիրած աղջիկը հավատացնում է Հայրենիքի պաշա-
պանին, որ իր խոստումը հաստատ կպահի.

Բանակից եկար,
Քեզ առնելու
Ուխտ ու նպատակ ունեմ³

¹ Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 419:

² Վ. Սամվելյան, Հայ ժողովրդական երգեր (սովետական
շրջան), անտիպ:

³ Նույն տեղում:

Ուշագրավ է այն հանդամանքը, որ զինվորի հին երգերում ոչ մի հույս չկա զինվորի վերադարձի մասին և ոչ էլ համակրանք ու ոգևորություն զինվորի մղած կռվի նկատմամբ:

Աշքս զցել եմ սարին,
Ոտքս տըվել լեռ քարին,
Էրթա ու էլ ետ չգա,
Քեզ զինվոր գրած տարին¹:

Ժամանակակից երգերի համար ընդորոշը, ընդհակառակը, հենց սպասումի և հաղթական վերադարձի բռնը հալատն է: Դա բխում է Հայրենիքի պաշտպանության նկատմամբ սովետական մարդկանց ցուցաբերած բարձր գիտակցությունից.

Հաղթանակիդ կսպասեմ,
Սար դռնիդ մեռնեմ, օրդեն կսաղս
Յար ջան, գալուդ կսպասեմ,
Քեզ որ տեսնեմ, կարոտս կառնեմ²:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում տեղի ունեցող իրադարձությունները և ամբողջ Հայրենական պատերազմի ընթացքն իր էությաներով անմիջական անդրադարձում է գտել ժողովրդական ստեղծագործության մեջ: Շատ ընդորոշ է այս տեսակետից, օրինակ, Հայրենական պատերազմի առաջին շրջանին վերաբերող մի երգ, որտեղ ժողովուրդը իր նվիրական ցանկությունն է հայտնում կրավող մարտիկին.

Ջարդիր մեր չար թշնամուն,
Հասնես մուրադիդ, տղա,
Հետ մի կաց, առաջ դնա,
Քեզ մատաղ, հերոս տղա³:

1 Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 420:

2 Վ. Ս ա մ վ ե լ յ ա ն, Հայ ժողովրդական երգեր (սովետական շրջան), անտիպ:

3 Ն ու յ ն տ ե ղ ու մ:

Հայտնի է, որ Հայրենական պատերազմի առաջին շրջանում գերմանա-ֆաշիստական զորքերը զավթել էին Սովետական Միության տերիտորիայի մի մասը և շարունակում էին առաջ շարժվել մեր զորքերի համար անրարենդ-պատտ պայմանների հետևանքով: Հենց այս շրջանին է վերաբերում վերոհիշյալ ժողովրդական երգը:

Ժողովրդական երգերի մեջ անդրապարձում են ստացել նաև Հայրենական պատերազմի հետագա էտապները: Այսպես, օրինակ, պատերազմի ընթացքում արմատական շրջադարձ հանդիսացող Ստալինգրադյան ճակատամարտի առթիվ սովետահայ գուսանը փառարանում է Շոդջ աշխարհին զարմացրած՝ Ստալինգրադի պաշտպանների քաջագործությունը, ժողովրդական բանահյուսության պոետական-արտահայտչական միջոցներով ընդհանրացնում և հաստատում է այն մեծ ճշմարտությունը, որ Սովետական Միությունը անպարտելի է:

...Քամին մեծ սարին չմաշեց, չէր էլ կարող, անսասան էր,
Փրփուրը ծովին չքշեց, չէր էլ կարող, անսահման էր,
Փայտը սղոզվաթին չտաշեց, չէր էլ կարող, անսասան էր...¹

Ռազմաճակատի կյանքը արտացոլող ժողովրդական բանահյուսության մեջ կարևոր տեղ են գրավում այն ստեղծագործությունները, որոնք պատկերում են կովոդ մարտիկի կերպարը: Դեռևս իր ժամանակին մեծ լեհիսնն ասել է, որ սովետական մարտիկների հիմնական հատկությունը պետք է լինի քաջությունը, խիզախությունը, պայքարում վախ չունենալը, մեր հայրենիքի թշնամիներին դեմ կռվելու պատրաստակամությունը: Ժողովրդական ստեղծագործության մեջ վառ անդրապարձում է գտել սովետական մարտիկների ալֆ քարձր հատկությունները՝ համարձակությունը, նախաձեռնությունն ու հնարամտությունը:

Ժամանակակից ժողովրդական բանահյուսության մեջ փառարանվում է սովետական մարտիկների հերոսությունը, նրանց անձնուրացությունը՝ ու նվիրվածությունը Հայրեն-

¹ Գուսանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 65:

նիքին: Բազմաթիվ երգեր կան նվիրված Սովետական Միության հերոսներին, նրանց մարտական սխրագործություններին: Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզի աշխատողները մի երգ են ստեղծել Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի մասին: Երգի մեջ մեծարվում է հերոսի սխրագործությունը. «Քս կատարած քաջությունը զարմանք թվաց մարդկության, գնդացիների անցքը փակիր, կուրծքդ տալով դու նրան»: Հենց այդ սխրագործության համար էլ ժողովուրդը անմահացնում է հերոսին.

Մանուկները միշտ կհիշեն քո մասին,
Պստեները միշտ կգովեն հերոսին,
Եվ բազմազգ ժողովուրդը միասին
Միշտ կհիշեն անվախ ու քաջ հերոսին¹:

Բազմաթիվ երգեր կան նվիրված Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանին: Ժողովրդական մի երգում հերոս օգաչուն պատկերվում է որպես շանթահարող կայծակ.

— Էն կայծակն է վառվում,
Էն ո՞վ կխփի.
— Էն Նելսոնն է երկնքից
Կրակ կթափի²:

Ժողովուրդը հպարտության գիտակցությամբ փառաբանում է թե երկնքում, թե ծովերում թշնամուն ցաք ու ցրիվ անող իր քաջ զավակ հերոս Նելսոնին, «գերմանական պողպատ պատենեջը քանդող» գնդապետ Դարբինյանին, ֆաշիստներին սարսափեցնող կապիտան Արամ Միրզոյանին, Կերչում հերոսաբար զոհված գնդապետ Սիմոն Զաքյանին և շատ ուրիշներին:

Սովետական կովող մարտիկի կերպարի բնութագրման համար շատ կարևոր է մատնանշել մի հանգամանք. դա

1 Վ. Սամվելյան, Հայ ժողովրդական երգեր (սովետական շրջան), անտիպ:

2 Ժողովրդական և զուսանական երգեր, Երևան, 1949, էջ 56:

Թշնամու նկատմամբ ունեցած անողոք ատելությունն է։ Այդ ատելությունը բխում է արդարացի և ազնիվ նստատեղներից։ Սովետական ծաղկուն քաղաքներն ու գյուղերը ոչնչացնող, անպաշտպան ու անդեն մարդկանց սրի քաշող դաժան թշնամու դեմ սովետական մարտիկների ատելությունը և նողկանքը միանգամայն հասկանալի է։ Այդ արդարացի ատելությունը կոփում է ռազմիկների կամքը և վճռականությունը թշնամուն ոչնչացնելու գործում։

Վիրավորված զինվորի նամակում էլ երևում է սովետական մարտիկների անսասան կամքն ու բարձր գիտակցությունը.

Մի լար, մայրիկ, որ քո որդին
կւլում դո՛ւ գնա,
Քո որդու տեղ հայրենիքը
Անպարտ կմնա¹։

Հայրենական Մեծ պատերազմի ռազմաճակատային կյանքի հետ մեկտեղ և դրան զուգընթաց սովետահայ ժողովրդական ստեղծագործության մեջ լայնորեն վերարտադրվել է սովետական թիկունքի աշխատանքներն ու թշնամու օկուպացված տերիտորիայում գործող պարտիզանների մարտական գործողությունները։

Առանց սովետական թիկունքի ամրության և հզորության չէր կարելի պատկերացնել սովետական զորքերի հաջողությունները ռազմաճակատում։ Ժողովրդական ստեղծագործության երդերում ռազմակողմանէորեն ներկայացվում է թիկունքի մարդկանց աշխատանքային սխրագործությունները։ Ռազմաճակատ մեկնած աշխատողներին փոխարինում են կանայք ու հասակավորները։ Գուսան Աշխույժը «Հայրենասեր աղջիկը» երգում գովերգում է սովետական կանանց անձնուրաց աշխատանքը. «Աղջիկ ու կին կապել են վաշտ» և «օգնում են մեր քաջ բանակին»։

Գուսանը շատ գեղեցիկ պատկերով ներկայացնում է սովետական թիկունքի և ռազմաճակատի սերտ միասնու-

¹ Գուսանյան և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 54։

թյունը, նրանց շահերի ու նպատակների ներդաշնակությունը.

Այնտեղ ճակատն է մարտերի,
Այստեղ ճակատն է արտերի:
Թիկունք-ճակատ միասնական
Կռվում են կռու ու անթերի¹:

Մի այլ երգում (ՎՄով բերքի տարին) ժողովրդական երգիչը դիմում է տրակտորին, որ «կոլխոզի աըտերը վարի, էս տարին դարձնենք ծով բերքի տարին», «Անիրավ դուշմանին դարբեզար անենք»: Հայրենական պատերազմի շրջանում հատկապես մեծ նշանակություն ունեցավ կանանց աշխատանքը, և այդ հանգամանքը իր անդրադարձումն է գտել նաև ժողովրդական երգերում.

...Տրակտորիստ աղջիկ ջան, քշիր տրակտորդ,
Թող ուրախ, քրտնաջան անց կենա օրդ,
Օղնիր դու բանակիդ, աղիզ եղրորդ,
Որ անկուշտ դուշմանին հողաթաղ անենք²:

Թիկունքի մարդկանց անսասման սերն ու հողատարու-թյունը դեպի հարադատ բանակը վառ ցուցադրում է ստացել բուն ժողովրդական բնույթ ունեցող մի երգի մեջ: Այդ երգը շատ անմիջական ու պարզ պատկերներով ներկայացնում է համաժողովրդական օգնությունը ուղղամտակաւորին և դա վերարտադրված է թեղի մանող պառավ կնոջ ցանկությամբ՝ գուլպա ուղարկել ուղղամտակաւոր, մարտիկներին.

Թեղի եմ մանում,
Քունս չի տանում,
Գուլպա եմ բանում,—
Գուլպեն՝ իմ բային,
Գյուլեն՝ Հիտլերին³:

1 Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին, Նրևան, 1943, էջ 20:

2 Նույն տեղում, էջ 31:

3 Գուսանական և ժողովրդական երգեր, Նրևան, 1949, էջ 69:

Ժողովրդական բանահյուսության մեջ մեծ տեղ է գրավում նաև դերմանական ֆաշիստների դեմ ուղղված ժողովրդական երգիծանքը: Հատկանշական է այն հանգամանքը, որ հենց Հայրենական Մեծ պատերազմի շրջանի ժողովրդական ստեղծագործության մեջ մեծ աշխուժացում է նկատվում երգիծանքի ժանրում: Ֆաշիստական դավթիչների դեմ գործադրված երգիծանքը սպանիչ սարկազմ է: Եթե ռազմաճակատում մեր մարտիկները ֆիզիկապես են ոչնչացնում թշնամուն, ապա ժողովուրդը իր սուր ու կծու խոսքի միջոցով բարոյապես է ոչնչացնում թշնամուն: Ժողովրդական բանահյուսության մեջ այս շրջանում լայն տարածում է ստանում հին բանահյուսության ժանրերից մեկը՝ անեծքը: Անեծքով ժողովուրդը սպանում է թշնամուն: Անեծքի մեջ ժողովուրդը ներգնում է իր հագուստ-բոլորը ատելություներ: Այդ անեծքները մեծ մասամբ հասցեագրված են Հիտլերին: Ժողովուրդը Հիտլերին ներկայացնում է որպես ֆաշիզմը բնահանրացնող «խմոր»: Անեծքների մեջ նշանավոր է գուսան Սերոբի անեծքը: Այդ անեծքում գուսանը ամենախժանձր գուշներով, հաջողված պատկերներով ու արտահայտություններով խտացրել է ժողովրդի կուտակված ատելությունն ու նողկանքը: «Ձոր մեջքըդ կրակով վառեմ ու դաղեմ», «եղունգներս սրեմ րկումըդ թաղեմ», «Չսատկես, մղկտաս ու ծալվես Հիտլեր», — անվերջանալի տարափով նղավում է գուսանը:

Դու օձ ես, ողնին քեզ բռնի զիշեոին,
Գլուխդ միշտ դարկես ողնու փշերին,
Ծակծկվես, չկծես դու ուրիշներին,
Քոռանաս, բզկտվես, խափարես, Հիտլե՛ր¹:

Մի ուրիշ անեծքի մեջ Հիտլերի դեմ ժողովրդի ատելությունը իր բարձրակետին է հասնում. Հիտլերին համարում են Գաղաններից ամենավայրագը՝ «Չախալն է եղել քո հալսու հերը», «Գրեկն են եղել քեզ սնուկները», «Հիտ-

¹ Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին, Երևան, 1943, էջ 16:

լեր, շնից էլ զազիր ես ծնվեալ: Ժողովուրդը Հիտլերին ցանկանում է ամենագոյաման պատիժները՝ «փշե մազով մազվեա, Հիտլեր», «գժտիքի մեջ գազվեա, Հիտլեր», «Սե շան նման թաղվեա, Հիտլեր»: Ժողովրդի անեծքը պատահիլ չէ. նա իր ձեռքով է ցանկանում պատժել պատան մարդակերին:

Մենք պիտի հանենք աչքերդ ու ունքդ,
Զբիւ աշխարհից անունդ ու շուքդ...¹

Երգիծանքի մեջ կարեւոր տեղ ունեն հակաֆաշիստական քառյակները (ЧАСТУШКИ): Այս ժանրը շատ մեծ տարածում ունի ամբողջ սովետական ժողովրդական բանահյուսության մեջ: Հակաֆաշիստական այդ քառյակները նույնպէս ոչնչացնող սարկազմով են տողորված ֆաշիստական հորդաների դեմ: Այդտեղ ծաղրվում է և ոչնչացվում ֆաշիստական զորքերի անհաջողությունները, նրանց բանակի բարոյական թուլությունը և այլն.

Լիկում են սոֆն ու շառը
Ֆաշիստների աշխարհը,
Հիտլերը թող վնդստա,
Պրծալ հացի պաշարը²:

Հիտլերը, ինչպէս անեծքում, այս քառյակներում էլ «շուն» է անվանվում, սակայն նա ոչ թե սովորական շուն է, այլ «կատաղած շուն».

Հիտլերի պես շուն չկա,
Կատաղիլ է քուն չկա,
Մեր սովեաի հողումը
Շուն Հիտլերին բուն չկա³:

Քառյակներում ծաղրվում են ֆաշիստական գավթիչների սին հույսերը սովետական երկրին տիրանալու և նրա

¹ Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին, Երևան, 1943, էջ 41:

² Նույն տեղում, էջ 58:

³ Նույն տեղում:

հարստությունները օգտագործելու մասին, ժողովուրդը ծաղրում է ֆաշիստների պարծենկոտությունը, նրանք «սովազակ» են ու զգավղակ», բայց մարտում՝ նրանց հաղարի հախիցն եկավ դանակոյ մի քաջ կազակ»:

Գերմանա-ֆաշիստական և ճապոնական ռազմամուկների ջախջախմամբ սովետական ժողովուրդը պատմական մեծ հաղթանակի հասավ: Սովետական ժողովրդի հաղթանակը փայլուն կերպով դրսևորեց սովետական հայրենասիրության և ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության կենսահաստատ ուժը: Պատերազմի հաղթական ավարտումը ապահովեց սովետական ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքը: Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակը համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող մի կարևոր իրադարձություն էր:

Ժողովրդական րանահյուսության մեջ թշնամու դեմ տարած հաղթանակը ներկայացվում է որպես մեծագույն ցնծություն: Հայրենիքը դրկարաց ընդունում է «Յվրոպայի խորքերից» հաղթանակով վերադարձող իր զավակներին, որոնց կրծքերին շողում են «Սովետի շքանշանները»: Հաղթանակով վերադարձող մարտիկի հանդիպման տեսարանը գունեղ դրսևորում է ստացել Շնանե ժողովրդական երգում. հարցնում են՝ Շնանե մայրիկ, ուր կերթաս, ծերացել ես ղուր կեթաս».

— Վայ բալա ջան, մի ասե,
էսօր ջահել օրս է,
Տղես կովեն է եկե,
... Գուճանին հողն է դրե¹:

Ժողովրդական րանահյուսության մեջ վառ արտացոլում է դտել հաղթանակին հասնելու գործում սովետական ժողովուրդների պերն ու միասնությունը: Առանձնապես մեծ տեղ են զբաղում ուսում մեծ ժողովրդին նվիրված երգերը: Ռուս ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում սովետական եղբայրական, ժողովուրդների պայքարն էր գլխա-

¹ Գուճանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 68:

վորում քնդդեմ ֆաշիստական ջարդարարներին: Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ ոուս ժողովուրդը պատկերվում է որպես հզոր ու անհաղթ ժողովուրդ:

Հազար երդով, հազար փառքով,
Գովքդ երկեմ ոուս ժողովուրդ,
Սուրդ կտրուկ, բազուկդ հաղթ,
Փառքդ վառման, ոուս ժողովուրդ¹:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ մեծ տեղ են գրավում այն երգերը, որոնք փառսրանում են Հայրենական Մեծ պատերազմի զորավարներին: Իրենց թարմությամբ և գեղարվեստական առանձնահատկություններով աչքի են ընկնում հայ ժողովրդի տաղանդավոր զավակ բանակի գեներալ Բաղրամյանի մասին ստեղծված բազմաթիվ երգերը: Ժողովուրդը ազնիվ ու բարձր հպարտությամբ փառսրանում է Հայրենական Մեծ պատերազմի «պանծալի գեներալի» մարտական քաջագործությունները:

Անարդ թշնամու դեմ դու հուր ու կրակ,
Պանծալի գեներալ, դու քաջ Բաղրամյան²:

Սովետական ժողովրդի պատմական մեծ հաղթանակը հեշտությամբ չի ձեռք բերվել: Այդ հաղթանակի համար իրենց կյանքն են զոհարել սովետական հայրենասերները:

Ժամանակակից բանահյուսության մեջ ժողովուրդը անթառամ ու հավերժ պահպանում է հայրենիքի համար ընկած հերոսների հիշատակը. «Հայրենիքի սիրո համար զոհեր ենք տվել անհամար», — ասվում է ժողովրդական մի երգում և ասպա՝

Հայրենական պատերազմի
Ընկած հերոսները հիշենք,
Մեր ծաղկավետ բուրաստանի
Հնձված ծաղիկները հիշենք³:

1 Գուսանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 46:

2 Նույն տեղում, էջ 55:

3 Նույն տեղում, էջ 59:

Հայրենական Մեծ պատերազմում զոհված ռազմիկների պաշտառ հիշատակին է նվիրված գուստան Աշոտի «Հուշարձան» երգը: Մեկուգիկ ու գեղարվեստական տպավորիչ պատկերներով գուստանը Հայրենական պատերազմի զոհված մարտիկների հիշատակը հավերժացնում է Հուշարձան-աղբյուրների պատկերով: Հայրենիքի համար մղված անեղ կռիվում ընկած հերոսները հավերժացել են «ամեն հոգում, ամեն սրտում»:

Նրանց վեհ, արդար սրտերից,
Բխում է սառն, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս
Կտանք նրանց սիրո համբույր²:

Գուսանը բանաստեղծական խոր քնդհանրացմամբ ցույց է տալիս մեր ժողովրդի մեծ երախտագիտությունը հաղթանակի համար իրենց կյանքը նվիրած զավակների նկատմամբ:

Այսպիսով, սովետական հայրենասիրություն և ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամություն զաղափարները, ինչպես տեսնում ենք, գեղարվեստական խորությամբ ամրոցական արտացոլում են գտել սովետահայ ժողովրդական բուռնագործության մեջ: Այդ վսեմ ու բարձր զաղափարներով տոգորված մեր հայրենիքի ժողովուրդները Հայրենական Մեծ պատերազմում հասան համաշխարհային-պատմական մեծ հաղթանակի: Սովետական հայրենասիրություն և ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության ուժը իր դրսևորումն է ստանում մեր կյանքի հետագա էտապներում:

ՀԵՏՊԱՏԵՐԱԶԻՑԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԸ
ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԻՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ

Ժողովրդական բանահյուսությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում շարունակում է ակտիվ ու ներգործոն դեր խաղալ հասարակական կյանքում: Սովետական

² Գուսանական և ժողովրդական երգեր, էջ 73:

ժողովրդի կողմից կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ գործը և մարողջ աշխարհում ծավալված պրոգրեսիվ մարզկուլթյան պայքարը խաղաղության համար դարձել են հետպատերազմյան ժողովրդական ստեղծագործության կենտրոնական թեմաները:

Հետպատերազմյան ժողովրդական բանահյուսությունը ավարտված էր ապ չի հանգիստանում. սակայն հետպատերազմյան շրջանի մինչ այժմ եղած ստեղծագործությունները հնարավորութուն են տալիս ընդհանուր եզրակացությունների հանգել այս էտապին համապատասխանող ժողովրդական ստեղծագործության բնույթի, հիմնական խնդիրների ու մոտիվների մասին:

Հետպատերազմյան իրադրությունը ժողովրդական բանահյուսության մեջ անդրադարձում է ստացել բազմակողմանիորեն: Այդ իրադրությունը բնութագրվում է երկու տեսանկյունից: Մի կողմից՝ Սովետական Միության ժողովուրդների հաղթական առաջընթացը դեպի կոմունիզմ, Սովետական ժողովրդի խաղաղ ու ստեղծագործական աշխատանքի նվաճումները, իսկ մյուս կողմից՝ միջազգային կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, աշխարհի պրոգրեսիվ մարզկուլթյան պայքարը հանուն խաղաղության:

Պատերազմը ծանր հետևանքներ թողեց սովետական ժողովրդի կյանքում: Ահալոր չափերի էին հասնում ֆաշիստական հրոսակախմբերի պատճառած վնասները. հրկիզվել և քարուքանդ էին արված բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, հափշտակվել էր սովետական ժողովրդի հարստությունն ու ունեցվածքը, ավերվել հանքերն ու գործարանները: Պատերազմի հաղթական ավարտից հետո կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ձեռնամուխ եղան երկրի ավերված տնտեսության վերականգնմանը: Հետպատերազմյան հնգամյակի հիմնական խնդիրը հանդիսացավ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում վերելքի կազմակերպումը և նախապատերազմյան մոկարդակին հասնելը: Սովետահայ ժողովրդա-

կան ստեղծագործության մեջ փառաբանվում է «Հնգամյա-
կի նոր օրենքը», այն մեծ խնդիրներն ու հեռանկարները,
որոնք կանգնած են սովետական ժողովրդի առաջ: Գուսան
Հավասու երգերից մեկում, օրինակ, գրվատվում է «Հնգա-
մյա մեծ սլանը», ցուցադրում հնգամյա սլանով նախա-
տեսված այն սլայծառ հեռանկարներն ու խնդիրները, որոնք
ողեշնչում են սովետական մարդկանց: Այնտեղից իմանում
ենք, որ քառասունվեցից մինչև հիսուն թիվը կունենանք
շատ պողպատ, չուգուն, ռաբբիտ, երկաթաձանք, քարա-
ծուխ, նավթ, մեքենաներ, «մետաղահատ շատ դաղդաճներ,
էներգիա, ավտոմոբիլներ...»:

Հացահատիկ պահեստներով,
Բամբակ ու բուրդ վադոններով,
Վուշ ու հաճաք տոնաններով...

Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերվում է
հետպատերազմյան խաղաղ, ստեղծագործական աշխատան-
քը: «Ծովը ցամաք, ցամաքը ծով կդառնա», — այս պատ-
կերավոր խոսքով գուսանը բնութագրում է սովետական
մարդկանց հրաշագործ ուժը: Հետպատերազմյան շրջանի
բանահյուսության մեջ հատկապես լայն տարածում են
ստացել Հաղթանակի կամուրջին նվիրված երգերը, որոնք
մարմնավորում են մեր մարդկանց շինարարական, աշխա-
տանքային պայծառ: Փառաբանվում է Հաղթանակի մեծ
կամուրջի ճշեքը ու շնորհքը, թե ինչպես այդ կամուրջը
ճարհե կտա գալիք դարերի սերունդներին: Եթե Հայրե-
նական Մեծ պատերազմի տարիներին սովետական հայրե-
նասիրությունը իր վառ գրանորումը գտավ թիկունքում
ու ռազմաճակատում սովետական մարդկանց տոկունու-
թյան ու անձնագոհության մեջ, թշնամուն ջախջախելու
համար մղած հերոսական մարտերում, ապա հետպատերազ-
մյան շրջանում սովետական հայրենասիրության կենսա-
կան ուժը արտահայտվեց մեր մարդկանց աշխատանքային
խանդավառության մեջ, որի նպատակն էր բուժել պատե-
րազմի ծանր վերքերը և սովետական ժողովրդի կյանքի
սլայմանները նոր աստիճանի բարձրացնել:

Մենք կրուժենք քո ստացած վերքերը
Ավելի լավ դեղով, անդին Հայրենիք.
Զավակներդ բոլոր ճիգ ու ջանքերը
Նվիրված են քո մեծ դործին, Հայրենիք¹:

Աշխատանքի պատկերը հետպատերազմյան ժողովըրդական բանահյուսության մեջ ավելի է խորացված ու ընդլայնված: Դա անշուշտ, կապված է կյանքի զարգացման, աշխատանքի նոր միջավայրի ու նոր խնդիրների հետ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հետպատերազմյան աշխատանքային երգերում՝ ակնհայտ է աշխատանքային տարրեր պրոցեսների ցուցադրումը: Ուշագրավ են, օրինակ, հանքավորի քառյակները, որտեղ ցուցադրված են արդյունաբերության ասպարեզում ձեռք բերված նվաճումները.

Զանդեզուրում հանք բացին,
Երկաթուղին զցեցին,
Էն դարավոր լեռները
Հաղար դոտով կապեցին²:

Կոլտնտեսային աշխատանքի գեղարվեստական պատկերումը հետպատերազմյան երգերում աչքի է ընկնում իր բազմակողմանիությամբ: Մի շարք երգերում իրենց աշխատանքն են պոլերգում բամբակագործները, այլ երգերում փառարանվում է «Կոլսոզական դաշտերում հերոսական գործ կատարող, բարձր անուն հանած ծխախոտի ազջրկները»: Այդ տեսակետից շատ ուշագրավ է այգեգործների երգը, որտեղ ներկայացվում է խաղողաքաղը. «Գե քաղենք սեը—փոենք արեը, գե քաղենք լավլարին — էս տարվա բարին»: Երգի մեջ երևում է մարդկանց գոհունակությունն ու հրճվածքը, աշխատանքի հաճույքը:

Հետպատերազմյան աշխատանքի երգերում նորը տեխնիկայի և գիտության նվաճումների ներգրություն է, որը արմատական հեղաշրջում է կատարել մեր անտեսական կյանքում:

Սովետական մարդկանց կյանքի ու գործունեության

¹ Գ ու ս ա ն Հ ա վ ա ս ի, Բ ու Ր ի ու Ն ք, 1950, Երևան, էջ 33:

² Ժողովրդական ստեղծագործության տան ֆոլկլորային բաժնի նյութերից:

ամենարնորոջ գիծը՝ աշխատանքային խանդավառությունն է: Ամեն մի աշխատող, ուր բնագավառում էլ աշխատելիս լինի, իր բոլոր ուժերն ու կարողությունները դորձադրում է հայրենիքին օգտակար լինելու համար:

Հետպատերազմյան շրջանի սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ աչքի ընկնող տեղ է գրավում հայրենագարձության թեման: Տարագիր հայության վերագարձը արտասահմանից գեալի Սովետական Հայաստան, որն իրագործվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության նախաձեռնությամբ, հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող կարևոր իրադարձություն էր: Բազմադարյան պատմությունը ցույց է տրվել, որ հայ ժողովրդի ճակատագիրը մեծ չափով ծանրացել է տարրեր ժամանակներում և տարրեր առիթներով՝ գերազանցապես սոցիալ-քաղաքական դրդապատճառներով մայր երկրից գաղթելու, տարագրության գնալու փաստով: Ավանդական բանահյուսությունը սրահյանել է պանդխտության երգերի մի հարստ շարք, որտեղ, սկսած դեռևս միջնադարից մինչև 19-րդ դարը, տարրեր ելևէջներով ցուցադրված է «վաթանից» զրկված «զարիրներ» սրտամորմոք ապրումները: Պանդխտության երգերում մենք տեսնում ենք մի կողմից՝ սոցիալական կյանքի այն դաժան սրայմանները, որոնք պատճառ են դառնում տարագրության, իսկ մյուս կողմից՝ օտար բնագավառների դաժանությունից հարկադրված արտագաղթը: Պանդխտության այդ երգերում ցուցադրված է դարիքի դառը կյանքը, նրա անհուն կարոտն ու ապրումները.

Կարիքի տիրոջ հացն աղու ի,
Կարիքներաց կյանք մահու ի,
Իրենց օրերն զարգամահով,
Մընան իրարուց կարոտով:

Պանդխտության երգերի մեջ ամենատարածված սիմվոլը կոռունկն է, որին զիմում են դարիքները, հաղորդակից

1 Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 370:

էն գարձնում իրենց հոգեկան ապրումներին ու իղձերին.

Կանչե կոռնկ, կանչե, քանի գարուն է,
Ղարիրներու. սիրտը զունդ-զունդ արուն է,
Քո իջած տեղդ Հայիր-չիման է,
Աշխարհին արեգակ, ինձի դուման է¹:

Պատահական չէ, որ պանդխտության այդ երգերի մեջ տիրապետող մոտիվը՝ թախիծի ու կարոտի մոտիվն է:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ հայրենադարձության երգերը միանգամայն այլ բնույթ ունեն, որովհետեւ արդյունք են բոլորովին այլ հանգամանքների ու պայմանների: Հայրենադարձությունը տարագիր հայության հոգեկան վերքերի բուժումն էր և հասկանալի է, որ այս երգերը տոգորված պետք է լինեն համակ ուրախությամբ ու լավատեսությամբ: Այդ երգերի մեջ արտահայտվող յնձուրդները երկկողմանի է: Մեծագույն հրճմանքով են տոգորված իրենց մայր հայրենիք վերադարձող հայերը, յնձուրդամբ ու գրկաբաց է բնդունում սովետական հայ ժողովուրդը իր տարագիր հատվածին: Հայրենադարձ տարագիր գուսանը վերհիշում է տառապալից անցյալը՝ «Օտարության մեջ, հեռու տեղերում, թափառում էինք անհույս ու լքված», մինչև որ հասնում է Սովետական Հայաստան վերադառնալու երջանիկ ու բերկրալից օրը:

Եկա գիրկդ Սովետական Հայաստան,
Դարձել ես դու մի հոտավետ բուրստտան,
Ղարիր էինք, եկանք քեզ հետ ապրելու,
Հայրենական ծոցում ազատ շնչելու:

Ծաղկել են հանդերդ,
Անուշ են երգերդ,
Բուրում են վարդերդ,
Դաշտում Արարատյան²,

1 Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1951, էջ 373:

2 Գուսանական և ժողովրդական երգեր, Երևան, 1949, էջ 104:

Գուսան Աշոտը իւր երգում բարեմաղթում է «Հայրենիքի կարոտով սրգինների գալուստը մեր տուն՝ անուշ Հայաստան»։ Գուսան Հավասին նկարագրում է «պանդուխտ եղբայրներին» վերադարձը. «Տանջված հայերը վերադարձան, Հայաստանը խաղաղ տեսան»։

Հետպատերազմյան սովետահայ ժողովրդական բանահյուսության գաղափարական բովանդակութեան մյուս հիմնական մոտիվը միջազգային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների արտացոլումն է։ Իսկ միջազգային կյանքում, ինչպես հայտնի է, հետպատերազմյան ժամանակաշրջանում բավականին փոփոխություններ տեղի ունեցան։

Աշխարհի ժողովուրդները զգացին պատերազմի ապետներն ու ծանր հետեանքները։ Այդ բանն առավել ծանր էր սովետական ժողովրդի համար, որովհետեւ գերմանական բարբարոսների ավերածութեան ու դաժանութեան կրողը ամենից շատ նա եղավ։ Ահա թե ինչու աշխատավոր ժողովուրդը նշումում ու ատում է արյունահեղությունն ու պատերազմը, որն ուղղված է ժողովուրդների ստրկացմանն ու կոդալուտին։ Սովետահայ գուսանը արտահայտելով ժողովրդի անմիջական դանկությունը, բացագանչում է. «Մենք չենք ուզում կռիվ ու արյուն»։

Դեռ չեն ցամաքել
Աչքերը մայրերի,
Ու մխում են դեռ
Վերքերն աշխարհի¹։

Այս տեսակետից շատ ուշապրավ է ժողովրդական երգչի պարզ ու անմիջական հորինվածքը, որտեղ նա իր զայրույթն ու անսահման ատելությունն է հայտնում պատերազմի հրձիգներին՝ «կռվի հիմնադիրներին» դեմ։ Երգիչը

¹ Ժողովրդական ստեղծագործութեան տան ֆոլկլորային բաժնի նյութերից։

հիշում է պատերազմի ծանր հետևանքները. «Երբ տվին տղիս սև գիրը», «գլխիս պտտվեց երկիրը», դրա համար էլ նա քանի ողջ է՝ անիծում է պատերազմի հրձիգներին.

Մարիամ արևան եմ ես պառավ,
Հե՛լ չեմ սիրե կռիվ ու դավ,
Մեր Սովետի կարգերն են լավ,
Ֆաշիստներին դրոդ ու ցավ¹:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ ամենախիստ սարկազմով դիմակադերծ են արվում ու դատապարտվում իմպերիալիստական ագրեսիվ շրջանների ոտնձգությունները, լրտեսական ու դիվերսիոնիստական ակտերը, ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելը, սպառազինությունների խեղափոխ մրցավազքը, ագրեսիվ ուղղման ընկնելն ու դաշինքները և այլն:

Խաղաղության շարժումը իր մեջ ներգրավել է աշխատավոր մարդկության միլիոնավոր մասսաներին, առանց ազդու լիցիայի ու գավառական քի տարբերությամբ, որովհետև խաղաղության պահպանման գործը համաժողովրդական ցանկություն է: Այդ գաղափարով են տոգորված սովետահայ ժողովրդական բանահյուսության խաղաղասիրական երգերը:

Ելեք եղբայրներ բոլոր ազդու լիցիայի,
Կուռ դաշինք կրոնք մենք եղբայրության,
Խաղաղ աշխատանք, արդար մեր բրտինք
Չենք թողնի լափեն մեր չար թշնամիք²:

Խաղաղությունը ժողովուրդների պայծառ ապագայի լավագույն երաշխիքն է, նրանց երջանիկ ու ազատ կյանքի հիմքը: Թանկ է մեզ համար խաղաղությունը, որպես արևը և բնությունը, «խաղաղությամբ է շեն մեր սիրտն

¹ Ժողովրդական ստեղծագործության տան ֆոլկլորային բաժնի նյութերից:

² Երգարան, կազմեց Վ. Սամվելյան, 1951, Երևան, էջ 169:

ու տունը»,—ասվում է ժողովրդական մի երգի մեջ: Սովետահայ անվանի գուգան Աշոտը խաղաղությունը հերկայացրել է որպես կենդանի ելելություն, որպես կոնկրետ իրադարձություն:

Դու նոր ջրանցքի զվարթ ալիք ես
Լույս ու ծաղիկ ես, պայծառ զալիք ես,
Անուշ մայրիկ ես, քնքուշ բալիկ ես...
Ո՛վ խաղաղություն, դու վառ դարուն ես
Մեր հոգու, սրտի, երգի լեզուն ես:

Խաղաղության գործը ՍՍՌՄ ժողովուրդների համար առաջնահերթ ու կարևոր է, որովհետև դրա հետ է կապված ժողովրդի կյանքի հետադառ ծաղկումն ու բարգավաճումը:

Ժողովրդական բանահյուսության մեջ ցույց է տրվում, որ խաղաղության համար Սովետական Միության մղած պայքարը երբեք երկյուզից ու թուլությունից չի զալիս: Ընդհակառակը, պատերազմից հետո Սովետական Միությունն ավելի է հզորացել ու ամրապնդվել: Սովետական ժողովուրդը աշխարհի բոլոր ազատասեր ժողովուրդների հետ միասին խաղաղություն չի աղերսում, այլ պահանջում է որպես անհրաժեշտություն:

Հետպատերազմյան ժողովրդական բանահյուսության մեջ խաղաղության համար մղվող պայքարին զուգընթաց գեղարվեստական արտացոլում են ստացել սովետական ժողովրդի աշխատանքային նվաճումները, սովետական մարդկանց ձեռք բերած հաջողությունները կոմունիստական շինարարության մեծ գործում: Հետպատերազմյան ժամանակաշրջանում լուրջ տեղաշարժեր կատարվեցին գիտության և արվեստի բնագավառում: Սովետական ժողովրդի ձեռք բերած հաջողությունների ու նվաճումների ամփոփումն ու հետագա առաջընթացը, զարգացման հեռանկարներ գծեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 20-րդ սլաոմական համագումարը:

² Գ ու ս ա ն Ա շ ո տ, Գ ու ս ա նի սերը, Երևան, 1955, էջ 16:

Սովետական Միության Կոմունիստական պարտիան իր սրբազան պարտականությունն է համարում սովետական մարդկանց բարօրության ու բարգավաճման նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը: Սովետական ժողովուրդը հանձին Կոմունիստական պարտիայի տեսնում է իր շահերի և ձգտումների անդամաճան պաշտպանին: Կոմունիստական պարտիայի նկատմամբ սովետական ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը ելնում է ժողովրդի պայծառ գալիքի համար Պարտիայի անընդհատ և անդադրում հոգատարությունից:

Կոմունիստական պարտիայի Կենտկոմի վերջին սրուշումները նպատակ ունեն հատկապես բարելավել մեր երկրի գյուղատնտեսության վիճակը: Գյուղատնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք տնտեսարսւծությունն ու բանջարանոցային կուլտուրաներն են, հարկ է դրած բարձրության վրա չեն գտնվում: Խոկ գրանք կարևոր դեր ունեն բնակչության համար սրբենային առատության և թեթև արդյունաբերության համար հումք մատակարարելու գործում:

Ժողովրդական բանահյուսությունը անմիջականորեն արձագանքում է Պարտիայի և Կառավարության այս կարևոր միջոցառումներին: Պատահական չէ, որ վերջին շրջանում սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ հաճախ ենք հանդիպում մեր սոցիալիստական գյուղատնտեսության վերաբերող երգերին: Այս տեսակետից ուշադրավ է, օրինակ, գուսան Հավասու «Կոլխոզի չորան» երգը: Գուսանը գովերգում է «քաջ ու պատվական կոլխոզի չորանին», որը համայնական «հոտին հսկում է ողջ գիշերները»: «Կոլխոզի չորանը» արժանացել է հարգանքի ու պատվի, և ջերմ սիրով է շրջապատված:

Նոր լուսարացին, արևից առաջ
Հոգ փռել ես սարն ի վեր կանաչ,
Արոտիդ չորս դին բացվել է կակաչ
Քեզ սկես գուրեկան, կոլխոզի չորան:

Արևամուտին տուն արի, յար ջան
Կոլխոզի չորան, արևիդ դուրբան¹:

Մի այլ երգի մեջ ժողովուրդը երգում է. ցյանենք
ցորեն, ցյանենք դարի, ցյանենք բամբակ, բրինձ, հաճար,
ցյանենք առատ սոխ ու բանջար, որ մեր կյանքը ուրախ
անցնի: Երգվում է և շաքարի, ճակնդեղը և Եկարտոֆիլը
բերրի².

Որ աշնանը, թե ձմռանը
Ծայրը բանանք ծով երկերի³:

Ժողովրդական ստեղծագործության մեջ շատ պայծառ
անդրադարձում է ստացել մասնատների այդ բարձր տրա-
մադրությունն ու ոգևորությունը:

Ապահով ու ուրախ կյանքը, կարիքներից ու հոգսերից
զերծ աշխատավոր մարդու վիճակը միշտ իր հետ բերում
է հոգեկան բարձր տրամադրություն և ստեղծագործական
ներշնչումներ: Մարդկանց նյութական ու կուլտուրական
ապահով վիճակը, նրանց առատ ու երջանիկ կյանքի ան-
ընդհատ վերելքը տանում է դեպի կոմունիստական հա-
սարակարգ.

Կոմունիզմը առատությամբ,
Սեղանն առատ պիտի լինի,
Պիտի հոսի էն դետի սկես,
Առատ-առատ կաթն ու դինին³:

Սովետահայ ժողովրդական ստեղծագործության մեջ
էլ անդրադարձում է ստացել մեր ժողովրդի հաղթական
առաջընթացը դեպի կոմունիզմ:

* *
*

Սովետահայ ժողովրդական բանահյուսության ուսում-
նասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ,
որպես ստեղծագործական սրբոցես, իր բնույթով ու առանձ-

1 Գ ու ս ա ն չ ա վ ա ի, Բուրմունք, 1950, էջ 34:

2 Ժողովրդական ստեղծագործության տան ֆուլլորային բաժնի
նյութերից:

3 Նույն տեղում:

նահատկություններով այն չի նույնանում ոչ անցյալի քանահյուսությանը և ոչ էլ ընդհանրապես գեղարվեստական գրականությանը: Ժամանակակից ժողովրդական ստեղծագործությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրված աշխատավոր մասսաների գեղարվեստական ստեղծագործությունն է: Այդ ստեղծագործությունն ունի իր պատմությունը՝ զարգացման և անցման էտապները: Ուստի, սխալ կլինի, ինչպես նկատվեց վերջին շրջանում ծավալված բանահյուսության դիսկուսիայում, անտեսել ու ժխտել իրական երևույթն ու փաստերը:

Ժամանակակից ժողովրդական բանահյուսության ասպարեզում գնալով հետզհետե նվազում և անհետանում է բանահյուսական, կոլեկտիվ, բանավոր ստեղծագործության տրագիցիաները և տիրապետող է դառնում գրավոր գեղարվեստական գրականության ձևերը: Ժամանակակից ժողովրդական բանահյուսությունը հետզհետե ավելի է մոտենում գրականությանը: Եվ դա բնական է ու հասկանալի: Ժամանակի հետ փոխվում են հանգամանքները: Հրապարակից դուրս է գալիս ստեղծագործողների այն սերունդը, որը կրում և կենդանի էր պահում հին բանահյուսության տրագիցիաները, իսկ մյուս կողմից էլ գրականության, մամուլի ու ոսպորտի լայն մասսայականությունը նպաստում է հենց գրականության ձևերի արմատավորմանը:

Բանահյուսության տրագիցիաների հետզհետե անհետացման հետ մեկտեղ գնալով ավելի է լայնանում «պրոֆեսիոնալ գրող» հասկացողությունը: Ստեղծվում են մարդկանց ստեղծագործական ուժերի ծաղկումն ապահովող լայն հնարավորություններ ու պայմաններ: Այժմ, շատ հաճախ, կյանքի ամենատարբեր բնագավառներից գրականության մեջ մուտք են գործում հեղինակներ, որոնք շուտով «պրոֆեսիոնալ գրողի» համբավ են ձեռք բերում: Այդպես և արվեստի մյուս բնագավառներում: Դրանով գրականությունն ու արվեստը ավելի են ժողովրդային դառնում և մասսայականանում:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան	62
Սովեճահայ ժողովրդական բանահյուսության բնույթն ու նրա անցած հիմնական էտապները	5
Սովեճահայ ժողովրդական բանահյուսության գաղափարական բո- վանդակությունը	11
Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի սոցիալ-բա- ղաքական ազատագրութունը	43
Սոցիալիստական նոր կյանքը և աշխատանքի նոր ըմբռնումը	45
Սովետական հայրենասիրության կենարար ուժը և ՍՍԽՄ	80
Ժողովուրդների անխախտ բարեկամութունը	99
Հետպատերազմյան աշխատանքային վերելքը և խաղաղու- թյան համար մղվող պայքարը	120

ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՁԻ ՆԱԶԻՆՑԱՆ

«Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը»

Պատ. խմբագիր Գր. Գրիգորյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Ինճիկյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Աղիգրեկյան
Վերստույգող սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան

ԽՀԽ № 384 Հրատ. 1352 Պատվիր 392 Տիրաժ 2000 ՎՖ 00804

Հանձնված է արտադրության 8.X 1956 թ.: Ստորագրված է տպա-
գրության 28.I 1957 թ.: Հրատ. 5,7 մամուլ, տպագր. 8,25 մամուլ
թուղթ 84X108¹/₃₂: Գինը կազմել է 3 ռ. 80 կ.:

Հայկական ՍՍԽ ԳԼԽ Հրատարակչության տպարան, Երևան,
Արավիկյան, 124:

(384)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031150

W 10 3 11 30 4

A $\frac{\text{II}}{31150}$